

**Նվիրում եմ 2016 թ. ապրիլին Հայրենիքը ոսոխի
ներխուժումից պաշտպանած հաղթական հայորդիներին:**

ՀԱՎԵՐԺ ՓԱՌՔ ՆՐԱՆՑ..

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Արման Եղիազարյան

ԱՇՈՏ ԵՐԿԱԹ.

ԹԱԳԱՎՈՐ ՀԱՅՈՑ

Երևան
ԵՊՀ հրատարակչություն
2016

ՀՏԴ 94(479.25)
ՊՄԴ 63.3(5Հ)
Ե 381

*Հրատարակվել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի
գիտական խորհրդի երաշխավորությամբ*

*Շապիկին Աշոտ Երկաթի առջևից տարվող երկաթե խաչի լուսանկարն է:
Պահվում է Էջմիածնի Մայր տաճարի թանգարանում, իսկ կրկնօրինակը ՀՀ
բանակի 20-ամյակի կապակցությամբ 2012 թ. հանձնվել է ՀՀ պաշտպանու-
թյան նախարարությանը:*

Եղիազարյան Արման
Ե 381 ԱՇՈՏ ԵՐԿԱԹ. ԹԱԳԱՎՈՐ ՀԱՅՈՑ/Ա. Եղիազարյան:- Եր.,
ԵՊՀ հրատ., 2016, 120 էջ:

Մենագրությունը նվիրված է Հայոց պատմության մեծագույն գործիչներից մե-
կի՝ Աշոտ Երկաթի գահակալության շրջանի իրադարձություններին, որոնք հենքա-
յին նշանակություն ունեցան Բագրատունյաց թագավորության հետագա գոյության
համար:

Աշոտ Երկաթը մեր պատմության ամենաեռանդուն քաջամարտիկներից է, ով
իր գահակալության 15-ամյա պատմափուլում անընդհատ գտնվելով պատերազմ-
ների մեջ՝ երբեք չընկրկեց և մշտապես հավատարիմ մնաց իր նպատակին՝ Հայաս-
տանի ազատագրությանը, որն էլ ի վերջո իրագործեց:

Սույն աշխատությունը, որտեղ ամբողջական վերլուծության է ենթարկված
Աշոտ Երկաթի գործունեությունը, հասցեագրված է հայագետներին ու կովկասա-
գետներին, ինչպես նաև միջնադարով հետաքրքրվող ընթերցողներին:

ՀՏԴ 94(479.25)
ՊՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-5-8084-2058-8

© ԵՊՀ հրատ., 2016
© Եղիազարյան Ա., 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	5
ԱՇՈՏ ԵՐԿԱԹԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱՐԱԿԱԶՄԻԿ (ԷՊՈՒՆԱԼ) ԲՆՈՒՅԹԸ	5
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ. ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ	
1.1. Աշոտ Երկաթը՝ իշխանաց իշխան Հայոց	8
1.2. 909-914 թթ. պատմափուլը. Աշոտ Երկաթի գլխավորած ազատագրական պատերազմը և թագադրությունը	10
1.3. Հայաստանը և քրիստոնյա Այսրկովկասը 914-915 թվականներին. Աշոտ Երկաթի՝ Բյուզանդիա մեկնելու պատճառները	31
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ. ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒՄԸ	
2.1. Հայոց թագավորության համակարգային կերպավորվածան գործընթացը և երեք «Հայոց» թագավորների խնդիրը	48
2.2. Աշոտ Երկաթի վերադարձը Կոստանդնուպոլսից և ազատագրական նոր կռիվները	54
2.3. Աշոտ Երկաթի շահնշահության շրջանը	67
2.4. 927-929 թթ. պատմափուլը. Հայաստանի ազատագրումը	89
2.5. Աշոտ Երկաթի գահակալության շրջանի թվագրումը և գահաժառանգի խնդիրը	93
ՎԵՐՋԱԲԱՆ	98
Summary	100
Резюме	102
ՑԱՆԿԵՐ	104
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	111

ՆԱԽԱԲԱՆ

*«Զէ՛ն առէք, ժի՛ր կացէք ընկերք իմ սիրուն,
Հաւատարիմք ձեր թագւորին ձեր հողուն.
Ի հազարաց մէկիկ մնացած դուք իմ հետ,
Դուք շատ էք, ձեզ չբաւեն հազար թուր ու
նետ.*

*Թող աշխարհաց լուր լինի՝
Որ քանի ենք կենդանի
Հայաստան ո՛չ տի մեռնի»։...*

Ղ. Ալիշան, «Աշոտ Երկաթ ի ծովուն Սեւանա»¹:

ԱՇՈՏ ԵՐԿԱԹԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱՐԱԿԱԶՄԻԿ (ԷՊՈՒՆԱԼ) ԲՆՈՒՅԹԸ

Աշոտ Բ Երկաթ թագավորի գահակալության պատմափուլը (914-929) Հայոց պատմության մեջ ամենահետաքրքրական ու կարևոր, բայց միևնույն ժամանակ ամբողջությամբ և խորությամբ ուսումնասիրության չենթարկված ժամանակաշրջաններից է:

Հոր՝ Հայոց Սմբատ Ա թագավորի (891-914) սպանությունից հետո, երբ ողջ սրությամբ դրված էր Հայոց թագավորության լինել-չլինելու հարցը, ամեհի ֆիզիկական ուժի ու քաջության շնորհիվ («ըստ քաջապինդ արութեան») «Երկաթ» կոչված² երիտասարդ արքայազնն աներկյուղ իր վրա վերցրեց մի կողմից Բագրատունիների գլխավորությամբ Հայոց թագավորության պահպանման, իսկ մյուս կողմից՝ Հայաստանն ու Այսրկովկասի քրիստոնեական երկրը-

¹ Տե՛ս «Նուագբ Հ. Դեռնդեայ Մ. Ալիշան Մխիթարեան վարդապետի», հ. Գ, Վենետիկ, 1867, էջ 338:

² Տե՛ս **Ստեփանոս Տարաւնեցի Ասողիկ**, Պատմութիւն տիեզերական, «Մատենագիրք Հայոց», ԺԵ. հատոր, Ժ. դար, Պատմագրութիւն, գիրք Բ., Ե., 2011, էջ 748:

ներն ընդգրկող՝ Աշոտ Ա և Սմբատ Ա թագավորների տերության վերականգնման գործը: Աշոտ Երկաթը փաստորեն ստիպված եղավ ինչպես պահպանել Հայոց թագավորությունը, այնպես էլ վերականգնել Ատրպատականի տիրակալ Յուսուֆի սփռած ավերի ու ասպատակությունների պայմաններում Հայոց պետականության՝ կորսված կամ քայքայված այնպիսի կարևոր բաղադրիչները, ինչպիսիք էին պետական համակարգն ընդհանրապես և թագավորական իշխանությունը, պետական ինստիտուտները, կառավարման համակարգն ու բանակը՝ մասնավորապես: Ի վերջո հասնելով իր նպատակին՝ նա հռչակվեց որպես շահնշահ կամ արքայից արքա:

Աշոտ Երկաթի գահակալության դժվարին ու հանգուցային պատմափուլում իր լուծումը գտավ Հայոց թագավորության հետագա գոյության հիմնախնդիրը, և վերջինիս պատմության մեջ այնուհետև սկիզբ առավ համեմատաբար խաղաղ և կայուն զարգացման ժամանակաշրջան:

Նշված առումներով Աշոտ Երկաթի գործունեությունը դարակազմիկ նշանակություն ունի Հայոց պատմության մեջ:

Ձեռնարկելով Աշոտ Երկաթի դարաշրջանի պատմության ուսումնասիրությունը³, մեր առաջ խնդիր ենք դրել այն քննության առնելու երեք շրջափուլերով.

- ա) մինչև Աշոտ Երկաթի Կոստանդնուպոլիսից վերադառնալը,
- բ) մինչև շահնշահի հռչակվելը,
- գ) գահակալության վերջին՝ շահնշահության շրջանը:

Պատմագիտության մեջ քիչ թե շատ խորությամբ ուսումնասիրվել է Աշոտ Երկաթի՝ շահնշահության շրջանը, մինչդեռ առաջին երկու շրջափուլերում տեղի ունեցած դեպքերի մեծ մասն ըստ էության քննության չի առնված, թեև պարունակում է իրադարձություններ,

³ Աշոտ Երկաթի դարաշրջանի հիմնահարցերին նվիրված հոդվածներով հանդես ենք եկել նաև առանձին հրապարակումներով: Տե՛ս Ա. Եղիազարյան, Աշոտ Երկաթի դարաշրջանը: Մաս առաջին. Հայոց թագավորության պահպանման հիմնախնդիրը, «ՎԷՄ», 2014, № 4, էջ 40-69; Մաս երկրորդ. Հայոց թագավորության վերահաստատումը, «ՎԷՄ», 2015, № 1, էջ 36-60:

որոնք հենքային նշանակություն ունեցան Հայոց թագավորության հետագա գոյության համար:

Խնդրո առարկա դարաշրջանին կամ դրա առանձին ենթափուլերի զարգացումներին անդրադարձել են բազմաթիվ հետազոտողներ: Նրանցից յուրաքանչյուրն Աշոտ Երկաթի գործունեությունը քննության է առել ավելի կամ պակաս մանրամասնությամբ՝ այդպես էլ չլուսաբանելով դրա դարաշրջանային բնույթն ու հանգուցային նշանակությունը: Նրանց քննության վրա ազդեցություն են թողել Աշոտ Երկաթի օրոք տեղի ունեցած իրադարձությունների ինչպես ժամանակագրական (թագադրության տարեթիվը, Բյուզանդիա մեկնելու ժամանակը, շահնշահի հռչակվելը և այլն), այնպես էլ բովանդակային (ազատագրական պատերազմը, անիշխանության շրջանը, տարբեր հայ իշխանների թագադրությունները) ընկալումները:

Աշոտ Երկաթի դարաշրջանը, փաստորեն, ցայսօր ամբողջական և խորքային ուսումնասիրության կարոտ է մնում: Բացի այդ, անհրաժեշտ է հավուր պատշաճի գնահատել Հայոց թագավորության պահպանման, համակարգային առումով վերակառուցման և հետագա խաղաղ զարգացման գործում անխոնջ ու հերոսական գահակալի վճռորոշ դերը, որն ընդհանուր առմամբ գրեթե համարժեք է Բագրատունի առաջին թագավորի՝ Աշոտ Ա Մեծի (887-891) պետականակերտ գործունեությանը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

1.1. Աշոտ Երկաթը՝ իշխանաց իշխան Հայոց

Աշոտ Երկաթի բեմելը Հայաստանի քաղաքական ասպարեզ տեղի է ունեցել Հայոց իշխանաց իշխանի պաշտոնում: Վերջինս Բագրատունի առաջին չորս թագավորների օրոք (Աշոտ Ա, Սմբատ Ա, Աշոտ Բ, Աբաս՝ 887-953 թթ.) զբաղեցրել են հիմնականում արքայական տան այն անդամները, որոնց ժառանգաբար անցնելու էր Հայոց գահը⁴: Այդ պաշտոնի կարևորությունն ընդգծում է Հովհաննես Դրասխանակերտցին՝ ամեն անգամ հատուկ նշելով, թե ով էր Հայոց իշխանաց իշխանը⁵: Սմբատ Ա-ի օրոք, ելնելով իրավիճակից, այդ պաշտոնին նշանակվել են նաև Հայոց արքայի երկու եղբայրները: Սկզբում Հայոց իշխանաց իշխանն արքայի եղբայր Շապուհն էր, իսկ այնուհետև՝ Դավիթը⁶: Այդ ժամանակ Սմբատ Ա-ն իր որդի Աշոտին Հայոց իշխանաց իշխան նշանակել էր կարող, քանի որ Ատրպատականի Աֆշին ամիրի դեմ պատերազմներից մեկի ավարտին՝ 897 թ. ստիպված էր եղել նրան որպես պատանդ հանձնել ամիրին, և հետ էր ստացել միայն 901 թ.⁷: 899 թ., երբ Սմբատ Ա-ն թագադրեց Կղարջքի կուրապաղատ Ատրներսեհին որպես «Վրաց» թագավոր (899-923)⁸, Աֆշինն արշավեց Հայաստան, թերևս, 900 թվա-

⁴ Տե՛ս **Ա. Եղիազարյան**, Հայոց իշխանաց իշխանը Բագրատունի առաջին արքաների օրոք, «ՎԷՄ», 2014, № 1, էջ 62-74:

⁵ Տե՛ս «Յովհաննու Կաթողիկոսի Դրասխանակերտցույ Պատմություն Հայոց», «Մատենագիրք Հայոց», ԺԱ. հատոր, Ժ. դար, Պատմագրություն, Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 446, 478, 480, 544:

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 478-480:

⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 474-475: Տե՛ս **Ա. Եղիազարյան**, Հայոց իշխանաց իշխանը Բագրատունի առաջին արքաների օրոք, էջ 62-74:

⁸ Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 471: Տե՛ս նաև **Յո. Մարկուարտ**, Հայ Բագրատունեաց ճիւղագրութիւնը, գերմաներէնէ թարգմանեց Հ. Մ. Հապոզեան, Վիեննա, 1913, էջ 148: Տե՛ս նաև **Ն. Ադոնց**, Երկեր, հ. Ա, Ե.,

կանին⁹։ Նա որոշ ժամանակ ասպատակելով Հայաստանը և Վիրքը՝ հեռացավ Ատրպատական՝ Դվինում թողնելով մեծ ներքինապետին։ 901 թ. վերջինս հեռացավ Հայաստանից՝ Սմբատ Ա-ին հանձնելով նրա որդի Աշոտին և մյուս որդու՝ Մուշեղի կնոջը, որոնք ևս պատանդ էին։ Այդ պատճառով 901 թ. Աֆշինը կրկին արշավեց դեպի Հայաստան, սակայն ճանապարհին հանկարծամահ եղավ¹⁰։ Կարելի է եզրակացնել, որ Աշոտն առանց Ատրպատականի ամիրի համաձայնության էր վերադարձվել Սմբատ Ա-ին¹¹։ Ուստի Աֆշինի հաջորդը՝ Յուսուֆը, շարունակեց Աֆշինի սկսած պատերազմը Սմբատ Ա-ի դեմ։

903 թ. Ատրպատականի Յուսուֆ ամիրը կրկին պատերազմում է Սմբատ Ա-ի դեմ, սակայն շուտով որոշում է հաշտություն կնքել։ Երկու տիրակալները հաշտվում են, որից հետո Յուսուֆն արքայական պատիվներ է մատուցում Սմբատ Ա-ին, իսկ նրա երեց որդի Աշոտին կարգում Հայոց իշխանաց իշխան¹²՝ այդպիսով ճանաչելով գահաժառանգման նրա իրավունքը։

Փաստորեն, պատերազմից հետո հաշտության գնացած Սմբատ Ա-ն նպատակահարմար է համարել ստանալ Յուսուֆի համաձայնությունը, որպեսզի հետագայում գահաժառանգման հետ կապված խնդիր չառաջանա։

903 թ. տեղի ունեցած այս իրադարձությունը մեծ նշանակություն ունեցավ Աշոտ Երկաթի ճակատագրում։ Նա Հայոց իշխանաց իշխանի, այսինքն գահաժառանգի՝ Յուսուֆ ամիրի կողմից ճանաչված իր պաշտոնը խաղաղորեն վարեց մինչև 909 թ., երբ Յուսուֆը մեծ արշավանք ձեռնարկեց Հայաստան։

2006, էջ 501, Մ. Ճանաչեան, Դաւիթ կիւրապաղատ (պատմական ուսումնասիրություն), Վենետիկ, 1972, էջ 13-14։

⁹ Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 472։

¹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 473-475։

¹¹ Տե՛ս նույն տեղում, էջ 474։

¹² Տե՛ս նույն տեղում, էջ 478-480։

1.2. 909-914 թթ. պատմափուլը. Աշոտ Երկաթի գլխավորած ազատագրական պատերազմը և թագադրությունը

Ըստ Հովհաննես Դրասխանակերտցու՝ Յուսուֆը Հայաստան է արշավել հայոց 358 թվականին, այսինքն՝ 909 թ. ապրիլից մինչև 910 թ. ապրիլն ընկած ժամանակահատվածում¹³: Ըստ որում՝ արշավանքը սկսվել է հավանաբար 909 թ. գարնանը¹⁴, քանի որ պատմիչը հստակ ընդգծում է, որ դրա նախորդ տարին՝ 908 թ., Վասպուրականի Գագիկ Արծրունի իշխանը Յուսուֆի կողմից թագադրվել էր¹⁵: 909 թ. ամռանը Յուսուֆի զորքերը հետապնդում են Սմբատ Ա-ին, որը հեռացել էր Կղարջք, իսկ աշնանը հաստատվում Դվինում՝ ձմեռն այնտեղ անցկացնելու նպատակով¹⁶: Միևնույն ժամանակ Սմբատ Ա-ն վերադառնում է Երագգավորս¹⁷: Հաջորդ՝ 910 թ. գարնանը Յուսուֆը զորք ուղարկեց Սմբատ Ա-ի դեմ, որին միացան Գագիկ Արծրունու գնդերը: Սմբատ Ա-ի զորքը ղեկավարում էին որդիները՝ Հայոց իշխանաց իշխան Աշոտն ու Մուշեղը: Ճակատամարտը տեղի ունեցավ Նիգ գավառի Ձկնավաճառ կոչվող վայրում և ավարտվեց Սմբատ Ա-ի զորքի պարտությամբ: Աշոտը փրկվեց, իսկ Մուշեղը գերի ընկավ¹⁸: Այնուհետև, սկսվում են Յուսուֆի զորքերի ասպատակությունները: Սմբատն ի վերջո ամրանում է Կապույտ բերդում¹⁹, իսկ երկրում թագաժառանգ Աշոտի գլխավորությամբ ազատագրական պայքար է սկսվում: Դրանից դրդված՝

¹³ Տե՛ս նույն տեղում, էջ 489-490: Այս և հետագա տոմարական հաշվարկները կատարվել են ըստ Բ. Թումանյանի տոմարական հաշվումների աղյուսակների: Տե՛ս Բ. Թումանյան, Տոմարական հաշվումներ, «Տեղեկագիր (հաս. գիտ.)», 1964, № 5, էջ 55-60:

¹⁴ Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 489:

¹⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 487:

¹⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 490-491:

¹⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 492:

¹⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 492-493, Ասողիկ, էջ 745: Մուշեղը հետագայում դաժանաբար սպանվեց, իսկ նրա մարմինը ստացավ Սմբատ Ա-ի եղբայր Շապուհի որդի Աշոտ սպարապետը և ուղարկեց Բագարան՝ Բագրատունյաց հանգստարանում ամփոփելու: Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 497:

¹⁹ Տե՛ս Ասողիկ, էջ 745:

հավանորեն 913 թ. Յուսուֆը Գագիկ Արծրունուն ուղարկում է Վաղարշակերտ ամրոցը գրավելու: Գագիկը մեծ կորուստներ է տալիս և անհաջողության մատնվում²⁰: Որ այդ իրադարձությունը տեղի է ունեցել 913 թ., հիմնավորվում է հետևյալով: Չնայած հայտնի է, որ Գագիկ Արծրունին Յուսուֆի կողմից 908 թ. թագադրվել է²¹, Արծրունյաց տան Անանուն պատմիչի տեղեկությունները ցույց են տալիս, որ Սմբատ Ա-ի գերեվարությունից հետո 913 թ. Յուսուֆը կրկին թագադրել է Գագիկին: Անանունի շարադրանքում ամեն ինչ հստակ է: Այն բանից հետո, երբ Սմբատը 913 թ. սկզբին ամրացավ Կապույտ բերդում²² և շուտով հանձնվեց Յուսուֆին, վերջինս, տեսնելով, որ բացի Գագիկից որևէ այլ մեկը չի կարող իշխել Հայոց աշխարհում, «**թագաւորեցուցանէ զնա ամենայն Հայոց**»²³: Ըստ որում, խալիֆ Ջաֆֆար ալ-Մուկթադիրը (908-932) ևս շուտով Գագիկին ճանաչեց որպես թագավոր՝ թագ ուղարկելով նրան²⁴: Սմբատ Ա-ն գերված էր, Աշոտ Երկաթն ազատագրական պայքարի դրոշ էր բարձրացրել, ուստի էլ ո՞վ, եթե ոչ Գագիկ Արծրունին կարող էր փոխարինել Սմբատ Ա-ին, որին ժամանակին դավաճանել էր՝ հարելով Յուսուֆին: Վ. Վարդանյանն այս իրադարձությունը թվագրում է 914²⁵ կամ 915 թվականով²⁶: Սակայն, քանի որ Անանունն այդ իրադարձությունը նկարագրում է Սմբատ Ա-ի՝ գերեվարվելու շրջանում, կարելի է ենթադրել, որ իրականում Գագիկ Արծրունու երկրորդ թագադրությունը տեղի է ունեցել նույն 913 թ.: Պ. Հովհաննիսյանը կարծիք է հայտնում, որ Անանունի կողմից Սմբատ Ա-ի գերեվարության շրջա-

²⁰ Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 493-500:

²¹ Տե՛ս նույն տեղում, էջ 487-488:

²² Տե՛ս **Փ. Գրիգորյան**, Սմբատ Ա. Բագրատունի, Ե., 1946, էջ 36:

²³ **Թովմա Արծրունի եւ Անանուն**, Պատմութիւն տանն Արծրունեաց, «Մատենադիրք Հայոց», ԺԱ. հատոր, Ժ. դար, Պատմագրութիւն, Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 281-282:

²⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 282:

²⁵ Տե՛ս **Վ. Վարդանյան**, Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը 908-1021 թթ., Ե., 1969, էջ 92:

²⁶ Տե՛ս **Վ. Վարդանյան**, Վասպուրականի 910-930-ական թթ. պատմության շուրջը, «Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետ՝ «ՊԲՀ»), 1980, № 1, էջ 217:

նում Գագիկ Արծրունու՝ որպես Հայոց թագավոր թագադրության մասին տեղեկության մեջ կա երկու սխալ՝ ժամանակագրական ու բովանդակային: Գագիկ Արծրունին իրականում թագադրվել է 908 թ. և միայն որպես Վասպուրականի, այլ ոչ թե Հայոց թագավոր, քանի որ Անանունից բացի և ոչ մի պատմիչ Գագիկին Հայոց թագավոր չի կոչում²⁷: Սակայն այն, որ Գագիկը Սմբատ Ա-ի գերվելուց հետո երկրորդ անգամ էր թագադրվել, և այն էլ՝ որպես Հայոց թագավոր, հիմնավորվում է Հովհաննես Դրասխանակերտցու այն տեղեկությամբ, որ մի քանի տարի անց Փարկինի անունով մի արաբ ոստիկան խալիֆից թագ է բերում Գագիկին և «**երեքլին զնա պսակեալ ի վերայ Հայաստանեայցս**»²⁸, ասել է՝ երրորդ անգամ նրան կարգելով Հայոց թագավոր: Այսինքն՝ Անանունից բացի Հովհաննես Դրասխանակերտցին ևս հիշատակում է Գագիկի՝ որպես Հայոց թագավոր թագադրվելու մասին:

Ամենայն հավանականությամբ, Յուսուֆը Գագիկին երկրորդ անգամ թագադրել է՝ նրան հակադրելու համար ազատագրական պայքար սկսած Աշոտ Երկաթին, ինչպես որոշ ժամանակ անց թագադրեց և նրան հակադրեց Սմբատ Ա-ի եղբայր Շապուհի որդի Հայոց սպարապետ Աշոտին²⁹: Յուսուֆի կողմից Գագիկին երկրորդ անգամ թագադրելը պետք է բացատրել նաև այն իրողությամբ, որ, հավանաբար, առաջին անգամ Գագիկը թագադրվել է որպես Վասպուրականի, իսկ երկրորդ անգամ՝ որպես Հայոց թագավոր, ինչպես փաստում է Անանունը: Այլապես թագադրությունը զուրկ կլիներ նպատակից՝ վերածվելով պարզ կրկնության: Վ. Վարդանյանը նկատել է, որ Գագիկի մահը թվագրելով 943 թ. և նրան վերագրելով 29 տարվա թագավորություն³⁰, Ասողիկը նրա գահակալությունը, փաստորեն, հաշվում է 914 թվականից: Ուսումնասիրողը կարծում է, թե պատմիչի հաշվարկը կապված է այն իրողության հետ, որ 914 թ. Յուսուֆը հետ շարտվեց Վասպուրականից, և Գագիկը թոթափեց

²⁷ Տե՛ս Պ. Հովհաննիսյան, Երկու ուղղություն X դարի հայ պատմագրության մեջ, «Հայագիտության հարցեր», 2014, № 2, էջ 115-117:

²⁸ Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 545-546:

²⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 538:

³⁰ Տե՛ս Ասողիկ, էջ 826:

նրանից ունեցած կախվածությունը³¹: Մեր համոզմամբ, սակայն, Ասողիկի վրա ազդեցություն է թողել այն, որ Գագիկն իր երկրորդ թագադրության ժամանակ հռչակվել էր որպես Հայոց թագավոր և այդուհետ թագավորել 29 տարի՝ մինչև 943 թ.: Այդ իսկ պատճառով, ինչպես դիպուկ նկատել է Պ. Հովհաննիսյանը, Արծրունյաց տան Անանուն պատմիչն Աշոտ Երկաթին չի հիշատակում, նրա համար այդպիսի թագավոր չի եղել, քանի որ Հայոց թագավոր էր հռչակվել Գագիկ Արծրունին³²: Ի դեպ, չնայած, որ ամենայն հավանականությամբ, Գագիկը երկրորդ անգամ թագադրվել է 913 թ.՝ Սմբատ Ա-ի կենդանության օրոք, Ասողիկը նրա թագավորությունը հաշվարկում է 914 թվականից, երբ սպանվեց օրինական Հայոց թագավորը՝ Սմբատ Ա-ն:

Սակայն Գագիկը, թեև Հայոց թագավորի թագը Յուսուֆից ընդունեց, սակայն չշտապեց Յուսուֆի գործիքը դառնալ: Ավելին, հաշվի առնելով այն, որ, ըստ Հովհաննես Դրասխանակերտցու՝ Աշոտ Երկաթի զորքերից պարտություն կրած Յուսուֆը շուտով զենքն ուղղեց Գագիկ Արծրունու դեմ, կարելի է համոզված ասել, որ վերջինս չէր արդարացրել նրա հույսերը: Դեռևս 913 թ.՝ Վաղարշակերտի անհաջող պաշարումից հետո Գագիկը ծածուկ լուր էր ուղարկել Սմբատ Ա-ին՝ միաբանվելու կոչ անելով³³: Այդ իսկ պատճառով Յուսուֆը շուտով հալածանքներ սկսեց Գագիկի դեմ:

Ասողիկի տեղեկություններով՝ Գագիկի զորքի հարձակումը Վաղարշակերտի վրա տեղի է ունեցել հայոց 363 թ. (914-915), իսկ Սմբատ Ա-ի մահը՝ 364 թ. (915-916)³⁴: Ակնհայտ է, որ պատմիչի նշած թվականներն իրականությանը չեն համապատասխանում, սակայն, կարևոր է, որ պատմիչն այդ երկու իրադարձությունները դնում է իրար հաջորդող թվականների, այսինքն՝ Վաղարշակերտի

³¹ Տե՛ս Վ. Վարդանյան, Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը, էջ 916:

³² Տե՛ս Պ. Հովհաննիսյան, Երկու ուղղություն X դարի հայ պատմագրության մեջ, էջ 117:

³³ Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 500-501:

³⁴ Տե՛ս Ասողիկ, էջ 745:

դեպքերից մինչև Սմբատ Ա-ի մահը կազմել է մեկ տարուց ոչ ավելի, քանի որ Հայոց թագավորի գերությունը տևել է գրեթե մեկ տարի³⁵:

Հստակեցնելով, որ Վաղարշակերտի պաշարումը տեղի է ունեցել, ամենայն հավանականությամբ, 913 թ., կարող ենք նկատել, որ այդ նույն թվականից Աշոտ Երկաթի գլխավորած ազատագրական պայքարը ճնշելու նպատակով Յուսուֆը փորձել է օգտագործել իր իսկ կողմից Հայոց թագավոր հռչակված Գագիկին:

Ըստ Հովհաննես Դրասխանակերտցու՝ Բյուզանդիայի կայսր Բարսեղը, իսկ իրականում՝ Լևոն Զ-ն (886-912)³⁶ ցանկացավ օգնության գալ Սմբատին, բայց վախճանվեց, իսկ նրան փոխարինած Ալեքսանդրը (912-913), զբաղված ծագած խռովությունների ճնշումով, Սմբատին օգնելու մասին մտածել չէր կարող³⁷: Նույն ժամանակ Կապույտ բերդում ամրացած Սմբատին Յուսուֆը 913 թ. խաբեությամբ գերեց և շուրջ մեկ տարի կտտանքների ենթարկեց³⁸: Այդ ընթացքում, Սմբատին իր հետ վերցնելով, Յուսուֆը փորձ կատարեց գրավելու Երնջակ ամրոցը, բայց անհաջողության մատնվեց և հրամայեց Հայոց արքային տանջամահ անել³⁹: Քանի որ Հովհաննես Դրասխանակերտցին հստակորեն նշում է, որ Սմբատ Ա-ին օգնել չկարողացան Լևոն Զ և Ալեքսանդր կայսրերը⁴⁰, և Սմբատ Ա-ն գերվեց ու շուրջ մեկ տարի անց սպանվեց, կարող ենք նշել, որ Սմբատը գերվել է 913 թ.: Ավելին, Բյուզանդիայի կայսրը Կոստանդնուպոլսի

³⁵ Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 502-504, «Համառօտ պատմություն Կրաց ընծայեալ Զուանշէրի պատմչի», Վենետիկ, 1884, էջ 107:

³⁶ Հ. Բարթիկյանը կարծում է, որ Հովհաննես Դրասխանակերտցին «բասիլևս»՝ «թագավոր» բառը սխալմամբ Բարսեղ ձևով է ներկայացրել: Տե՛ս Հ. Բարթիկյան, Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկողայոս Միստիկոսի 101-րդ և 139-րդ թղթերը՝ ուղղված Հովհաննես Դրասխանակերտցուն և Սմբատ Ա թագավորին. «ՊԲՀ», 1966, № 4, էջ 251, ծանոթ. 3:

³⁷ Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 502: Ն. Ադոնցը կարծում է, որ իրականում Սմբատը Բյուզանդիայից օգնություն չի խնդրել: Տե՛ս Ն. Ադոնց, Երկեր. հ. Ե, Ե., 2012, էջ 192:

³⁸ Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 502-504:

³⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 504-506:

⁴⁰ Տե՛ս **Թեոփանեսի Շարունակող**. Օտար Աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 15, Բյուզանդական աղբյուրներ, Ե, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հ. Բարթիկյանի, Ե., 1990, էջ 223-224:

Նիկողայոս Միստիկոս պատրիարքի (901-907, 912-925) միջոցով գրել է Սմբատ Ա-ին⁴¹: Սակայն նամակը, որն ուղարկվել է ըստ Հ. Բարթիկյանի ճշգրտման՝ 913 թ.⁴², խիստ ուշացած է եղել, քանի որ Սմբատ Ա-ն հայտնվել էր գերության մեջ:

Արդ՝ խիստ կարևորվում է Սմբատ Ա-ի մահվան թվականի ճշգրտումը, քանի որ դրա հետ կապված հաշվարկները նպաստում են ինչպես նրա կենդանության օրոք Աշոտ Երկաթի վարած ազատագրական կռիվների թվագրմանը, այնպես էլ նրա թագադրության թվականի հստակեցմանը:

Սմբատ Ա-ի մահն ընդունված է թվագրել 913⁴³ կամ 914⁴⁴ թվականներով:

Այդ թվականի ճշգրտման տեսակետից խիստ արժեքավոր են «Յայսմաւորք»-ի տեղեկությունները: Վերջինիս՝ Տեր Իսրայելի խըմբագրության մեջ Սմբատ Ա-ի մահը նշված է ահեկի (ահեկան) ամսվա 9-ին. «Յայսմ աւուր վկայութիւն սրբոյն Սըմբատայ թագաւորի և

⁴¹ Ավելի ուշ, նույն Նիկողայոս Միստիկոսը նամակագրություն սկսեց հայոց կաթողիկոսի հետ Աշոտ Երկաթի շրջանում: Տե՛ս Հ. Բարթիկյան, Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկողայոս Միստիկոսի 101-րդ և 139-րդ թղթերը..., էջ 252:

⁴² Տե՛ս նույն տեղում, էջ 251-256:

⁴³ Տե՛ս Ն. Ադոնց, Երկեր, հ. Ե., էջ 190-191, **А. Тер-Гевондян**, Армения и Арабский халифат, Е., 1977, с. 240. Նախկինում մենք ևս Սմբատ Ա-ի մահը թվագրել ենք 913 թ. (տե՛ս Ա. Եղիազարյան, Հայոց Սմբատ Ա թագավորի գահակալության շրջանի ժամանակագրությունը, «Էջմիածին», 2014, մայիս, էջ 51)՝ այն տրամաբանությամբ, որ 891 թ. Հայոց գահին բազմած Սմբատը, ըստ Հովհաննես Դրասխանակերտցու՝ թագավորել է 22 տարի (տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 506) և դրանից հետո գերության մեջ անցկացրել գրեթե 1 տարի: Տե՛ս նույն տեղում, էջ 502-504, **Զվանչեր**, էջ 107:

⁴⁴ Տե՛ս Մ. Զամչեանց, Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ 1784, հ. Բ., Վենետիկ, 1785, էջ 707-708, 756-757, Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ., Բ. մասի նյութեր, Երևան, 1960, էջ 40-43, Փ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 43, Հ. Հարությունյան, Հայաստանը IX-XI դարերում, Ե., 1959, էջ 146 և այլն:

որոց ընդ նմա»⁴⁵: «Յայսմաւորք»-ի՝ Անանուն հեղինակի խմբագրության մեջ Սմբատ Ա-ի մահը նշված է ահեկանի 10-ին⁴⁶: Հայոց 361 թ. (912-913) ահեկանի 9-ը համապատասխանում է 912 թ. դեկտեմբերի 16-ին, ահեկանի 10-ը՝ դեկտեմբերի 17-ին, իսկ 362 թ. (913-914) ահեկանի 9-ը և 10-ը՝ համապատասխանաբար 913 թ. դեկտեմբերի 16-ին և 17-ին: «Յայսմաւորք»-ի՝ Կիրակոս Արևելցու խմբագրության մեջ և Գրիգոր Անավարզեցու զույգ խմբագրություններում Սմբատ Ա-ի մահը թվագրված է մարերի 1-ով: Առաջինում սկզբում նշված է, որ «Յայսմ աւուր յիշատակ է Սմբատա Հայոց թագաւորին»⁴⁷, իսկ այնուհետև՝ «Այսպէս նահատակեցաւ սուրբ թագաւորն Սմբատ մարերի Ա»⁴⁸: Գրիգոր Անավարզեցու առաջին խմբագրության մեջ Սմբատ Ա-ի մահվան օրվա հիշատակությունը սկսվում է «Եւ յայսմ աւուր ի Հայք վկայութիւն Սմբատա Հայոց թագաւորին»⁴⁹ առաջաբանով և ավարտվում «Այսպէս նահատակեցաւ սուրբ թագաւորն Սմբատ մարերի Ա»⁵⁰ վերջաբանով: Հեղինակի երկրորդ խմբագրությունը սկսվում և ավարտվում է համապատասխանաբար «Ի սմին աւուր նահատակութիւն սրբոյն Սմբատայ Հայոց թագաւորի»⁵¹ և «Այսպէս նահատակեցաւ սուրբ թագաւորն Սմբատ մարերի Ա»⁵² տողերով: Հայոց 361 թ. պարագայում մարերի 1-ը համապատասխանում է 913 թ. հունվարի 7-ին, իսկ 362 թ. դեպքում՝

⁴⁵ «Համաբարբառ յայսմաւորք», Դ, Ապրիլ (նախածերենցյան 6 խմբագրությունների), Ս. Էջմիածին, 2009, էջ 158, 168: Տե՛ս նաև «Գիրք որ կոչի Այսմաւորք», Կ. Պոլիս, 1730, էջ 514:

⁴⁶ Տե՛ս «Համաբարբառ յայսմաւորք», Դ, Ապրիլ, էջ 168:

⁴⁷ «Համաբարբառ յայսմաւորք», Ե, Մայիս (նախածերենցյան 6 խմբագրությունների), Ս. Էջմիածին, 2010, էջ 95:

⁴⁸ Նույն տեղում, էջ 97:

⁴⁹ Նույն տեղում, էջ 95:

⁵⁰ Նույն տեղում, էջ 97: Տե՛ս նաև «Յայսմաւորք», ըստ կարգի ընտրելագոյն օրինակի Յայսմաւորաց Տէր Իսրայէլի, ի Կոստանդնուպօլիս, 1834, էջ 206-207: «Յայսմաւորք»-ի՝ 1834 թ. հրատարակված ծեռագիրը սխալմամբ է վերագրվել Տէր Իսրայէլին: Այն իրականում Գրիգոր Անավարզեցու խմբագրությունն է: Տե՛ս Մ. Ավդալբեցյան, «Յայսմաւորք» ժողովածուները և նրանց պատմագրական արժեքը, Ե., 1982, էջ 66-67:

⁵¹ Համաբարբառ յայսմաւորք, Ե, մայիս, էջ 95:

⁵² Նույն տեղում, էջ 97:

914 թ. հունվարի 7-ին: Հայոց 361 թ. Սմբատ Ա-ի մահվան վերաբերյալ որևէ աղբյուրում տեղեկություն չի պահպանվել, ավելին՝ 912-913 թթ. սկզբին Սմբատ Ա-ի մահվան հավանականությունը հակասության մեջ է մտնում նրա գահակալության շրջանում տեղի ունեցած դեպքերի վերոհիշյալ ժամանակագրության հետ: Մինչդեռ հայոց 362 թ. Սմբատ Ա-ի մահվան վերաբերյալ տեղեկություն են պահպանել Սամվել Անեցին, Ստեփաննոս Օրբելյանը և Մխիթար Այրիվանեցին⁵³: Բացի այդ, Սմբատ Ա-ի մահը 913 թ. վերջին կամ 914 թ. սկզբին ամբողջությամբ տեղավորվում է ժամանակաշրջանի դեպքերի տրամաբանության մեջ: Իսկ դրանից ավելի ուշ նրա մահը ոչ մի կերպ տեղադրել չի կարելի:

«Յայսմաւորք»-ում Սմբատ Ա-ի մահվան օրվա հիշատակություններին անդրադարձել են Մ. Չամչյանցը և Մ. Օրմանյանը:

Մ. Չամչյանցը Սմբատ Ա-ի մահը դնում է հայոց 363 թ. կամ 914 թ. ապրիլի 16-ին⁵⁴, որը «Յայսմաւորք»-ի որոշ խմբագրություններում համապատասխանեցված է որպես Սմբատ Ա-ի հիշատակի օր ներկայացված ահեկանի 9-ին⁵⁵:

Մ. Օրմանյանը, թեև հստակորեն չի նշում իր նախապատվությունն այդ ամսաթվերից որևէ մեկին, սակայն կարծես թե նրա համար առավել ընդունելի է 913 թ. վերջին Սմբատ Ա-ի սպանվելու վերաբերյալ տեղեկությունը: Նա միայն այն ճշգրտումն է կատարում, որ չնայած «Յայսմաւորք»-ում ահեկանի 9-ն անշարժ տոմարով համապատասխանեցված է ապրիլի 16-ին, իսկ մարտի 1-ը՝ մայիսի 8-ին⁵⁶, համապատասխանեցումները հարկ է կատարել շարժական

⁵³ Տե՛ս Սամուէլ Անեցի եւ շարունակողներ, ժամանակագրութիւն (Աղամից մինչեւ 1776 թ.), աշխատասիրությամբ Կ. Մաթևոսյանի, Ե., 2014, էջ 172, «Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1911, էջ 191, «Մխիթարայ Այրիվանեցոյ Պատմութիւն ժամանակագրական», ի լոյս ընծայեաց Բ. Պ., Ս. Պետերբուրգ, 1867, էջ 71:

⁵⁴ Տե՛ս Մ. Չամչյանց, նշվ. աշխ., էջ 758:

⁵⁵ Տե՛ս «Համաբարբառ յայսմաւորք», Դ, Ապրիլ, էջ 158, 168:

⁵⁶ Տե՛ս «Համաբարբառ յայսմաւորք», Ե, Մայիս, էջ 95-97:

տոմարով: Այդ պարագայում առաջին ամսաթիվը նույնանում է դեկտեմբերի 16-ին, իսկ երկրորդը՝ հունվարի 7-ին⁵⁷:

Խնդրի հստակեցմանը նպաստում է Յուսուֆի զորքերի կողմից նահատակվածների մասին Վարդան վարդապետի հայտնած կարևոր տեղեկությունը: Պատմիչը գրում է. «կատարեցան ի Քրիստոս փառաւոր եւ մեծ իշխանքն Դաւիթ եւ Գուրգէն ի տանէն Գնունեաց ի Դուին քաղաքի, յանօրինէն Յուսփայ, վկայական արեամբ պսակեալ. որոց պատուի օր կատարմանն ի մարերի ամսեան քսան. եւ սուրբն Սահակ եպիսկոպոս երկերիւր ոգւով եւ եօթն եկեղեցականօք կատարեցաւ ի Բիւրական, յահկի ի տասն. եւ երկու Կիրակոսքն ի նոյն ամսեան յեօթնետասն. որոց **տօն գերապայծառ կարգեաց սուրբ պատրիարզն Յովհաննէս, որ ետես աջօք զխաւարաբեր ժամանակն, եւ գրեաց ի իշատակ ապագայից դարուց. եւ տօն սուրբ թագաւորին Սմբատայ**»⁵⁸:

Փաստորեն, Սմբատ Ա-ի հիշատակի օրը հաստատել է նրա ժամանակակից Հովհաննէս Դրասխանակերտցի կաթողիկոսը, ուստի ճիշտ է Մ. Օրմանյանը, երբ կարծիք է հայտնում, որ «Յայսմաւորք»-ում նշված ամսաթվերի համապատասխանեցումներն անհրաժեշտ է կատարել շարժական տոմարով:

Վարդան վարդապետի հիշատակած ամսաթվերն ընդհանուր առմամբ համընկնում են «Յայսմաւորք»-ի՝ Կիրակոս Արևելցու և Գրիգոր Անավարդեցու խմբագրության մեջ նշված ամսաթվերին⁵⁹, ինչը չի կարելի ասել Տեր Իսրայելի խմբագրության տեղեկությունների մասին⁶⁰, իսկ Սմբատ Ա-ի մահվան օրն էլ նշված է ահեկանին տեղի ունեցածից առանձին: Ամենայն հավանականությամբ, պատ-

⁵⁷ Տե՛ս Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Ա, Կոստանդնուպոլիս, 1912, էջ 713:

⁵⁸ «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 87:

⁵⁹ Տե՛ս «Համաբարբառ յայսմաւորք», Ե, Մայիս, էջ 265-267, նույնի՝ Դ, Ապրիլ, էջ 180-183, 237: Տե՛ս նաև «Յայսմաւորք», ըստ կարգի ընտրելագոյն օրինակի..., էջ 173-175, 181-182, 232-233:

⁶⁰ Տե՛ս «Համաբարբառ յայսմաւորք», Դ, Ապրիլ, էջ 180-183, 237, նույնի՝ Ե, Մայիս, էջ 265-267:

Ճառն այն է, որ Սմբատ Ա-ն այդ ամսին չէր սպանվել: Այլապես, երբ ահեկանի դեպքերը նկարագրվում են միասին՝ օգտագործելով «**ի նոյն ամսեան**» արտահայտությունը, տրամաբանությունից զուրկ է Սմբատ Ա-ի հիշատակի օրն առանձին նշելը, եթե այն ևս տեղի է ունեցել միևնույն ամսին: Առավել ևս, որ Տեր Իսրայելի խմբագրության մեջ «**վկայութիւն սրբոյն Սըմբատայ թագաւորի և որոց ընդ նմա**» արտահայտությունից և Սահակ եպիսկոպոսի ու Կիրակոսների սպանությունների հիշատակությունից⁶¹ երևում է, որ խմբագիրը հակված է այդ դեպքերը տեսնելու ոչ միայն նույն ամսին, այլ նաև նույն թվականին: Մինչդեռ Հովհաննես Դրասխանակերտցին տեղեկացնում է, որ Սահակ եպիսկոպոսի և յուրայինների վախճանը տեղի է ունեցել հայոց 372 թ. (923-924) ահեկանի 10-ին, որը համապատասխանում է 923 թ. դեկտեմբերի 15-ին, իսկ Կիրակոսների սպանությունը՝ նույն թվականի ահեկանի 17-ին⁶², համապատասխան 923 թ. դեկտեմբերի 22-ին:

Վարդան վարդապետի հիշատակության մեջ, որը համապատասխանում է Հովհաննես Դրասխանակերտցու տվյալներին, առկա է մեկ անհամապատասխանություն «Յայսմաւորք»-ի տեղեկություններին: Նրա նշած՝ Սահակ եպիսկոպոսի և յուրայինների՝ «յաիկի ի տասն»-ի փոխարեն «Յայսմաւորք»-ի նշված խմբագրության մեջ տրված է «աիկի ԺԲ (12)»⁶³: Սակայն այստեղ ակնհայտ է «Յայսմաւորք»-ի խմբագրի սխալը:

Ինչ վերաբերում է Դավիթ և Գուրգեն Գնունիներին, ապա նրանց սպանությունը Հովհաննես Դրասխանակերտցին դնում է մարերի 20-ին՝ Սմբատ Ա-ի մահից և Աշոտ Երկաթի թագադրությունից անմիջապես հետո⁶⁴: Եթե նշված իրադարձությունները թվագրենք Սմբատ Ա-ի մահվան ամենահավանական՝ հայոց 362 (913-914) թվականով, ապա մարերի 20-ը կհամապատասխանի 914 թ. հունվարի 26-ին:

⁶¹ Տե՛ս «Համաբարբառ յայսմաւորք», Դ, Ապրիլ, էջ 170:

⁶² Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 574-576:

⁶³ Տե՛ս «Համաբարբառ յայսմաւորք», Դ, Ապրիլ, էջ 180-183:

⁶⁴ Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 506-515:

Ըստ Հովհաննես Դրասխանակերտցու՝ Սմբատ Ա-ն սպանվել է այն բանից հետո, երբ Յուսուֆը նրան իր հետ վերցրած՝ Դվինից մեկնել է Երնջակ ամրոցը գրավելու։ Ամրոցը գրավել չկարողանալով՝ նա հրամայել է տանջամահ անել Հայոց թագավորին, իսկ մարմինը խաչել Դվինում⁶⁵։ Ստեփաննոս Օրբելյանն այս պատմությունը կրկնում է՝ միայն հավելելով, որ, երբ մարտնչող Երնջակի պարիսպների տակ Յուսուֆը Սմբատից պահանջեց ամրոցի պաշտպաններին հրամայել՝ իրեն հանձնելու ամրոցը, Սմբատը նրա պահանջը չկատարեց և դաժանաբար սպանվեց։ Նրա մարմինը տարան Դվին և խաչեցին⁶⁶։ Այսինքն՝ Սմբատ Ա-ն հավանաբար սպանվել է Երնջակ ամրոցի մոտակայքում։

Այսպիսով՝ առավել հավանական է թվում այն, որ Սմբատ Ա-ի մահը դնելով ահեկանի 9-ին կամ 10-ին՝ «Յայսմաուրք»-ի խմբագիրները փորձել են Սմբատ Ա-ի մահը տեսնել ահեկան ամսվա դժբախտ իրադարձությունների շարքում⁶⁷, որոնք իրականում տեղի են ունեցել տարիներ հետո։

Վերոհիշյալը խոսում է այն բանի օգտին, որ Սմբատ Ա-ն սպանվել է մինչև հայոց 362 թ. մարտի 20-ը, այսինքն՝ մինչև 914 թ. հունվարի 26-ն ընկած հատվածում։ Ավելի հավանական է թվում այն, որ Սմբատ Ա-ն սպանվել է 914 թ. հունվարի 7-ին, ինչպես հաղորդում են «Յայսմաուրք»-ի նշված խմբագրությունները։ Դա հիմնավորվում է նաև այն իրողությամբ, որ Սմբատ Ա-ին թագավորության 24 տարիներ վերագրող հեղինակների⁶⁸ հաշվարկները, ճշգրիտ լինե-

⁶⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 504-506։

⁶⁶ Տե՛ս **Ստեփաննոս Օրբելյան**, էջ 190-191։ Ասողիկը նշում է, որ Սմբատ Ա-ն սպանվել է Դվինում այն բանից հետո, երբ Յուսուֆի զորքերը գրավել են Երնջակը։ Տե՛ս **Ասողիկ**, էջ 745։ Մինչդեռ ըստ Հովհաննես Դրասխանակերտցու և Ստեփաննոս Օրբելյանի՝ Երնջակը գրավվել է Սմբատի սպանությունից հետո։ Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 506-507, **Ստեփաննոս Օրբելյան**, էջ 191-192։

⁶⁷ Տե՛ս «Համաբարբառ յայսմաուրք», Դ, Ապրիլ, էջ 170։

⁶⁸ Տե՛ս **Ասողիկ**, էջ 741, **Վարդան վարդապետ**, էջ 86, **Կիրակոս Գանձակեցի**, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Ե., 1961, էջ 45, **Սամվել Անեցի**, էջ 168, **Մխիթար Այրիվանեցի**, էջ 19 և այլն։

լու համար, պետք է ընդգրկեին հայոց 340 թվականի⁶⁹ սկզբից (891-892) մինչև 362 (913-914) թվականի ավարտն ընկած ժամանակահատվածը, որտեղ 362 թվականը 23/24-րդ տարին էր: Սմբատ Ա-ի մահվան՝ 913 թ. ընթացքում տեղի ունենալու պարագայում նրա թագավորության տարիները ոչ մի կերպ 24 տարի հաշվարկել հնարավոր չէ: Նույն պատճառով, ինչպես տեսանք, Ասողիկը Գագիկ Արծրունու թագավորությունը հաշվարկում է 914 թվականից, երբ, փաստորեն, սպանվել է Սմբատ Ա-ն: Նշվածը հիմնավորվում է այն իրողությամբ, որ Սմբատ Ա-ի սպանությանը հաջորդած իրադարձությունները Մովսես Դասխուրանցին հիշատակում է հայոց 363 թ. (914-915)⁷⁰, որից կարելի է բխեցնել, որ Հայոց թագավորի սպանությունն էլ տեղի է ունեցել դրանից անմիջապես առաջ՝ հայոց 362 թ. (913-914) վերջին:

«Յայսմաւուրք»-ի տեղեկությունների հիման վրա հստակեցնելով, որ Սմբատ Ա-ն սպանվել է 914 թ. սկզբին, կարելի է արձանագրել, որ նրա գերության գրեթե մեկամյա շրջանն ընդգրկել է 913 թվականը: Այսպիսով՝ բացատրություն է ստանում ավելի ուշ շրջանի պատմիչների կողմից Սմբատ Ա-ին 24 տարվա գահակալություն վերագրելու խնդիրը: Հովհաննես Դրասխանակերտցին՝ որպես ժամանակակից, փաստորեն, ավելի հստակ է ներկայացնում Սմբատ Ա-ի թագավորության տարիների քանակը՝ այն 22 տարիները, երբ նա իրապես թագավորել է: Գահակալության 23-րդ տարին նա գտնվել է գերության մեջ և 24-րդ տարվա հենց սկզբին՝ 914 թ. հունվարի 7-ին սպանվել:

Այժմ, երբ արդեն իրականացված են ժամանակագրական անհրաժեշտ ճշգրտումները, անդրադառնանք Աշոտ Երկաթի կողմից Հայաստանի և Այսրկովկասի քաղաքական թատերաբեմում զլխավոր դերը ստանձնելուն և Կղարջքի (Վրաց կոչված) թագավոր Ատրներսեհի կողմից նրա թագադրությանը:

⁶⁹ Սմբատ Ա-ի գահ բարձրանալու այս թվականն է նշում Ասողիկը: Տե՛ս **Ասողիկ**, էջ 741:

⁷⁰ Տե՛ս **Մովսես Կաղանկատուացի**, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը՝ Վ. Առաքելյանի, Ե., 1963, էջ 337:

Ըստ Հովհաննես Դրասխանակերտցու՝ Աշոտ Երկաթն ազատագրական պատերազմը սկսել է դեռ այն ժամանակ, երբ կենդանի էր հայրը⁷¹: Արքայազնը, ամենայն հավանականությամբ, կանխագացել էր Հայոց թագավորի մոտալուտ սպանությունը, ուստի՝ այլևս չէր հապաղել: Խնդիրն այն է, որ Յուսուֆն իր արշավանքների ընթացքում կարողացել էր գրեթե ամբողջությամբ փլուզել Հայոց թագավորության պետական համակարգը, որի հետևանքով հարցականի տակ էր դրվել նրա գոյությունն ընդհանրապես: Ուստի սպասել չէր կարելի, այլապես կորուստները կդառնային անվերականգնելի:

Ստեղծված իրավիճակում հաղթանակի հասնելու համար անհրաժեշտ էր այնպիսի առաջնորդ, ով ունակ կլիներ միավորելու երկրի ցրված ուժերը, վերականգնելու նրանց բարոյահոգեբանական վիճակը և առաջնորդելու կենաց պատերազմի: Ահա՛ հենց այդ պատմական անհրաժեշտությունն էր, որ «ծնեց» Աշոտ Երկաթ առաջնորդին, տիրակալ, ով օժտված էր վճռականությամբ և եռանդով, քաջությամբ և զորավարի տաղանդով, ինչպես նաև ուներ առաջնիչ այնպիսի մի ազդեցիկ դրդապատճառ, ինչպիսին վրեժխնդրությունն էր հոր՝ Հայոց արքա Սմբատ Ա-ի սպանության համար:

Աշոտ Երկաթի մուտքը Հայաստանում տեղի ունեցող դեպքերի հորձանուտ շռնալից էր: Նրա ղեկավարած առաջին ազատագրական մարտերն ապշեցուցիչ արագությամբ հետևում էին մեկը մյուսին և հաղթական էին: Հովհաննես Դրասխանակերտցին պատմում է, որ «Սա (իմա՛ Աշոտ Երկաթը - Ա. Ե.) նախ քան զկատարումն վկայաւրէն վախճանի հաւր իւրոյ գրեթէ իբրեւ զարծուի սաւառնաթել սլացեալ ընդ աւդս, այնպէս սրավառեալ խոյանայր զկնի գիշատեալ այլազգեացն, որք ասպատակ սփռեալ տարածեալ էին ընդ երեսս երկրի մերում. եւ նախ քան զամենայն ինչ ի փոքր մի վայրկյան ժամանակի յինքն առ հասարակ գրաւեալ նուաճէր զբոլոր իսկ ամրոցս տէրութեան հաւր իւրոյ, զոր առեալ կալեալ էր ոստիկանին»⁷²:

⁷¹ Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 508:

⁷² Նույն տեղում:

Հստակ է, որ Աշոտ Երկաթը Յուսուֆի կողմից նվաճված՝ Սմբատ Ա-ի տերության ամրոցները ազատագրել է այն ժամանակ, երբ հայրը՝ Սմբատ Ա-ն, գերության մեջ էր, այսինքն՝ 913 թ.: Ըստ պատմիչի՝ Աշոտ Երկաթի ղեկավարած ազատագրական պատերազմի աշխարհագրությունն ընդգրկում էր Հայաստանի կենտրոնական և հյուսիսարևելյան շրջաններն⁷³ ու Վիրքի հարավը՝ Տփղիս քաղաքով: Սկզբում նա ոչնչացրեց Բագրևանդ գավառում տեղակայված թշնամու գնդերը՝ ամրոցների պարիսպներից կախելով նրանց հրամանատարների («զգլխաւոր երէցս») տիկ հանված մարմինները, ապա անցավ Շիրակ՝ ոչնչացնելով թշնամու զորքը, մեկնեց Գուգարք և ազատագրեց տեղի ամրոցները: Աշոտ Երկաթի հաջորդ թիրախը Տփղիսն էր, որը հայ ազատագունդը, թերևս, գրավեց գրոհով⁷⁴, քանի որ, ըստ պատմիչի՝ քաղաքի արաբ զինվորականներից ոմանց նա ոչնչացրեց, իսկ ավելի կարևորներին ձերբակալեց՝ հետագայում հայ գերիների հետ փոխանակելու ակնկալիքով: Տփղիսից Աշոտ Երկաթն անցավ Տաշիրք գավառը, որտեղ՝ Աղստևի խորածորում ամրացած թշնամու գնդերը նա ոչնչացրեց՝ «**տուեալ անհնարին մարտ քաջութեան**»: Այնտեղից նա մեկնեց Վրաց իշխան Գուրգենի մոտ⁷⁵: Վերջինս ոչ այլ ոք է, եթե ոչ նրա եղբայր Աբասի աները⁷⁶, որը Սամցխեում գտնվող Ղվել բերդի⁷⁷ և Աճարայի տերն

⁷³ Տե՛ս Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Ե., 1965, էջ 133:

⁷⁴ Տե՛ս Լեո, Երկերի ժողովածու, հ. Բ, Ե., 1967, էջ 561:

⁷⁵ Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 508-509:

⁷⁶ Ըստ Ասողիկի՝ «Աբաս գնաց յաշխարհն Վրաց, փեսայացեալ նոցին...»: Ասողիկ, էջ 748: Հովհաննես Դրասխանակերտցին հստակեցնում է, թե ում էր նա փեսայացել: Ըստ պատմիչի՝ Աշոտ Երկաթը «ամ ինքն կոչէ զեղբայր իւր զԱբաս, զոր իշխան իշխանաց էր կացուցեալ, եւ զիշխանն Վրաց Գուրգէն զնորուն աներ»: Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 544:

⁷⁷ Տե՛ս Լ. Մելիքսեթ-Քեկ. Վրաց հղբյուրները Հայաստանի յեվ հայերի մասին, քաղվածքներ վրացերեն բնագրերից հայերեն թարգմանությամբ. ներածություն-ծանոթագրություններով յեվ հավելվածներով, հատոր Ա. (Ե-Ժ դար), Յերեվան, 1934, էջ 92-93:

էր⁷⁸: Այդ ամենից հետո Աշոտ Երկաթը գնաց, հաստատվեց Արշարունիք գավառի ամրոցներում⁷⁹:

Ազատագրական այս պատերազմները տեղի ունեցան մեկ տարուց էլ պակաս ժամանակահատվածում, և Աշոտ Երկաթի եռանդն ու արագաշարժությունն ուղղակի տպավորիչ էին: Վերջին տարիների արհավիրքներից հետո առաջին անգամ Յուսուֆի զորքերը մեկը մյուսի հետևից խորտակիչ հարվածներ ստացան և ընկրկեցին, որից օգտվեցին Աշոտ Երկաթի դաշնակիցները՝ կազմակերպելու նրա թագադրությունը: Յուսուֆի դեմ պատերազմում այսրկովկասյան ժողովուրդները կարիք ունեին հզոր և եռանդուն կազմակերպչի, որի դերում կարող էր հանդես գալ միմիայն Աշոտ Երկաթը:

Հովհաննես Դրասխանակերտցին պատմում է, որ «Ձայն տեսեալ ապա թագաւորին Վրաց, այլ եւ զաւրացն իւրոց... եւ թագ նմա (իմա՝ Աշոտ Երկաթ - Ա. Ե.) կապեալ՝ թագաւորեցուցանէին զնա փոխանակ հաւր իւրոյ, յինքնակալութեան իմն պայմանի պատուոյ զնա համարեալ»⁸⁰: Այս մասին պատմիչը գրում է մեկ այլ տեղում ևս. «Աշոտ որդի Սմբատայ, զոր թագաւորեցուցին Վրաց արքայն և զաւրք իւր ի վերայ Հայաստանեայցս»⁸¹: Նախ՝ պարզվում է, որ Աշոտ Երկաթին թագադրել է Կղարջքի թագավոր Ատրներսեհը⁸², այնպես, ինչպես ժամանակին թագ էր բերել նրա հայր Սմբատին⁸³: Ապա՝ պարզվում է, որ նրան կարգել են թագավոր հոր փոխարեն՝ կարծես թե ընդունելով նաև նրա գերագահությունը, ինչպես Սմբատ

⁷⁸ Տե՛ս **Յո. Մարկուարտ**, նշվ. աշխ., էջ 143: Տե՛ս նաև **Ն. Ադոնց**, Երկեր, հ. Ե, էջ 374:

⁷⁹ Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 509:

⁸⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 509:

⁸¹ Նույն տեղում, էջ 525:

⁸² Կարծիք է հայտնվել, որ 915 թ. Աշոտ Երկաթն իրեն Հայոց թագավոր Ճանաչելու խնդրանքով դիմել է Աբխազաց Կոստանդին Գ թագավորին (893-922), որն էլ ընդառաջել է ու Ատրներսեհի հետ միասին կազմակերպել նրա թագադրությունը: Տե՛ս **С. Ашхаджава**, Пути развития Абхазской истории, Сухуми, 1925, с. 14. Սակայն նման պնդումն իր հիմնավորումը չի գտնում սկզբնաղբյուրներում:

⁸³ Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 448:

Ա-ի պարագայում էր⁸⁴: Իզուր չէ, որ Բյուզանդիայի կայսր Կոստանդին Ծիրանածինը (913-959 թթ., որից 920-944 թթ.՝ Ռոմանոս Ա Լեկապենոս կայսեր հետ գահակցությամբ) Աշոտ Երկաթին հիշատակում է որպես «իշխանաց իշխան» (արքունտների արքունտ)⁸⁵, այնպես, ինչպես Բագրատունի առաջին արքաներին սովորաբար կոչում էին բյուզանդացիները⁸⁶: **Ղա արտացոլում էր նրա գերագահ դիրքն Այսրկովկասում**⁸⁷:

Ամենայն հավանականությամբ, Աշոտ Երկաթը Հայոց թագավոր է օծվել հոր սպանությունից անմիջապես հետո՝ Հայաստանի մի զգալի մասն ազատագրելուց հետո, իսկ Ատրնեստեհն էլ կատարել է նույն դերը, ինչ նախկինում՝ Սմբատ Ա-ի թագադրության ժամանակ:

Աշոտ Երկաթի թագադրությունը, փաստորեն, տեղի է ունեցել Սմբատ Ա-ի սպանությունից հետո՝ 914 թ.: Մ. Չամչյանցը, Ժ. Սեն-Մարտենը, Ստ. Պալասանյանը, Մ. Կանարը և Հ. Հարությունյանը կարծում են, որ այդ իրադարձությունը տեղի է ունեցել 915 թ.՝ Սմբատ Ա-ի մահվանից մեկ տարի անց⁸⁸: Այդ նույն տրամաբանությամբ Ա. Տեր Ղևոնդյանը, որը Սմբատ Ա-ի սպանությունը դնում է 913 թ., Աշոտ Երկաթի թագադրության թվական է համարում 914 թ.⁸⁹: Մ. Օրմանյանը կարծում է, որ Աշոտ Երկաթն ազատագրական կռիվները սկսել է Սմբատ Ա-ի գերի ընկնելու լուրը ստանալուն պես

⁸⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 471:

⁸⁵ Տե՛ս **Կոստանդին Ծիրանածին**. Օտար Աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 6, Բյուզանդական աղբյուրներ, Բ, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հ. Բարթիկյանի, Ե., 1970, էջ 7, 11:

⁸⁶ Տե՛ս **Ն. Աղոնց**, Երկեր, հ. Ե, էջ 190:

⁸⁷ Տե՛ս **В. Степаненко**, Политическая обстановка в Закавказье в первой половине XI в. (к атрибуции монет Кюрике куропалата), «Античная древность и средние века», 1975, вып. 11, с. 44.

⁸⁸ Տե՛ս **Մ. Չամչյանց**, նշվ. աշխ., էջ 762, **J. Saint-Martin**, Mémoires historiques et géographiques sur l'Arménie, I, Paris, 1818, p. 360, **Ստ. Պալասանյան**, Պատմութիւն Հայոց (սկզբից մինչեւ մեր օրերը), Թիֆլիս, 1902, էջ 289, **M. Canard**, Arminiya, «The Encyclopaedia of Islam», new edition, vol. I, A-B, Leiden, 1986, p. 637, **Հ. Հարությունյան**, նշվ. աշխ., էջ 65-66:

⁸⁹ Տե՛ս **А. Тер-Гевондян**, նշվ. աշխ., էջ 244: Տե՛ս նաև **Ռ. Մաթևոսյան**, Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, Ե., 1990, էջ 31, 39 և այլն:

և թագադրվել Հայաստանի կենտրոնական և հյուսիսարևելյան շրջաններն ազատագրելուց հետո⁹⁰։ Կարծում ենք, որ ուսումնասիրողների վրա ազդեցություն է թողել այն, որ նախքան թագադրվելն Աշոտ Երկաթն առնվազն մեկ տարի պատերազմել է Յուսուֆի դեմ, և հենց նրա վարած հաջող կռիվներն էլ ոգեշնչել են Ատրներսեհին՝ կազմակերպելու նրա թագադրությունը։ Փաստորեն, **Աշոտ Երկաթն** ազատագրական պատերազմը սկսել էր դեռ հոր կենդանության օրոք, անկասկած, **913 թվականին**, ուստի թագավոր էլ պետք է դարձած լիներ ամենաուշը **914 թվականին**՝ նրա սպանությունից անմիջապես հետո։

Գալով Աշոտ Երկաթի թագադրության վերաբերյալ հայկական սկզբնաղբյուրների հայտնած տեղեկություններին՝ պետք է նշել, որ, չնայած Հովհաննես Դրասխանակերտցու հստակ հաղորդումներին, մյուս հեղինակներն այլ կերպ են վերաբերում այդ հարցին։ Ստեփաննոս Օրբելյան, Վարդան վարդապետը և Մխիթար Անեցին հայտնում են, որ Աշոտ Երկաթին թագադրել է Բյուզանդիայի կայսրը Կոստանդնուպոլսում⁹¹։ Նմանատիպ հիշատակություն են պահպանել նաև Կիրակոս Գանձակեցին և այլ հեղինակներ⁹²։ Մյուսները սրան հավելում են Աշոտ Երկաթի թագադրության **921 թվականը**⁹³։

Բարեբախտաբար, իրադարձությունների ժամանակակից Հովհաննես Դրասխանակերտցին պահպանել է կարևոր հիշատակություններ, որոնք օգնում են հաղթահարելու նշված խառնաշփոթը։ Մասնավորապես, երբ Հայոց արքան ամուսնանում էր Գարդմանի Սահակ Սևադա իշխանի դստեր հետ, Յուսուֆը «թագ արքայական» ուղարկեց նրան՝ ճանաչելով նրա թագավորությունը⁹⁴։ Այնուհետև, Յուսուֆին փոխարինած Սբուք ոստիկանն Աշոտ Երկաթին

⁹⁰ Տե՛ս Մ. Օրմանյան, նշվ. աշխ., § 715։

⁹¹ Տե՛ս Ստեփաննոս Օրբելյան, էջ 192, Վարդան վարդապետ, էջ 87, Մխիթար Անեցի, Մատեան աշխարհավէպ հանդիսարանաց, աշխատասիրությամբ Հ. Մարգարյանի, Ե., 1983, էջ 117։

⁹² Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 84, «Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ.», կազմեց Վ. Հակոբյան, հ. I, Ե., 1951, էջ 384; հ. II, Ե., 1956, էջ 337։

⁹³ Տե՛ս Մխիթար Այրիվանեցի, էջ 71, Սամվել Անեցի, էջ 172։

⁹⁴ Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 542։

հռչակեց շահնշահ⁹⁵: Փաստորեն, 914 թ. թագադրությունից տարիներ հետո տեղի ունեցած վերոհիշյալ կարևոր իրադարձությունները զգալի ազդեցություն են թողել այլ հեղինակների վրա:

Իրականությանն առավել մոտ են Կիրակոս Գանձակեցու և Վարդան վարդապետի ընդհանրացված տեղեկություններն Աշոտ Երկաթի դարաշրջանի մասին, թեև նշված հեղինակները շրջանցել են Աշոտ Երկաթի գործունեության առաջին շրջանը:

Կիրակոս Գանձակեցին հայտնում է, որ «յետ մահուանն Սմբատայ Բագրատունւոյ թագաւորէ Հայոց Աշոտ որդի նորայ՝ հրամանաւ Ռոմանոսի կայսեր յէտ յօթն ամի սպանման հօրն, ամս ութ»⁹⁶: Փաստորեն, ըստ նրա՝ Աշոտ Երկաթը թագավորել է 8 տարի՝ հոր մահից 7 տարի անց, այսինքն՝ սկսած 921 թվականից:

Վարդան վարդապետի մոտ ամեն ինչ ավելի հստակ է: Նա տեղեկացնում է, որ Կոստանդնուպոլիս հեռանալուց հետո «Աշոտ պսակեալ ի Լևոնէ դառնայ ի Հայս յերեքհարիւր եօթանասուն (921-922) թուին. և գտանէ թագաւորեալ զհոմանունն իւր Աշոտ որդի հօրեղբօր իւրոյ. զոր հնազանդեաց ի նեքոյ իւր. որպէս և զԳագիկ թագաւոր տանն Արծրունեաց... և մեծագօր գտեալ քան զնոսա, և քան զթագաւորն Վրաց Ներսէհ, կոչեցաւ ի վերայ նոցա Շահնշահ, զամս ութ»⁹⁷: Պարզ է, որ Աշոտ Երկաթի ողջ թագավորությանն այլ հեղինակների կողմից վերագրվող 8 տարիները⁹⁸ Վարդան վարդապետը հատկացնում է միայն շահնշահության շրջանին:

Հետաքրքրական է այն, որ Հովհաննես Դրասխանակերտցին ոչ մի դեպքում չի խոսում Աշոտ Երկաթի՝ կայսեր կողմից թագադրված լինելու մասին, թեև հավանական է կարծել, որ կայսրը ճանաչել է նրա թագավորությունն այն ժամանակ, երբ Հայոց թագավորը գտնվում էր Կոստանդնուպոլսում: Դրա հիմնավորումն է այն, որ Հայոց կաթողիկոսին ուղղված 915 թ. նամակում Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկողայոս Միստիկոսը գրում է. «Մեծ և աստվածա-

⁹⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 551:

⁹⁶ Կիրակոս Գանձակեցի, էջ 84:

⁹⁷ Վարդան վարդապետ, էջ 87:

⁹⁸ Տե՛ս Սամվել Անեցի, էջ 172:

պսակյալ կայսրը ձեր խնդիրքին ուշի ուշով ունկնդիր լինելով՝ ընդամաջ գնաց և հաստատումն ու պատիվը, որ մեծ ցանկություն ունեցավ ստանալու նա, ում վստահված է ձեր իշխանությունը, տվեց: Ահա այս [բոլորը] կատարվեց կայսեր կողմից ձեզ համար»⁹⁹:

Ի դեպ, Ասողիկը, որին հայտնի էր, որ կայսրն Աշոտին չի թագադրել, այլ միայն ճանաչել է նրա թագավորությունը, նրա կողմից Աշոտ Երկաթին թագավոր հռչակելու մասին չի խոսում, իսկ նրա թագավորության 8 տարիները հաշվարկում է շահնշահ կամ թագավորների թագավոր հռչակվելու թվականից՝ 921-ից սկսած: Պատմիչը պահպանել է մի հիշատակություն այն մասին, որ «**Աշոտ զկնի մահուան հաւր իւրոյ կեցեալ ամս ԺԵ (15) եւ թագաւորեալ ամս Ը (8), վախճանի յՅՀԸ (378/929-930) թուականին**»¹⁰⁰: Ասողիկի այս տեղեկությունից հեռուն գնացող հետևություններ կատարել չի կարելի: Խնդիրն այն է, որ ըստ Ասողիկի՝ Սմբատը թագավոր է դարձել հայոց ՅԽ թվականին (340 թ.՝ 891 թ. ապրիլ-892 թ. ապրիլ) և թագավորել 24 տարի: Գագիկի հարձակումը Վաղարշակերտի վրա տեղի է ունեցել հայոց 363 թ. (914-915), իսկ Սմբատ Ա-ի մահը՝ 364 թ. (915-916)¹⁰¹: Այս բոլոր տեղեկություններից ճիշտ է միայն Սմբատ Ա-ի գահ բարձրանալու թվականը¹⁰²: Վաղարշակերտի պաշարումն իրականում տեղի է ունեցել 913 թ., իսկ Սմբատի սպանությունը, ինչպես տեսանք, 914 թ.: Միայն է նաև Սմբատին 24 տարվա գահակալություն վերագրելը, քանի որ իրականում, ըստ Հովհաննես Դրասխանակերտցու՝ նա թագավորել է միայն 22 տարի¹⁰³: Այս լույսի ներքո անդրադառնալով Աշոտ Երկաթի վերաբերյալ պատմիչի հիշատակություններին՝ կարող ենք արձանագրել, որ հոր մահից հետո Աշոտ Երկաթի՝ 15 տարի ապրելու վերաբերյալ հիշատակությունը հակասության մեջ է մտնում նրա իսկ նշած՝ Սմբատ Ա-ի և

⁹⁹ Տե՛ս Հ. Բարթիկյան, Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկողայոս Միստիկոսի 101-րդ և 139-րդ թղթերը..., էջ 252, 255:

¹⁰⁰ Ասողիկ, էջ 748:

¹⁰¹ Տե՛ս նույն տեղում, էջ 745:

¹⁰² Տե՛ս Ա. Եղիազարյան, Հայոց Սմբատ Ա թագավորի գահակալության շրջանի ժամանակագրությունը, էջ 42-44:

¹⁰³ Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 505-506:

Աշոտ Երկաթի մահվան տարեթվերի միջև ստացվող տարիների թվի հետ: Սմբատ Ա-ի մահվան՝ Ասողիկի նշած տարեթվի՝ ճիշտ լինելու պարագայում, հաշվի առնելով Աշոտ Երկաթի մահվան թվագրումը հայոց 378 թ. (929-930), 15 տարվա փոխարեն պետք է նշված լիներ 14 (378-364=14): Իսկ ինչ վերաբերում է Աշոտ Երկաթի՝ թագավորության տարիներին, ապա այստեղ Ասողիկը հավատարիմ է ինքն իրեն: Աշոտ Ա-ի գահակալության սկիզբ նա համարում է հայոց 336 (887) թվականը, քանի որ հենց այդ տարում էր տեղի ունեցել Հայոց թագավորության պաշտոնական ճանաչումը Բյուզանդիայի կողմից¹⁰⁴: Այս պարագայում ևս Ասողիկը, որին անկասկած հայտնի էր Հովհաննես Դրասխանակերտցու տեղեկությունն այն մասին, որ Աշոտ Երկաթը թագադրվել էր դեռևս 914 թվականին, նշում է, թե նա թագավորել է միայն 8 տարի¹⁰⁵, այսինքն՝ 921 թվականից: Անկասկած, նա հիմք է ընդունել այն, որ Աշոտը շահանշահ է հռչակվել այդ շրջանում:

Ինչ վերաբերում է այն 7 տարվան, որը բաց է մնում Սմբատ Ա-ի մահից հետո իբրև թե 15 տարի ապրած և դրանից միայն 8-ը որպես թագավոր գահակալած Աշոտ Երկաթի կենսագրության մեջ, ապա ըստ Ն. Ադոնցի ճշգրիտ դիտարկման՝ այդ տարիները պետք է նույնացվեն հեղինակի կողմից Յուսուֆի արշավանքների շրջանին վերագրվող Ե (5) տարի (սրբագրելի է «Է» (7)-ի) տևած անտերունջ շրջանին¹⁰⁶ (909-915/916) և ոչ թե 914-921 թթ.¹⁰⁷:

¹⁰⁴ Տե՛ս **Ա. Եղիազարյան**, Աշոտ Ա Բագրատունի. թագավոր Հայոց (թագավորության թվականը և գահակալության տարիները), Ե., 2014, էջ 42-66:

¹⁰⁵ Կրաց հեղինակ Փարսադան Գորգիջանիծեն գրում է, որ Աշոտ Երկաթը (ըստ նրա՝ իբր թե Սմբատ Ա-ի եղբորորդին) գահակալել է 7 տարի, իսկ նրանից հետո գահ է բարձրացել նրա եղբայր Աբասը: Տե՛ս **Լ. Մելիքսեթ-Քեկ**, Կրաց աղբյուրները Հայաստանի յեվ հայերի մասին, քաղվածքներ վրացերեն բնագրերից հայերեն թարգմանությամբ, ներածություն-ծանոթագրություններով յեվ հավելվածներով, Կ. Բ. (ԺԳ-ԺԸ դար), Յերեվան, 1936, էջ 97:

¹⁰⁶ Տե՛ս **Ասողիկ**, էջ 747:

¹⁰⁷ Տե՛ս **Ն. Ադոնց**, Երկեր, Կ. Ե, էջ 201: Ս. Երեմյանը կարծում է, որ Աշոտ Երկաթի վարած ազատագրական կռիվները տևել են 7 տարի՝ 914-921 թթ.: Այսինքն, ըստ ուսումնասիրողի՝ այդ տարիները բնորոշվում են ոչ թե որպես անտերունջ, այլ ազատագրական կռիվների շրջան: Միայն 922 թ. Աշոտ Երկաթը խալիֆի կողմից հռչակվեց որպես «Շահնշահ Հայոց և

Ակնհայտ է, որ Աշոտ Երկաթի վերաբերյալ Ասողիկի տեղեկությունները ոչ միայն ամբողջական չեն, այլև պարունակում են ժամանակագրական բացեր ու սխալներ:

Որոշ ուսումնասիրողներ, հաշվի առնելով այն, որ Աշոտ Երկաթի թագավորությունը հայկական սկզբնաղբյուրների մի մասում հաշվվում է 921 թ. սկսած, ինչպես նաև այն, որ նրա թագավորության սկզբի այդ թվականը նշում են այն պատմիչները, ովքեր հիշատակում են Աշոտ Երկաթի՝ կայսեր կողմից թագադրված լինելու մասին, տպավորություն են ստացել, թե Աշոտ Երկաթը Կոստանդնուպոլիս է մեկնել 919 թ.¹⁰⁸, 920 թ.¹⁰⁹, 921 թ.¹¹⁰ կամ նույնիսկ 922 թ.¹¹¹:

921 թ. մինչև 929 թ., երբ վախճանվել է Աշոտ Երկաթը, 8 տարի է, ուստի զարմանալի չէ այն, որ նրան վերագրվում է հենց 8 տարվա թագավորություն:

Վերևում ներկայացվածի հիման վրա կարելի է համոզված ասել, որ Աշոտ Երկաթի թագադրությունը տեղի է ունեցել 914 թ. սկզբին՝ Սմբատ Ա-ի սպանությունից անմիջապես հետո: Հետագայում նա թագ ստացավ Յուսուֆից¹¹² և դատելով սկզբնաղբյուրների տեղեկություններից՝ թեև այն ընդունեց, բայց նոր թագադրության հանդես չկազմակերպեց:

Վրաց», այսինքն՝ ճանաչվել է նրա գերագահությունը մյուս թագավորությունների (Հայոց, Վրաց, Աղվանից) նկատմամբ: Տե՛ս **С. Еремян**, Присоединение северо-западных областей Армении к Византии в XI веке, «Լրաբեր հասարակական գիտությունների» (այսուհետ՝ «ԼՀԳ»), 1971, № 3, էջ 6:

¹⁰⁸ Տե՛ս **Մ. Օրմանյան**, նշվ. աշխ., § 720-721, **Ռ. Մաթևոսյան**, նշվ. աշխ., էջ 86, **Հ. Հարությունյան**, նշվ. աշխ., էջ 70-72:

¹⁰⁹ Տե՛ս **J. Saint-Martin**, նշվ. աշխ., էջ 361-362:

¹¹⁰ Տե՛ս **Մ. Չամչյանց**, նշվ. աշխ., էջ 776, 780, **А. Васильев**, Политические отношения Византии и арабов за время Македонской династии (867-959), “Записки историко-филологического факультета императорского С.-Петербургского университета”, часть LXVI, С.-Петербург, 1902, с. 216, **Հ. Մանանդյան**, նշվ. աշխ., էջ 44, **С. Toumanoff**, Armenia and Georgia, “The Cambridge Medieval History”, vol. IV, “The Byzantine Empire”, part I, Cambridge, 1966, p. 614.

¹¹¹ Տե՛ս **Ռ. Մաթևոսյան**, «Տէրութիւն»-ը որպէս վասալայութեան կառավարությունները արտացոլող տերմին (IX դար-X դարի առաջին երեսնամյակ), «ՊԲՀ», 1983, № 2-3, էջ 175:

¹¹² Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 542:

1.3. Հայաստանը և քրիստոնյա Այսրկովկասը 914-915 թվականներին. Աշոտ Երկաթի՝ Բյուզանդիա մեկնելու պատճառները

Աշոտ Երկաթի թագադրությանը հաջորդած իրադարձությունների և, մասնավորապես, նրա՝ Կոստանդնուպոլիս մեկնելու դրդապատճառների վերաբերյալ հստակ պատկերացում կազմելու համար հարկ է կատարել մի շարք ժամանակագրական և բովանդակային ճշգրտումներ:

Դատելով Հովհաննես Դրասխանակերտցու տեղեկություններից՝ այդ ժամանակ Յուսուֆը պատերազմ էր մղում Արծրունիների և Սյունիների դեմ¹¹³ և ասպատակում Գուգարքը¹¹⁴, իսկ Աշոտ Երկաթը, թերևս, ամրացել էր իր ազատագրած ամրոցներում: Դատելով այն իրողությունից, որ այդ իրադարձությունների մասին պատմիչը հիշատակում է Աշոտ Երկաթի թագադրության նկարագրությունից անմիջապես հետո, կարելի է կարծել, որ նշված կացությունը ստեղծվել էր արդեն 914 թ.:

Դրանից անմիջապես հետո պատմիչը խոսում է այն իրադարձությունների մասին, որոնք տեղի են ունեցել, ինչպես կտեսնենք, 915 թ.:

Սկզբում խիստ կարևոր է պարզաբանելը, թե Հայաստանի կենտրոնական ու հյուսիսային շրջանների ազատագրումը տեղի է ունեցել Աշոտ Երկաթի՝ Կոստանդնուպոլիս մեկնելուց առաջ, թե հետո: Խնդիրն այն է, որ Հովհաննես Դրասխանակերտցու տեղեկությունները հիմնավորում են այդ իրադարձությունների՝ նախքան նրա մեկնելը տեղի ունենալը, մինչդեռ Ասողիկը պնդում է հակառակը: Ըստ Ասողիկի՝ նա իր եղբայր Աբասի հետ փախուստի էր դիմել Յուսուֆի զորքերից: Աշոտ Երկաթը մեկնել էր Կոստանդնուպոլիս՝ Լևոն կայսեր մոտ, իսկ Աբասը՝ Վիրք: Վերադարձից հետո Աշոտը «դառնայ յաշխարհս մեր եւ գտանէ զծառայս հաւր իւրոյ թագաւորեալ. զինքն անուանեաց Շահանշահ, այսինքն թագաւորաց թագաւոր. եւ հալածական առնէ զԻսմայէլացոց զաւրն յաշխարհէս

¹¹³ Տե՛ս նույն տեղում, էջ 509-510:

¹¹⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 509-513:

Հայոց»¹¹⁵: Կարելի է կարծել, որ պատմիչն Աշոտ Երկաթի վարած ազատագրական առաջին կռիվները պարզապես չի հիշատակում: Մյուս կողմից, այն, որ Աշոտ Երկաթի՝ հոր մահից հետո Լևոն Ջ կայսեր մոտ, որը վախճանվել էր 912 թ., գնալն իրականությանը չի համապատասխանում, ակնհայտ է: Բացի այդ, Ասողիկն ամեն ինչ ներկայացնում է խիստ համառոտ և մեկ շնչով, ուստի՝ առկա ժամանակագրական անհամապատասխանությունների պայմաններում նրա տեղեկությունների հերթականության ստույգ լինելը ենթակա է լուրջ կասկածի: Ըստ նրա՝ Գուգարաց աշխարհում Միքայելի սպանությունը Յուսուֆի զինվորների կողմից տեղի է ունեցել Սմբատ Ա-ի մահից հետո¹¹⁶: Վրացական աղբյուրում ամեն ինչ հակառակն է: Ստեփան Տբերքին հաղորդում է, որ Միքայելի (Գորբոն) մահից հետո Սմբատը Աբխազաց թագավորությունից վերադարձավ և ամրացավ Կապույտ բերդում¹¹⁷: Ստացվում է, որ Միքայելի մահը տեղի է ունեցել ամենաուշը 913 թ., քանի որ այդ նույն թվականին Սմբատ Ա-ն դուրս գալով Կապույտ բերդից՝ գերվել է: Հովհաննես Դրասխանակերտցին Միքայելի մահը նկարագրում է Աշոտ Երկաթի վարած ազատագրական կռիվներից հետո, երբ պատմում է այն բոլոր չարիքների մասին, որ կատարել էր Յուսուֆը¹¹⁸: Ի դեպ, պատմիչի նշած ժամանակագրական հերթականությունը հակասության մեջ չի մտնում վրաց աղբյուրի տեղեկության հետ, քանի որ Աշոտ Երկաթի վարած ազատագրական առաջին կռիվները, ինչպես տեսանք, տեղի են ունեցել նախքան Սմբատ Ա-ի մահը, այսինքն՝ նաև նախքան Աշոտ Երկաթի՝ Կոստանդնուպոլիս մեկնելը: Ուստի՝ արձանագրենք, որ Հայաստանի նշված շրջանները Աշոտ Երկաթն ազատագրել է նախքան Բյուզանդիա մեկնելը:

¹¹⁵ **Ասողիկ**, էջ 748:

¹¹⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 745-746:

¹¹⁷ Տե՛ս **Լ. Մելիքսեթ-Քեկ**. Վրաց աղբյուրները Հայաստանի յեվ հայերի մասին, Խ. Ա, էջ 92: Տե՛ս նաև «Քարթլիի մատյան», թարգմ. Վ. Մարտիրոսյանի և Հ. Մկրտումյանի, «ԼՀԳ», 1989, № 9, էջ 66, **“Картлис цховреба (История Грузии)”**, Тб., 2008, с. 143-144.

¹¹⁸ Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 513:

Բայց Ասողիկի տեղեկության երկրորդ հատվածը, ինչպես կտեսնենք, որ վերաբերում է նրա՝ շահնշահի հռչակվելուն ու արաբներին Հայաստանից վտարելուն, համապատասխանում է իրականությանը:

Չնայած Աշոտ Երկաթի վարած հաղթական կռիվներին և Ատըրներսեհ Կղարջեցու կողմից թագադրության հանդեսի կազմակերպմանը՝ շուտով Հայոց թագավորը հայտնվեց դժվարին կացության մեջ, որից դուրս գալու միակ ելքը դարձավ Բյուզանդիայի օգնությանն ապավինելը, առավել ևս, որ, ինչպես տեսանք, սկսվել էին Յուսուֆի նոր ասպատակությունները Վասպուրականում, Սյունիքում ու Գուգարքում:

915 թ. տեղի ունեցած դեպքերի վերաբերյալ Հովհաննես Դրասխանակերտցին պահպանել է մի հիշատակություն, որը լինելով խիստ հետաքրքրական՝ ուսումնասիրողների կողմից հատուկ ուշադրության նյութ չի դարձել, թերևս, բացատրություն գտնելու դժվարության հետ կապված: Ըստ պատմիչի՝ «**դրացիք մեր եւ ազգք որ շուրջ զմեաւք են՝ Յունականք եւ Եգեթացիք, եւ Գուգարացիք եւ Ուտէացիք եւ հիւսիսական ազգք բնակեալք առ ոտամբն Կովկասու, ի մտի եղեալ եթէ գուցէ յինքեանս հետի աղագս գտանել մարթասցի ոստիկանն չար, թէ երբեք չէն գտցէ զքաղաքս եւ զաւանս եւ զգեալոս. վասն այնորիկ ի խել եւ ի բրել, կորուսանել եւ յատակել ջանացան առ ստորոտով իւրաքանչիւր աշխարհաց իւրեանց**»¹¹⁹: Նրանց են միանում տեղական ավագակախմբերը, որից հետո թշնամիներն ավերում են Հայաստանի հյուսիսային շրջանները՝ դրանք վերածելով անապատի: Տեղի ունեցող բախումների ժամանակ մեծ թվով մարդիկ են սպանվում, իսկ ներխուժողները ավարով հեռանում են¹²⁰:

Ն. Ադոնցը կարծում է, որ Հայաստանի քրիստոնյա հարևանները՝ հույները, աբխազները, Գուգարքի և Ուտիքի բնակիչներն աս-

¹¹⁹ Նույն տեղում, էջ 516:

¹²⁰ Տե՛ս նույն տեղում:

պատակում էին երկիրը՝ պատճառաբանելով, որ այնտեղ կուտակված հարստությունը կարող է գրավել Յուսուֆին¹²¹:

Նույն կերպ է այդ իրադարձությունները դիտարկում նաև Լեոն¹²²:

Բ. Առաքելյանը, խոսելով այն մասին, որ Աշոտ Երկաթի ազատագրական պատերազմը մոլեգնության էր հասցրել Յուսուֆին, նշում է, որ այդ ժամանակ Հայաստան արշավեցին հյուսիսային ցեղերը: Նա քննության է առել խնդրո առարկայի վերաբերյալ հիշատակության միայն «հիւսիսական ազգք բնակեալք առ ոտամբն Կովկասու» հատվածը՝ նշելով, թե նրանց նպատակն էր մի ամայի գոտի ստեղծել Հայաստանում, որ Յուսուֆը զորքը դեպի հյուսիս արշավելու հնարավորություն չունենա¹²³:

Ա. Գրենը կարծիք է հայտնել, որ Հայոց թագավորության վրա են հարձակվել բյուզանդացիները, մենգրելները, Վիրքի ելուզակները, ուդիները և Կովկասի լեռնականները: Օգտվելով այդ խառնակ վիճակից՝ հայ իշխանները ևս սկսել են պատերազմել՝ խլելով մեկը մյուսի հողերը¹²⁴:

Այն, որ հարձակվողների նպատակը եղել է անմարդաբնակ ու անապատ միջնորմի ստեղծումն իրենց երկրամասերի ու Յուսուֆի զորքերի միջև, որպեսզի վերջիններս նրանց տարածքները չներխուժեն, կասկած է հարուցում այն պատճառով, որ պատմիչի հիշատակած հույները, եգերացիները, գուգարացիները, ուտեացիներն ու Կովկասյան լեռների ստորոտներին բնակվող ցեղերը միաժամանակ, համանման նպատակով Հայաստան ներխուժել չէին կարող, առավել ևս, որ Գուգարքում արքունի տիրույթներից բացի, որ արդեն իսկ ազատագրվել էին Աշոտ Երկաթի կողմից, գտնվում էին Ատրնեսի Կղարջեցու և Գուրգեն իշխանի տիրույթները, որոնք առայժմ դաշնակցային կապերի մեջ էին Հայոց թագավորի հետ:

¹²¹ Տե՛ս Ն. Ադոնց, Երկեր, հ. Ե, էջ 194:

¹²² Տե՛ս Լեոն, նշվ. աշխ., էջ 561:

¹²³ Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., հ. III, Ե., 1976, էջ 41-42:

¹²⁴ Տե՛ս А. Грен, Династия Багратидов в Армении, “Журнал министерства народного просвещения”, часть ССХС, С.-Петербург, 1893, ноябрь, с. 91.

Վերջինս հիմնավորվում է հայկական սկզբնաղբյուրներում պահպանված մի հույժ կարևոր տեղեկությամբ. «որդին Սմբատայ Աշոտ բազում ընթացութիւնս եւ քաջութիւնս ցուցանէր եւ պահէր զբոլոր ամրոցս տէրութեան հաւր իւրոյ ձեռնտուութեամբ իշխանին **Գորգունեայ, նաեւ թագաւորին Վրաց եւ թագաւորին Գագկայ Վանեցոյ**»¹²⁵. Ինչ վերաբերում է «Ուտէացիք»-ին, որոնք, եթե Ուտիքի բնակիչներն են, ապա հազիվ թե նման քայլի դիմեին, առավել ևս, որ Աշոտ Երկաթը Աղստևի ձորը մաքրել էր Յուսուֆի զորքից: Ամենայն հավանականությամբ, տեղի է ունեցել մի իրադարձություն, որի հետևանքներից Հովհաննես Դրասխանակերտցին բխեցրել է սեփական եզրակացությունները: Մեզ թվում է, որ պատմիչի վրա ազդեցություն է թողել հետևյալը: Հայտնի է, որ Կախքի քրեպիսկոպոս Կյուրիկեի հետ դաշնակցած Աբխազաց (Եգերաց) թագավոր Կոստանդին Գ-ն (893-922) 915 թ.¹²⁶ արշավել է Աղվանից թագավորության դեմ: Հիմնական գործողությունները տեղի են ունեցել Աղվանից թագավորության արևմտյան շրջաններում, որտեղ Աղվանից թագավոր Ատրներսեղը ստիպված է եղել որոշ շրջաններ ու բերդեր զիջելու հակառակորդներին¹²⁷:

¹²⁵ Այդ մասին տե՛ս նաև «Բագմավէպ»-ում (1922, մարտ) հրատարակված՝ Շապուհ Բագրատունուն վերագրվող ձեռագրական նյութում: Վերահրատարակությունը տե՛ս **Անանուն Զրուցագիր՝ կարծեցեալ Շապուհ Բագրատունի**, Պատմութիւն, թարգմանութիւնը, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները՝ Վարազ Առաքելեանի, Ե., 2011, էջ 186-192: Նույնը տե՛ս **Մխթար Անեցի**, էջ 116-117:

¹²⁶ Կարծիք է հայտնվել, որ այս արշավանքն իրականում տեղի է ունեցել 906 թ., քանի որ Հարավային Օսիայի էրեղվ գյուղի եկեղեցու արձանագրության մեջ հենց այս թվականով է թվագրված արխագաց թագավոր Կոստանդինի արշավանքը: Տե՛ս **М. Гунба**, Ередвская надпись о походе абхазского царя Константина в Эрети, "Материалы по археологии и искусству Абхазии", Сухуми, 1974, с. 78-82. Կարծում ենք, սակայն, որ արձանագրության հիշատակությունն իրականում վերաբերում է 906 թ. Կոստանդինի գլխավորած այն արշավանքին, որին հետևեցին Հայոց Սմբատ Ա թագավորի զորքերի ներխուժումը Վիրք, արխագաց բանակի ջախջախումն ու թագավորի գերեվարումը: Տե՛ս **Ա. Շլիագարյան**, Հայոց Սմբատ Ա թագավորի արխագական արշավանքը, «ԼՀԳ», 2010, № 1-2, էջ 119-130:

¹²⁷ Տե՛ս **Вахушти Багратиони**, История царства Грузинского, перевод Н. Накашидзе, Тб., 1976, с. 127, «Քարթլիի մատյան», էջ 66:

Պարզից էլ պարզ է, որ աբխազական գորքերի արշավանքն Աղվանից թագավորության ուղղությամբ խոշոր իրադարձություն էր Այսրկովկասի կյանքում, որը կարող էր հանգեցնել լուրջ ցնցումների: Դեռևս Աշոտ Ա-ի (887-891 թթ.) ժամանակաշրջանում Հովհաննես Դրասխանակերտցին հիշատակում է «գաղխատորյզ (թերևս՝ խռովարար¹²⁸) բնակիչսն Գուգարաց եւ զելուզակուտ մարդիկ Ուտի գաւառի»¹²⁹, որնց իրեն էր ենթարկել Հայոց թագավորը: Ուտիքի և Գուգարքի ելուզակ-«ավազակապետներ»-ին հիշատակում է նաև Մովսես Դասխուրանցին, որոնց նվաճել էր Գարդմանի Սահակ Սևադա իշխանը¹³⁰: Աշոտ Ա-ի մահվան ժամանակ Սմբատը գտնվում էր Գուգարքում՝ «զի ... ի նուաճել զազգսն զայնոսիկ գնացեալ էր»¹³¹: Մխաված չենք լինի, եթե կարծիք հայտնենք, որ Գուգարքի «զազգսն զայնոսիկ»-ը հենց Գուգարքի խռովարարներն էին, որոնց ենթարկելը, փաստորեն այնքան էլ հեշտ գործ չէր, թեև ի վերջո հաջողվել էր: Սմբատ Ա-ի մահվանից հետո, օգտվելով երկրում տիրող խառնակ վիճակից և աբխազական գորքի արշավանքից, Գուգարքի խռովարարներն ու Ուտիքի ելուզակները վերսկսեցին իրենց ավազակային գործողությունները: Պատմիչի «աւազակք եւ սրիկայք»-ը, որոնք օգտվել էին աբխազական գորքի գորաշարժից¹³², մեծ հավանականությամբ կարելի է վերագրել նրա իսկ կողմից հիշատակվող «Գուգարացիք եւ Ուտէացիք»-ին: Բայց, քանի որ վերջիններս արշավանքին ոչ թե մասնակցել էին, այլ միայն օգտվել ստեղծած խառնաշփոթից, պատմիչը, նկարագրելով Հայաստանի և սեփական երկրների միջև անմարդաբնակ միջնորմ ստեղծելու հյուսիսային հարևանների «նպատակը», նրանց վերաբերյալ հավելում է, թե «ապա խառն ընդ նոսին եւս աւազակք եւ սրիկայք ելին ի մարտս ընդ երկրի մերում»¹³³:

¹²⁸ Տե՛ս «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմություն Հայոց», բնագիրը Մ. Էմինի, 1996, էջ 261:

¹²⁹ Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 444:

¹³⁰ Տե՛ս Մովսէս Կաղանկատուացի, էջ 341:

¹³¹ Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 446:

¹³² Տե՛ս նույն տեղում, էջ 516:

¹³³ Տե՛ս նույն տեղում:

Հաջորդ հավանական եզրակացությունը բխում է Հովհաննես Դրասխանակերտցու կողմից Գուգարք հասկացության ընկալման սահմաններից, որը պարզ է դառնում «մեծ քորեպիսկոպոսն, որ պայազատէր իսկ զմասն Գուգարաց մերծ ի Դրունս Ալանաց» տեղեկությունից¹³⁴: Ակնհայտ է, որ «Գուգարք»-ի նման ընկալումը կարող է հիմնավոր դարձնել այն, որ «Գուգարացիք»-ը Հովհաննես Դրասխանակերտցու ընկալմամբ ոչ միայն բուն Գուգարքն է, այլև վերջինիս որոշ հատվածներ ընդգրկող Կախքի քորեպիսկոպոսությունը: Ինչ վերաբերում է «հիւսիսական ազգք բնակեալք առ ուտամբն Կովկասու» արտահայտությանը, ապա, եթե Հովհաննես Դրասխանակերտցու՝ մեզ հետաքրքրող հիշատակության պարզաբանման համար հիմք ենք վերցնում 915 թ. արշավանքի հետ կապված դեպքերը, այն միմիայն հաստատում է մեր տեսակետը, քանի որ ուղղակիորեն վերաբերում է Կախքի քորեպիսկոպոսությանը, որի՝ Կովկասյան լեռներին հարող հատվածում և դրա հարևանությամբ բազմաթիվ ցեղեր էին բնակվում (ժամարներ և այլք):

Մեզ համար հանելուկ է մնում միայն «Յունականք»-ը, որի համար կարելի է ընդունել հետևյալ թեական պատասխանը: Ըստ Ն. Ադոնցի՝ Աշոտ Երկաթը Կոստանդնուպոլիս է մեկնել 914 թ. սեպտեմբերից առաջ և վերադարձել 915 թ. ամռան սկզբին՝ 10 ամիս անց: 915 թ. բյուզանդական զորքերը մեծածավալ արշավանք են կատարել դեպի Մարաշ, Սամոսատ և Հիսն-Մանսուր¹³⁵: Այս արշավանքը, եթե համընկել է աբխազական բանակի՝ Աղվանից թագավորություն արշավելու շրջանին, ապա Հայոց կաթողիկոսի համար կարող էր հիմք հանդիսանալ վերոհիշյալ հաղորդման մեջ «Յունականք»-ը հավելելուն:

Ըստ Ն. Ադոնցի ճշգրտման՝ Հովհաննես Դրասխանակերտցին այդ ժամանակ պետք է գտնվելիս լիներ այդ իրադարձությանը շատ մոտ՝ Տարոնում, Դերջանում և կամ Եկեղյաց գավառում¹³⁶: Միևնույն ժամանակ Հայաստանի մյուս ծայրում տեղի ունեցող իրադար-

¹³⁴ Նույն տեղում, էջ 543:

¹³⁵ Տե՛ս Ն. Ադոնց, Երկեր, հ. Ե., էջ 200:

¹³⁶ Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 533-534:

ծութիւններ (աբխազական բանակի զորաշարժը, Կախքի մասնակցութիւնը դրան, ինչպէս նաև Հայաստանի տարածքի խռովարար-ելուզակների ակտիվանալը) տրամաբանութիւնը նրան հասու չէր, ուստի՝ բխեցրել է սեփական եզրակացութիւնը՝ Ատրպատականի ամիրի դէմ Հայաստանից հյուսիս ընկած շրջաններն անմարդաբնակ անապատ-միջնորմի վերածելու նպատակ վերագրելով:

Փաստորեն, կարելի է արձանագրել, որ չնայած Հովհաննէս Դրասխանակերտցու հաղորդմանը՝ ռազմական գործողութիւններն Այսրկովկասում ուղղված չեն եղել Հայաստանի դէմ, չնայած, ամենայն հավանականութեամբ, ավագակային գործողութիւններ ծավալելու հնարավորութիւններ են ստեղծվել տեղեկան որոշ ուժերի համար: Մյուս կողմից, Աբխազաց թագավորութեան և Կախքի քրդապիսկոպոսութեան զորքերի արշավանքն Աղվանից թագավորութեան դէմ, ընդհանուր առմամբ, հարված էր Հայոց թագավորութեան շահերին, որի նախորդ գահակալները նշված երկրներն ընդգրկել էին իրենց տիրապետութեան սահմաններում¹³⁷: Հայոց թագավորութեան ապագայի տեսանկյունից դա վտանգավոր նախադէպ էր, ուստի խիստ անհանգստացրել էր հայոց կաթողիկոսին:

Հովհաննէս Դրասխանակերտցին տեղեկացնում է նաև, որ այդ շրջանում Աշոտ Երկաթը ստիպված էր կռիվներ մղելու իր տերութեան տարբեր հատվածներում և պայքարելու ոչ միայն «**ընդ սառակինոսացն, այլ եւ ընդ Վրաց եւ ընդ Գուգարաց, որք ապիրատս գնմանէ խորհեին**»¹³⁸: Պատմիչի հաղորդման տրամաբանութիւնը ցույց է տալիս, որ «Վրաց»-ը վերաբերում է Կղարջքի թագավորութեանը, իսկ «Գուգարաց»-ի պարագայում խոսքը կարող է լինել տեղի իշխանների մասին, մասնավորապէս, Վրաց իշխան Գուրգենի, որն իր փեսա Աբասի հետ շուտով սկսում է դավեր նյութել Հայոց թագավորի դէմ¹³⁹: Թերևս, հենց այդ էր պատճառը, որ գտնվելով Կղարջքի թագավոր Ատրներսեհի տիրույթներում՝ հայոց կաթողիկոսի գլխավոր մտահոգութիւնը դարձել էր նրան համոզելը, որպէս-

¹³⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 457:

¹³⁸ Նույն տեղում, էջ 525:

¹³⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 544:

զի պահպանի Հայոց և Վրաց իշխանների հետ միաբանությունը¹⁴⁰։ Կարելի է եզրակացնել, որ Ատրնետեսիը ևս փորձում էր խզել դաշնակցային կապերն Աշոտ Երկաթի հետ։

Փաստորեն, Յուսուֆի զորքերի դեմ պատերազմից բացի պայքարի նոր ճակատ էր բացվել Աշոտ Երկաթի համար։ Հայոց թագավորը, լինելով անսահման քաջության և եռանդի տեր, այդ ամենն անուշադրության մատնել չէր կարող, այլ, ինչպես իր գահակալության ողջ շրջանում, ոչ թե հուսալքվում, այլ ստեղծված ծանրագույն իրավիճակից անմիջապես ելք էր փնտրում։

Հովհաննես Դրասխանակերտցին, ամենայն հավանականությամբ, ոչ առանց Աշոտ Երկաթի իմացության, հարկ համարեց գրություն հղել կայսերը՝ ներկայացնելով Հայաստանի ծանր կացությունը և օգնություն ակնկալելով¹⁴¹։ Բյուզանդական արքունիքը Հայաստան առաքեց իր պատվիրակ Թեոդորոս Վասիլիկոսին։ Քանի որ Աշոտ Երկաթը գտնվում էր Հայաստանի հյուսիսարևելյան շրջաններում, իսկ Հովհաննես Դրասխանակերտցին՝ Տարոնում, պատվիրակն առաջինը հանդիպեց կաթողիկոսին, որից հետո միայն՝ Աշոտ Երկաթին։ Վերջինս դրանից հետո մեկնեց Կոստանդնուպոլիս և մեծ պատիվների արժանացավ¹⁴²։

Այստեղ խիստ կարևոր է նաև պարզաբանել Բյուզանդիայի կողմից Հայոց թագավորության՝ Այսրկովկասի քրիստոնյա երկրների ու երկրամասերի առումով դերի գնահատումն այն բանից հետո, երբ Սմբատ Ա-ի մահից հետո այն հայտնվել էր ծանր իրավիճակում։ Պարզվում է, որ Բյուզանդիայի արքունիքում Հայոց թագավորության դերի թերագնահատում կարծես թե տեղի չէր ունեցել։ Հովհաննես Դրասխանակերտցին Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկողայոսի՝ իրեն ուղղված նամակի¹⁴³ տեքստում պատրիարքին

¹⁴⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 524։

¹⁴¹ Տե՛ս նույն տեղում, էջ 525-532։

¹⁴² Տե՛ս նույն տեղում, էջ 533։

¹⁴³ Մ. Օրմանյանը սխալմամբ այդ նամակի ստացման տարեթիվ է համարել 918 թ., իսկ Աշոտ Երկաթի՝ Բյուզանդիա մեկնելը դրել է 919 թ.։ Տե՛ս Մ. Օրմանյան, նշվ. աշխ., § 720-721։ Հ. Հարությունյանը նամակի ստացումը և Հայոց թագավորի՝ Կոստանդնուպոլիս մեկնելը համապատասխանաբար

վերագրում է հետևյալ խոսքերը. «Ըստ սմին սակի առաքեցաք թուղթ եւ առ կուրապաղատդ եւ առ ավագն Ափխազաց՝ խրատելով առ ի լսել խրատուդ ձերոյ եւ մոռանալ զընդ միմեանս հարումնն, եւ նայել ի սէր եւ ի միաբանութիւն եւ ի հաշտ խաղաղութիւն ընդ միմեանս եւ ընդ հասարակ իշխանս Հայոց եւ Աղվանից, եւ միանալ միաբան եւ մարտնչել ընդդէմ ամբարիշտ թշնամւոյն՝ որդւոյն Ապուսիճայ»¹⁴⁴։ Այս հույժ կարևոր հաղորդումը մեզ է մատուցում մի շարք էական տեղեկություններ։ Կայսրությունը նամակ է հղել կուրապաղատին, որն անկասկած Կղարջքի թագավոր Ատրնեսեհին է և Աբխազաց թագավոր Կոստանդինին՝ հորդորելով լսել հայոց կաթողիկոսի խրատները և մոռանալ տեղի ունեցած ընդհարումը։ Բացի այդ, խիստ հետաքրքրական է Ատրնեսեհին ու Կոստանդինին ուղղված պատգամը՝ հաշտ լինելու միմյանց և Հայոց ու Աղվանից իշխանների հետ։ Փաստացի ներկայացված է մի վիճակ, երբ Կղարջքի ու Աբխազաց թագավորները հակամարտում են մի կողմից իրար դեմ, իսկ մյուս կողմից՝ Հայոց ու Աղվանից իշխանների դեմ։ Առաջին հակամարտությունը նորություն չէր, բայց Հայոց ու Աղվանից իշխանների հետ հակամարտության հիշատակությունը թերևս դարձյալ ու դարձյալ սնվում է միննույն աղբյուրից՝ Աղվանից թագավորության դեմ Աբխազաց թագավորության և Կախքի քորեպիսկոպոսության ծեռնարկած արշավանքի իրողությունից։ Աբխազա-կախքյան ուժերի զորաշարժն Աղվանից թագավորության դեմ անընդունելի էր Աշոտ Երկաթի համար, որը կարող էր և հավակնում էր հոր իրավահաջորդը լինելուն՝ նաև նրա տիրապետության սահմանների առումով։ Հայտնի է, որ Սմբատ Ա-ի օրոք Այսրկովկասին քրիստոնյա

թվագրել է 919 թ. և 920 թ.։ Տե՛ս Հ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 70-72։ Ըստ Կ. Թումանովի՝ 918-920 թթ. բանակցություններ են տեղի ունենում Բյուզանդիայի հետ, որոնք վարում էին Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկողայոսն ու հայոց կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցին։ 921 թ. Աշոտ Երկաթը մեկնում է Բյուզանդիա, այնտեղից վերադառնում օգնական զորքով և 922 թ. հռչակվում արքայից արքա (տե՛ս **C. Tumanoff**, նշվ. աշխ., էջ 614)։

¹⁴⁴ Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 523։

երկրները նվաճվել ու Հայոց տերության մաս էին կազմել¹⁴⁵, իսկ Աբխազաց թագավորը 906 թ. հայկական զորքերից պարտություն էր կրել ու ընդունել Սմբատ Ա-ի գերիշխանությունը¹⁴⁶: Այդ իսկ պատճառով Կոստանդնուպոլիս ուղարկած նամակում Հովհաննես Դրասխանակերտցին Սմբատ Ա-ին ներկայացնում է որպես **«բոլորից արեւելեայցս գլխաւոր»**¹⁴⁷:

Ինչպես տեսանք, Աշոտ Ա-ին, Սմբատ Ա-ին և Աշոտ Երկաթին բյուզանդական արքունիքը կոչում էր իշխանաց իշխան¹⁴⁸։ Ընդգծելով նրանց գերագահ դիրքն Այսրկովկասի քրիստոնյա երկրների նկատմամբ։ Ուստի՝ պատմիչի՝ «ընդ Վրաց եւ ընդ Գուգարաց, որք ապիրատս զնմանէ (իմա՝ Աշոտ Երկաթից - Ա. Ե.) խորհեին» արտահայտությունն ամենայն հավանականությամբ ձևակերպվել է հենց այդ տեսանկյունից։ Նույն մտայնությունը, բայց արդեն Այսրկովկասի քրիստոնյաների շրջանում հայոց կաթողիկոսի հոգևոր գերիշխանության առումով, առկա է նաև Հովհաննես Դրասխանակերտցու կողմից մեջբերված՝ Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկողայոսի նամակում, որտեղ մասնավորապես ասված է. **«Կարծեմ ոչ ինչ զանխուլ է՝ տէր իմ, ի քոյոյ յաստուածասիրութենէդ յոյժ տըրտմութիւն եւ անպակաս ցաւք սրտից մերոց յաղազս Հայոց եւ Վրաց եւ Աղուանից միահամուռ քոյդ հաւատացեալ հօտից...»**, այդուհետ՝ **«քոյոյդ հօտիդ Հայոց եւ Վրաց եւ Աղուանից»**¹⁴⁹: Այն, որ հայոց կաթողիկոսը կոչվում է «Հայոց, Վրաց և Աղվանից միահամուռ հավատացյալ հոտ»-ի առաջնորդ, կարևոր հետևություններ է ծնում, մասնավորապես, որ, ինչպես Սմբատ Ա-ն էր Բյուզանդիայի կողմից դիտվում որպես «բովանդակ Արևելքի գլխավոր», այնպես էլ հայոց կաթողիկոսն էր դիտարկվում որպես քրիստոնյա արևելքի հոգևոր առաջնորդ։ Ուստի՝ Այսրկովկասի քրիստոնյաների միջև տեղի ունե-

¹⁴⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 457:

¹⁴⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 481-483:

¹⁴⁷ Նույն տեղում, էջ 528: Տե՛ս Հ. Բարթիկյան, Բյուզանդիան և հայ պետականությունը X-XI դդ., «ԼՀԳ», 1996, № 2, էջ 27-28:

¹⁴⁸ Տե՛ս Կոստանդին Ծիրանածին, էջ 7, 11:

¹⁴⁹ Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 522:

ցածը պետք է անհանգստացներ նաև իրեն նրանց հոգևոր հովիվը համարող հայոց կաթողիկոսին:

Այսպիսով, կարելի է համոզված ասել, որ **Բյուզանդիայի տեսանկյունից Հայոց թագավորը՝ Աշոտ Երկաթը, շարունակում է դիտարկվել որպես «բովանդակ Արևելքի գլխավոր»** (իշխանաց իշխան), իսկ հայոց կաթողիկոսը՝ Հայոց, Վրաց և Աղվանից քրիստոնյա «միահամուռ» հոտի առաջնորդ: Այդ իրողությունն ակնհայտ կդառնա Աշոտ Երկաթի՝ Կոստանդնուպոլսում ստացած ընդունելության նկարագրության ժամանակ:

Մնում է միայն ճշգրտել Աշոտ Երկաթի՝ Կոստանդնուպոլիս մեկնելու ժամանակը: Այդ հարցում պարզություն մտցնելու համար կարևորվում է Հովհաննես Դրասխանակերտցու կողմից մեջբերված՝ Նիկողայոս Միստիկոսի վերոհիշյալ նամակի թվագրումը: Հայտնի է, որ Աշոտ Երկաթի՝ Կոստանդնուպոլիս մեկնելուց կարճ ժամանակ առաջ կայսրուհի Ջոեի կողմից պատրիարքը հեռացվել էր եկեղեցուց¹⁵⁰, իսկ կայսրուհին իր հերթին արտաքսումից վերադարձել է միայն 914 թ.¹⁵¹: Նիկողայոսն իր լիազորություններն այնուհետև հետ ստացավ¹⁵², սակայն վերոհիշյալը ցույց է տալիս, որ նա չէր կարող իր նամակը Հայոց կաթողիկոսին ուղարկել 914 թ.: Դատելով Հովհաննես Դրասխանակերտցու բերած նամակի բովանդակությունից՝ այն նույնական չէր պատրիարքի կողմից 915 թ. նույն հասցեատիրոջն ուղարկած նամակին, որը պահպանվել է միայն հունարեն բնագրով¹⁵³: Վերջինիս մեջ պատրիարքը տեղեկացնում էր Հովհաննես Դրասխանակերտցուն, որ կայսրը ճանաչել է Աշոտ Երկաթի իշխանությունը¹⁵⁴, մինչդեռ հայ հեղինակի մեջ բերած նամակում, որը, անկասկած, նախորդել է առաջինին, պատրիարքը ցավ է հայտնում Հայաստանում և Այսրկովկասում տիրող իրավի-

¹⁵⁰ Տե՛ս **Թեոփանեսի Շարունակող**, էջ 228:

¹⁵¹ Տե՛ս “The Cambridge History of Byzantine Empire”, Cambridge, 2008, p. 505.

¹⁵² Տե՛ս **Թեոփանեսի Շարունակող**, էջ 231-232:

¹⁵³ Տե՛ս **Հ. Բարթիկյան**, Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկողայոս Միստիկոսի 101-րդ և 139-րդ թղթերը..., էջ 254-255:

¹⁵⁴ Տե՛ս նույն տեղում:

Ճակի համար և լուծման ուղիներ առաջարկում¹⁵⁵։ Վերջին իրողությունը ցույց է տալիս, որ այդ ժամանակ Աշոտ Երկաթը դեռ Կոստանդնուպոլսում չէր, քանի որ հակառակ պարագայում նման խնդիրները բյուզանդացիները կքննարկեին հենց Հայոց թագավորի հետ։ Ակնհայտ է, որ երկու նամակների միջև տեղի է ունեցել Աշոտ Երկաթի այցը Կոստանդնուպոլիս։ Ուստի՝ սխալված չենք լինի, եթե պնդենք, որ Հովհաննես Դրասխանակերտցու հիշատակած նամակը պատրիարքն առաքել է 915 թ., իսկ մյուսը՝ նույն տարվա ընթացքում՝ բայց ամիսներ անց, երբ Աշոտ Երկաթը գտնվում էր Կոստանդնուպոլսում։ Հ. Բարթիկյանը կարծում է, որ Աշոտ Երկաթի իշխանությունը ճանաչելու վերաբերյալ նամակը պատրիարքն ուղարկել է 915 թ.՝ Աշոտ Երկաթի վերադարձից հետո¹⁵⁶, սակայն դրանից հետո կաթողիկոսին այդ մասին գրելը պարզապես իմաստազրկվում էր, քանի որ նա առանց այդ էլ ամեն ինչի մասին արդեն տեղյակ էր։ Փոխարենը, եթե այն գրվել է Աշոտ Երկաթի՝ Կոստանդնուպոլսում գտնվելու ժամանակ, ապա տեղի ունեցածի մասին հայոց կաթողիկոսին նախապես հայտնելը խիստ օգտակար կլիներ Հայոց թագավորի վերադարձի համար հող նախապատրաստելու առումով։ Կարելի է փաստել, որ Աշոտ Երկաթը Կոստանդնուպոլիս է մեկնել 915 թ.։

Վերջին իրադարձությունը Ն. Ադոնցը թվագրում է 914 թ.¹⁵⁷, քանի որ Թեոփանեսի Շարունակողի աշխատության՝ վերոհիշյալ հաղորդմանն անմիջապես հաջորդող՝ հայազգի ոմն Պագրատուկասի կողմից Ադրիանուպոլիսը բուլղարների ցար Սիմեոնին հանձնելու վերաբերյալ հիշատակությունը թվագրված է «III ինդիկտիոնի

¹⁵⁵ Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 521-523։

¹⁵⁶ Տե՛ս **Հ. Բարթիկյան**, Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկողայոս Միստիկոսի 101-րդ և 139-րդ թղթերը..., էջ 252։

¹⁵⁷ Տե՛ս **Ն. Ադոնց**, Երկեր, հ. Ե, էջ 189։ Նույնը տե՛ս նաև **F. Doelger**, *Regesten der Kaiserurkunden des ostroemischen Reiches*. Berlin-Muenchen, 1924, Bd. 1, p. 577, **Hovhannēs Draskhanakertc'i**, *History of Armenia*, Translation and Commentary by Rev. Krikor H. Maksoudian, Atlanta, Georgia, 1987, p. 17.

սեպտեմբեր»-ով՝ համապատասխան 915 թ.¹⁵⁸: Ուստի՝ դրանից առաջ տեղի ունեցած իրադարձությունը՝ Աշոտ Երկաթի Կոստանդնուպոլիս ժամանելը, պետք է տեղի ունեցած լիներ II ինդիկտիոնի, այսինքն՝ 914 թ. սեպտեմբերից առաջ: Կ. Յուզբաշյանը համանման կարծիք է հայտնում¹⁵⁹: Վերոհիշյալի լույսով՝ մեզ առավել հավանական է թվում, որ Աշոտ Երկաթի՝ Կոստանդնուպոլիս մեկնելը կարող էր տեղի ունենալ III ինդիկտիոնին, այսինքն՝ 915 թ., Ադրիանուպոլիսը Սիմեոնին հանձնելու տարում: Առավել ևս, որ Աշոտ Երկաթին ընդունած Ջոե կայսրուհին արտաքսումից վերադարձել էր 914 թ., իսկ նրա վերադարձին, մինչև Աշոտ Երկաթին ընդունելը, հաջորդել էր ծանր ու երկարատև պայքար բուլղարների ցար Սիմեոնի դեմ¹⁶⁰: Ն. Ադոնցի ճշգրտման համաձայն, որ կատարվել է Հովհաննես Դրասխանակերտցու տվյալների հիման վրա¹⁶¹, Աշոտ Երկաթը Կոստանդնուպոլիսում մնացել է մեկ տարուց մի փոքր պակաս¹⁶²: Այդ տրամաբանությամբ, եթե ընդունում ենք Աշոտ Երկաթի՝ Կոստանդնուպոլիս մեկնելու հավանականությունը 915 թ., ապա նա հայրենիք է վերադարձել 916 թ.:

Վերոհիշյալի օգտին է խոսում նաև այն, որ Հովհաննես Դրասխանակերտցին Հայաստանի հարևան ժողովուրդների ու ցեղերի արշավանքը ներկայացնում է նախքան իր՝ Տարոն, Դերջան ու Եկեղյաց գավառներ և Աշոտ Երկաթի՝ Բյուզանդիա մեկնելը: Ավելին, այդ դեպքերը, թերևս, մեկն էին այն բարդություններից, որոնք ստիպեցին Աշոտ Երկաթին՝ մեկնելու կայսեր արքունիք: Աշոտ Երկաթի՝ Կոստանդնուպոլիս մեկնելը 914 թ. և վերադարձը 915 թ.

¹⁵⁸ Տե՛ս **Թեոփանեսի Շարունակող**, էջ 288, 368, ժանրթ. 114: Տե՛ս նաև **Продолжатель Феофана**. Жизнеописания византийских царей, Санкт-Петербург, 1992, с. 155, прим. 737.

¹⁵⁹ Տե՛ս **К. Юзбашян**, Армянские государства эпохи Багратидов и Византия IX-XI вв., М., 1988, с. 109. Նախկինում Կ. Յուզբաշյանը կարծում էր, որ Աշոտ Երկաթը Կոստանդնուպոլիսում եղել է 913-914 թթ.: Տե՛ս **Կ. Յուզբաշյան**, «Բագրատունյաց շրջանի» Հայաստանը՝ միջազգային իրավունքի տեսանկյունից, «ՊԲՀ», 1975, № 1, էջ 43:

¹⁶⁰ Տե՛ս **Թեոփանեսի Շարունակող**, էջ 228:

¹⁶¹ Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 533-535:

¹⁶² Տե՛ս **Ն. Ադոնց**, Երկեր, հ. Ե, էջ 200:

թվագրման պարագայում առաջանում է հակասություն, քանի որ այդ դեպքում ստացվում է, որ Աշոտ Երկաթն արդեն Կոստանդնուպոլսում էր, ուստի՝ այդ իրադարձությունները նրա՝ Կոստանդնուպոլիս մեկնելու որոշման վրա ազդել չէին կարող: Մեր առաջարկած թվագրման պարագայում ամեն ինչ ընկնում է իր տեղը: Նույնիսկ, եթե մեր թվագրումն անընդունելի դիտվի, ապա պետք է հիշել, որ թեև Աշոտ Երկաթը մեկնել էր Բյուզանդիա, Հովհաննես Դրասխանակերտցին մնացել էր Հայաստանում, ուստի՝ Աշոտ Երկաթի՝ Կոստանդնուպոլսում գտնվելու ժամանակ տեղի ունեցած դեպքերը՝ դրանք 10 տարի անց մագաղաթին հանձնող¹⁶³ պատմիչի հիշողության մեջ կարող էին միախառնվել մինչև Հայոց թագավորի մեկնելը տեղի ունեցած դեպքերին: Ուստի՝ եթե նույնիսկ շարունակենք համարել, որ Աշոտ Երկաթը Կոստանդնուպոլիս է մեկնել 914 թ. և վերադարձել 915 թ., ապա խիստ հավանական է կարծելը, որ գործ ունենք պատմիչի կողմից իրադարձությունների հերթականության շփոթության հետ: Մյուս կողմից, ինչպես որ Յուսուֆի՝ Վասպուրականի և Հայաստանի մյուս շրջանների վրա կատարած նոր արշավանքների լուրն էր Աշոտ Երկաթին հասել Կոստանդնուպոլսում՝ ստիպելով շտապ բռնել վերադարձի ճանապարհը, այնպես էլ նշված իրադարձությունները լուրը Հայոց թագավորին կարող էր հասնել հենց Բյուզանդիայի մայրաքաղաքում:

Սակայն մեր թվագրումը հիմնավորվում է այն իրողությամբ, որ նախքան Աշոտ Երկաթի՝ Բյուզանդիա մեկնելը պատմիչը հաղորդում է մի հույժ կարևոր տեղեկություն այն մասին, որ Յուսուֆի վարած անողոք պատերազմները Հայոց աշխարհում տևել են 7 տարի¹⁶⁴: Նա հաշվարկը կատարել է, անկասկած, հայոց 358 թվականից, երբ ըստ նրա սկսվեց Յուսուֆի արշավանքը: Յոթերորդ տարին ստացվում է հայոց 364 թ., որը համապատասխանում է 915-916 թվականին, երբ Աշոտը վերադարձավ Կոստանդնուպոլսից: Քանի որ կայսեր կողմից 915 թ. ճանաչվել էր Աշոտ Երկաթի թագավորու-

¹⁶³ Տե՛ս «Հովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցույ Պատմություն Հայոց», բնագիրը Մ. Էմինի, էջ 368:

¹⁶⁴ Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 519:

թյունը, և այդ մասին Կոստանդնուպոլսի պատրիարքը տեղեկացրել էր հայոց կաթողիկոսին, ապա վերջինս հենց այդ թվականն էլ համարել է 7-ամյա պատերազմական և անիշխանության շրջանի ավարտ: Եթե 909 թ. սկիզբ առած 7-ամյա պատերազմական շրջանը հասցնում ենք 915/916 թ., ապա ինքնըստինքյան հիմնավորվում է մեր այն տեսակետը, որ Աշոտ Երկաթը Կոստանդնուպոլիս է մեկնել 915 թ. և վերադարձել 916 թ.:

Հայաստանում տիրող դժվարին իրավիճակը, որն Աշոտ Երկաթին ստիպեց մեկնելու Կոստանդնուպոլիս, ամբողջապես ներկայացնելու համար հավելենք, որ միևնույն ժամանակ Յուսուֆը նոր հալածանքներ է սկսում Արծրունիների և Սյունիների նկատմամբ¹⁶⁵:

Վերևում ասվածը ցույց է տալիս, որ Աշոտ Երկաթի իշխանությունը տարածվում էր Հայաստանի կենտրոնական, արևմտյան և հյուսիսարևելյան հատվածներում, իսկ Դվինի շրջակայքը, Վասպուրականի թագավորությունը, Սյունյաց իշխանությունները և Գուգարքը վերածվել էին Յուսուֆի արշավանքների հիմնական թիրախի: Մյուս կողմից, ինքնագլուխ էին դարձել նախկինում Հայոց թագավորության գերիշխանության ներքո գտնվող այսրկովկասյան երկրները: Փաստորեն, Հայոց թագավորության վիճակն այնքան բարդ էր, որ միայն տեղական ուժերով պայքարելն այլևս անհնար էր:

Հովհաննես Դրասխանակերտցու նամակը ծանր ազդեցություն գործեց կայսեր արքունիքում, որտեղից, ինչպես տեսանք, Աշոտ Երկաթի մոտ պատվիրակ ուղարկեցին: Աշոտ Երկաթն այդ ժամանակ ամրացել էր իր տերության ամրոցներում՝ շրջապատված այն ցավալի իրողություններով, որոնք ներկայացվեցին վերևում: Կայսեր մոտ գնալն ու նրան օգնության համար դիմելը միակ ելք էր, որը մնում էր Աշոտ Երկաթին: Թերևս այս իրադրության հետ է կապված այն իրողությունը, որ պատմիչների մի մասը հայտնում է, թե իբր Աշոտ Երկաթը փախուստի է դիմել և ապաստանել Կոստանդնուպոլսում¹⁶⁶:

¹⁶⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 524-525:

¹⁶⁶ Տե՛ս Ասողիկ, էջ 748, Ստեփաննոս Օրբելյան, էջ 192-193 և այլն:

Փաստորեն, 913-914 թթ. ազատագրական պատերազմը, որի հաջող ընթացքն Աշոտ Երկաթին հնարավորություն էր տվել թագադրվելու, հայտնվել էր փակուղում: Ուստի՝ Աշոտ Երկաթը, որն իր թագավորության ողջ ընթացքում այդպես էլ երբեք չընկրկեց վտանգների ու բարդությունների առջև, այդ դժվարին իրադրության մեջ էլ փորձ կատարեց գտնելու ելքը: Նրա մեկնումը Բյուզանդիա ծառայում էր այդ նպատակին:

Կոստանդնուպոլսում Աշոտ Երկաթին ջերմ ընդունելության արժանացրեցին: Այդ մասին հիշատակում է Թեոփանեսի Շարունակողը. «այդ օրերին քաղաք (իմա՝ Կոստանդնուպոլիս - Ա. Ե.) եկավ ...իր ֆիզիկական ուժով մեծ անուն հանած Աշոտը, իշխանաց իշխանի որդին: ...Երբ նա [քաղաք] մտավ, նրան մեծ պատվով ընդունեց տիրուհին (իմա՝ Կոստանդին Ծիրանածին կայսեր մայրը՝ կայսրուհի Զոեն-Ա.Ե.) և ապա ճամփու դրեց դեպի նրա երկիրը»¹⁶⁷:

Ի հավելումն վերոհիշյալի, Հովհաննես Դրասխանակերտցին տեղեկացնում է, որ Կոստանդին կայսրը (ըստ Թեոփանեսի Շարունակողի՝ Զոե կայսրուհին) Աշոտ Երկաթին և նրա հետ Կոստանդնուպոլիս գնացած հայ նախարարներին մեծ պատիվների արժանացրեց¹⁶⁸ և ամիսներ անց «բազում զաւրավարս եւ զաւրս Հռովմայեցիս ի ծնոս նորա (իմա՝ Աշոտ Երկաթի - Ա. Ե.) գումարեալ՝ յուղարկէ յիւրական աշխարհս»¹⁶⁹:

Այդ ժամանակ Յուսուֆը սաստկացրել էր հարձակումները Վասպուրականի ուղղությամբ: Դրա մասին լուրերը հասան Կոստանդնուպոլիս, և Աշոտ Երկաթը շտապ հրաժեշտ տվեց կայսերական ընտանիքին ու բռնեց Հայաստանի ճանապարհը¹⁷⁰:

Հայոց թագավորը հայրենիք էր վերադառնում բյուզանդական օգնական զորքով՝ հաղթանակի և Հայոց թագավորությունը վերահաստատելու անխախտ հավատով:

¹⁶⁷ Թեոփանեսի Շարունակող, էջ 228:

¹⁶⁸ Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 533:

¹⁶⁹ Նույն տեղում, էջ 538:

¹⁷⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 537-538:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒՄԸ

2.1. Հայոց թագավորության համակարգային կերպավորման գործընթացը և երեք «Հայոց» թագավորների խնդիրը

909-913 թթ. պատմավիճակում, երբ Հայոց թագավորությունը ենթարկվում էր Ատրպատականի Յուսուֆ ամիրի անընդհատ հարձակումներին ու ասպատակություններին, փաստորեն, փլուզվել էր Հայոց թագավորության պետական համակարգը: Սպանվել էր Հայոց թագավորը, քայքայվել էին պետական ինստիտուտները, կառավարման համակարգն ու բանակը: Կործանվում էր այն, ինչ հիմնադրել էր Աշոտ Ա Բագրատունին: Բացի այդ, Հայաստանի քաղաքական թատերաբեմում աստիճանաբար հայտնվեցին երեք «Հայոց թագավոր»-ներ՝ Աշոտ Երկաթը, Գագիկ Արծրունին և Աշոտ Շապուհյանը, որոնց ներկայությունը բացում էր պայքարի նաև ներքին ճակատ՝ էլ ավելի բարդացնելով իրավիճակը:

Երեք «Հայոց թագավոր»-ներից երկուսը թագավոր էին հռչակվել Ատրպատականի ամիրի կողմից, իսկ մեկը՝ թագադրվել էր որպես օրինական գահաժառանգ և ճանաչվել Բյուզանդիայի կայսեր կողմից: Նրանց միջև պայքարը զգալի չափով թուլացավ, երբ Աշոտ Երկաթը հռչակվեց շահնշահ կամ թագավորների թագավոր: Ասողիկի տեղեկության համաձայն, երբ Աշոտ Երկաթը Հայաստանը մաքրեց թշնամուց, նա «գտանէ զծառայս հօր իւրոյ թագաւորեալ. զինքն անուանեաց Շահանշահ, այսինքն թագաւորաց թագաւոր»¹⁷¹: Ինչպես հաղորդում է Վարդան վարդապետը, «զծառայս»-ը վերաբերում է Աշոտ Երկաթի հորեղբորորդի Աշոտին, Գագիկ Արծրունուն և Ատրնէրսեհ (հեղինակի տեղեկության մեջ՝ Ներսեհ) Բագրատունուն: Եվ Աշոտը «կոչեցաւ ի վերայ նոցա Շահնշահ»¹⁷²:

¹⁷¹ Տե՛ս Ասողիկ, էջ 748:

¹⁷² Վարդան վարդապետ, էջ 87:

Աշոտ Երկաթի գերագահությունը Հայաստանում և Այսրկովկասում ճանաչել էր նաև Բյուզանդիան: Հովհաննես Դրասխանակերտցին հաղորդում է, որ Աշոտ Երկաթը կայսրից **«մեծավայելուչ գահիւ պատուի առեալ քան զամենայն գահերէցս, ընկալեալ զփառաց փարթամութիւն, ո՛չ իբրեւ զայլս ոմանս պատուաւորս, այլ իբրեւ զթագաւորագուն բողբոջ, գրեթէ ընդ իւրով իսկ կայսր զնա հարթա-յարմար ցուցանէր»**¹⁷³:

Պետք է նշել, որ «շահնշահ»-ը Բագրատունիներին պատկանող «թագավոր Հայոց և Վրաց» տիտղոսի կերպափոխված տարբերակն էր: Ուստի այստեղ հարկ է մանրամասնորեն քննարկելու թե՛ այդ տիտղոսների ծագումը և թե՛ կերպափոխման տրամաբանությունը: Բագրատունիների՝ սկզբում Հայոց և Վրաց իշխանաց իշխան, այնուհետև՝ Հայոց և Վրաց թագավոր ու, վերջապես, Հայոց և Վրաց շահնշահ (թագավորաց թագավոր) հանդիսանալն ու համապատասխան տիտղոսներ կրելը հայկական և օտար աղբյուրներում ունի հստակ ու անխափան հետազոծ, որը միայն մի գահակալի պարագայում է, որ ընդհատվում է: Խոսքը հենց Աբասի մասին է, որը Գագիկ Արծրունու ժամանակակիցն էր:

Նշված տիտղոսի առկայության քննարկումն անհրաժեշտ է սկսել Աշոտ Ա-ից, որը, ըստ Ասողիկի՝ նախքան թագավորելը 30 տարի եղել է Հայոց և Վրաց իշխանաց իշխան¹⁷⁴: Ըստ Թովմա Արծրունու՝ խալիֆի կողմից **«հաւատացեալ էր վերակացութիւն աշխարհիս Հայոց Աշոտի, որ իշխանաց իշխան՝ ծեռն ի գործ արկեալ նուաճել զիշխանս Հայոց, զՎրաց եւ զԱղուանից, որ եղել իսկ»**¹⁷⁵: Ասողիկը հայտնում է, որ Աշոտի որդի Սմբատը թագավորեց՝ **«տիրելով բոլոր հայրենեաց իւրոց՝ Հայոց եւ Վրաց»**¹⁷⁶: Ասել է՝ Սմբատը ժառանգեց մի թագավորություն, որի մեջ մտնում էին Հայքն ու Վիրքը: Ըստ Հովհաննես Դրասխանակերտցու՝ 899 թ. Սմբատ Ա-ն

¹⁷³ Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 533:

¹⁷⁴ Տե՛ս Ասողիկ, էջ 740:

¹⁷⁵ Տե՛ս Թովմա Արծրունի եւ Անանուն, էջ 220:

¹⁷⁶ Ասողիկ, էջ 742:

թագադրեց Կդարջքի կուրապաղատ Ատրնեքսեհին որպես «Վրաց» թագավոր (899-923) և ճանաչեց որպես իր տերության երկրորդ մարդ¹⁷⁷։ Փաստորեն, ժամանակակից կաթողիկոս-պատմիչի տեղեկությամբ՝ «Վրաց» թագավորը Հայոց թագավորի հպատակն էր ու նրա տերության մեջ երկրորդը։ Ըստ Ս. Երեմյանի՝ այս ամենի հիման վրա կատարած հիմնավոր եզրահանգման՝ Բագրատունի արքաները հանդիսացել են «թագավոր Հայոց և Վրաց»՝ կրելով համապատասխան տիտղոսը¹⁷⁸։

Բագրատունիների՝ «Հայոց և Վրաց իշխանաց իշխան», իսկ այնուհետև՝ «Հայոց և Վրաց թագավոր» հանդիսանալու իրողությունն արտացոլված է նաև վրացական¹⁷⁹ և արաբական¹⁸⁰ աղբյուրներում։

Ավատատիրական հարաբերությունների խորացումն իր կնիքը թողեց նաև խնդրո առարկա տիտղոսի բովանդակության վրա։ Վերջինս շուտով նոր ձևակերպում ստացավ։ 919 թ. ձերբակալված Յուսուֆի փոխարեն Սբուքը, ըստ Հովհաննես Դրասխանակերտցու՝ ոստիկան նշանակվեց «յետ սակաւ աւուրց»։ Նշանակվելուն պես նա խաղաղություն հաստատեց Աշոտ Երկաթի հետ՝ նրան հռչակելով **շահնշահ**, այսինքն՝ գերագահ թագավոր երկրում գոյություն ունեցող այլ թագավորների նկատմամբ։ Ըստ Ասողիկի տեղեկության, երբ Աշոտ Երկաթը Հայաստանը մաքրեց թշնամուց, նա ականատես եղավ իր հոր «ծառաների»՝ թագավոր հանդիսանալու իրողությանը, ուստի հռչակվեց **շահնշահ**, այսինքն թագավորների թագավոր¹⁸¹։ Ինչպես տեսանք, ըստ Վարդան վարդապետի՝ խոսքը Աշոտ Երկաթի հորեղբորորդի Աշոտի, Գագիկ Արծրունու և Վրաց կամ Կդարջքի թագավոր Ատրնեքսեհ Բագրատունու մասին է։ Հեղինակի հաղորդման համաձայն՝ «Աշոտ պսակեալ ի Լևոնէ

¹⁷⁷ Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 471։

¹⁷⁸ Տե՛ս Ս. Երեմյան, Լիպարիտ զորավարը և նրա նախորդները, «Ն. Մառի անվան կաթինետի աշխատություններ», № 2, Ե., 1947, էջ 109, 111։

¹⁷⁹ Տե՛ս Յ. **Анчабадзе**, Из истории средневековой Абхазии (VI-XVII вв.), Сухуми, 1959, с. 124-125.

¹⁸⁰ Տե՛ս **Ibn Zāfir**, Akhbār al-duwal al-munqati'a, ց. 1, Irbid, 1999, с. 63.

¹⁸¹ Տե՛ս Ասողիկ, էջ 748։

դառնայ ի Հայս յերեքհարիւր եօթանասուն (921-922) թուին. և գտանէ թագաւորեալ զհոմանունն իւր Աշոտ որդի հօրեղբօր իւրոյ. զոր հնազանդեաց ի նեքոյ իւր. որպէս և զԳագիկ թագաւոր տանն Արծրունեաց, և զՄովսէս բռնացեալն յԱղուանս, զորոյ խաւարեցոյց զաչսն. և մեծագոր գտեալ քան զնոսա, և քան զթագաւորն Վրաց Ներսէս, կոչեցաւ ի վերայ նոցա Շահնշահ, զամս ուր»¹⁸²: Այս ամենը հաշվի առնելով՝ Ս. Երեմյանը կարծում է, որ Աշոտ Երկաթը խալիֆայի կողմից հռչակվել է որպէս «Շահնշահ Հայոց և Վրաց», այսինքն՝ ճանաչվել է նրա գերագահությունը մյուս թագավորությունների (Վրաց, Աղվանից) նկատմամբ¹⁸³: Փաստորեն, «թագավոր Հայոց և Վրաց»-ի և «շահնշահ Հայոց և Վրաց»-ի միջև տարածքային-աշխարհագրական ընդգրկման առումով էական տարբերություններ չկային, տարբերությունը բովանդակային էր: «Թագավոր Հայոց և Վրաց»-ից անցումը «շահնշահ Հայոց և Վրաց»-ի հետևանք էր Բագրատունյաց թագավորության կազմում մանր թագավորությունների ի հայտ գալու, երբ Բագրատունի գահակալն այլևս միակ թագավորը չէր, բայց նաև մյուսներին հավասար էլ չէր: Հայոց և Վրաց շահնշահ / թագավորաց թագավորը առաջինն ու գերագահն էր Հայաստանի և քրիստոնյա Այսրկովկասի թագավորների մեջ:

Աշոտ Բ-ի՝ Հայոց և Վրաց շահնշահ կամ թագավորաց թագավոր հռչակվելուց հետո Բագրատունի արքաների համար հիմնականը դարձավ «շահնշահ» տիտղոսը, թեև Աբասն այն այդպէս էլ չժառանգեց: Ըստ մի արաբական աղբյուրի՝ մոտ 953 թ. «Վրաստանն նահանգի և Հայաստանի այլ մասերի վրա կար մի թագավոր, որի անունն էր Աշուր իբն ալ-Աբբաս [իմա՝ Աշոտ՝ որդի Աբասի (953-977 թթ.) - Ա. Ե.] և Շահնշահ տիտղոսն էր կրում: Սա փորձեց պաշարել Ղվինը և նրա ժողովրդի դեմ կռվել: Զորք հավաքեց հայերից, լեզգիներից և այլ անհավատներից...»¹⁸⁴: Բացի Վիրքից, Աշոտ Գ-ն,

¹⁸² **Վարդան վարդապետ**, էջ 87:

¹⁸³ Տե՛ս **С. Еремян**, Присоединение северо-западных областей Армении к Византии в XI веке, էջ 6:

¹⁸⁴ Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան**, Մունաջջիմ-Բաշիի XI-XII դդ. անանուն աղբյուրը Ղվինի և Գանձակի Շադդադյանների մասին, «Բանբեր Մատենադարանի», 1962, № 6, էջ 477:

փաստորեն, ծանրակշիռ դիրք ունեւ Կովկասյան լեռնականների շրջանում, որի վկայությունն է լեզգիների գորքի մասնակցությունը Դվինի ազատագրման ձախողված գործողությանը: Աշոտ Գ-ի՝ շահնշահի համդիսանալու իրողությունը փաստված է այլ աղբյուրներում ևս¹⁸⁵:

«Շահնշահ» տիտղոսը կրում էր նաև Սմբատ Բ-ն (977-989 թթ.)¹⁸⁶: Հայկական ու վրացական աղբյուրներում Գագիկ Ա Բագրատունին (989-1017 թթ.) համարվում էր «շահնշահ Հայոց և Վրաց»¹⁸⁷ և կամ պարզապես «շահնշահ»¹⁸⁸:

Ակնհայտ է, որ «իշխանաց իշխան Հայոց և Վրաց»-ից՝ Աշոտ Մեծի թագադրումից հետո անցում է կատարվել «թագավոր Հայոց և Վրաց»-ի, իսկ Աշոտ Բ-ի օրոք՝ «շահնշահ Հայոց և Վրաց»-ի: Այդ կարգավիճակն ունեցողին Բյուզանդիայի արքունիքը պաշտոնական գրագրության մեջ անվանում էր «**Մեծ Հայքի իշխանաց իշխան**»¹⁸⁹, ի ամրագրումն Այսրկովկասում նրա գերակա դիրքի¹⁹⁰:

Ասողիկի վերոհիշյալ տեղեկության մեջ իր խտացված արտահայտությունն է գտել Հայոց թագավորության համակարգային կերպափոխումը (տրանսֆորմացիան), երբ կենտրոնաձիգ միապետությունից անցում էր կատարվում դեպի ապակենտրոն ավատատիրական դաշնություն՝ գերագահ թագավորի գլխավորությամբ¹⁹¹: Այդ

¹⁸⁵ Տե՛ս **Ասողիկ**, էջ 756, «Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահնի քթօթուկը)», աշխատասիրութեամբ՝ Պ. Մուրադեանի, Ս. Էջմիածին, 2007, էջ 66, **Մատթէոս Ուռնայեցի**, ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 19:

¹⁸⁶ Տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, էջ 88: Տե՛ս նաև **Ա. Տեր-Ղևոնդյան**, Հաղբատի հայերեն արձանագրությունը և Բագրատունի թագավորների տիտղոսները, «ԼՀԳ», 1979, № 1, էջ 73-80:

¹⁸⁷ Տե՛ս «Դիվանի հայ վիմագրության», պրակ I, Անի քաղաք, կազմեց Հ. Ա. Օրբելի, Ե., 1966, էջ 35, 48:

¹⁸⁸ Տե՛ս «Քարթլիի մատյան», էջ 74:

¹⁸⁹ Տե՛ս **Կոստանդին Ծիրանածին**, էջ 7, 11, 151:

¹⁹⁰ Տե՛ս **В. Степаненко**, Политическая обстановка в Закавказье в первой половине XI в., с. 44.

¹⁹¹ Տե՛ս **С. Stephenson**, Mediaeval Feudalism, Cornell University Press, New York, 1965, pp. 75-78, 92-94. Տե՛ս նաև **Ռ. Մաթևոսյան**, Վասալա-սյուզերենական հարաբերությունները Բագրատունյաց Հայաստանում X-XI դդ.,

կերպափոխումն իր արտահայտությունը գտավ նաև այդ թագավորության տիրակալի տիտղոսի փոփոխության մեջ:

Կոստանդնուպոլսից վերադարձած Աշոտ Երկաթը, փաստորեն, ըստ հարկի գնահատեց իրադրությունը և հաշվի առնելով այլ թագավորների առկայությունը՝ պայքար մղեց գերագահության, արքայից արքա ճանաչվելու համար: Ի դեպ, կերպափոխման գործընթացը սկիզբ էր առել դեռևս Սմբատ Ա-ի ժամանակներից, երբ վերջինս համապատասխանաբար 894 և 899 թթ. թագադրեց Աղվանից և Կղարջքի իշխաններին¹⁹²: Այն ժամանակ հզորությունն ու այլ թագավորների վրա գերիշխելը Հայոց տիրակալին հնարավորություն տվեցին հռչակվելու «տիեզերակալ»¹⁹³, իսկ այժմ նույն իրավիճակը, հազեցած առավել կենտրոնախույս միտումներով, հանգեցրեց Բագրատունի գահակալի՝ «արքայից արքա» հռչակվելուն:

«ԼՀԳ», 1977, № 10, էջ 46-54, **նույնի՝** Հայոց թագավորության պետական կառուցվածքն ըստ Մատթեոս Ուռհայեցու վկայությունների, «ԼՀԳ», 1980, № 8, էջ 65-68:

¹⁹² Տե՛ս **Ա. Եղիազարյան**, Հայոց Սմբատ Ա Բագրատունի թագավորի կողմից Աղվանից և Կղարջքի իշխանների թագադրության հարցի շուրջ, «Բանբեր Երևանի Համալսարանի» (այսուհետ՝ «ԲԵՀ»), «Հայագիտություն», 2011, № 135.1, էջ 16-25:

¹⁹³ Այդ իրողությունն իր արտացոլումն է գտել նաև վրացական աղբյուրում: Տե՛ս «Քարթլիի մատյան», էջ 66:

2.2. Աշոտ Երկաթի վերադարձը Կոստանդնուպոլսից և ազատագրական նոր կոիվները

Աշոտ Երկաթը Բյուզանդիայում մնաց շուրջ 10 ամիս: Հովհաննես Դրասխանակերտցին հիշատակում է, որ մեկնել էր Տարոն¹⁹⁴, որտեղից Աշոտ Երկաթի և Թեոդորոս Վասիլիկոսի՝ Կոստանդնուպոլիս մեկնելուց անմիջապես հետո գնացել Դերջան և այնտեղ մնացել «ամսարեայ աուրս ինչ»¹⁹⁵, այսինքն՝ շուրջ մեկ ամիս: Այնտեղից կաթողիկոսը մեկնում է Թորդան գյուղը և շուրջ ինը ամիս («ամիսս իբրեւ ինն») անցկացնում գյուղի մերձակա լեռնալանջին գտնվող մենաստանում¹⁹⁶:

Այդ ընթացքում Յուսուֆը հարձակումներ իրականացրեց Վասպուրականի ուղղությամբ՝ հասնելով Մարդաստան և Տոսպ գավառները: Պատմիչը հիշատակում է, որ մոտ երկու ամիս տևող ասպատակություններից հետո Յուսուֆի զորքը հեռացավ Ատրպատական¹⁹⁷: Աշոտ սպարապետը, որ նախկինում հարել էր Յուսուֆին, այժմ միայն ստիպողաբար էր մնում նրա ճամբարում, քանի որ Յուսուֆը կանխագգացել էր Աշոտ սպարապետի՝ իրեն լքելու նպատակը և նրա մորն ու երկու քույրերին պատանդ վերցրել¹⁹⁸: Իսկ Յուսուֆի հեռանալուց հետո Գագիկ Արծրունին և իրենց տիրույթներից հարկադրաբար հեռացած իշխանները վերադառնում են¹⁹⁹: Միննույն ժամանակ, Յուսուֆի ասպատակությունների լուրը ստանալով՝ 916 թ. Կոստանդնուպոլսից բյուզանդական օգնական բանակով վերադառնում է Աշոտ Երկաթը²⁰⁰:

Հովհաննես Դրասխանակերտցին գրում է, որ Աշոտ Երկաթը Կոստանդնուպոլսից «չուեալ, երթեալ, անցեալ զբազում արթեանաւք, եւ եկեալ հասեալ յաշխարհ իւր, զբազումս նուաճեալ ի հնա-

¹⁹⁴ Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 524-525:

¹⁹⁵ Նույն տեղում, էջ 533:

¹⁹⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 535:

¹⁹⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 535-537:

¹⁹⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 537:

¹⁹⁹ Տե՛ս նույն տեղում:

²⁰⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 537-538:

զանդութիւն ինքեան կացուցանէր»²⁰¹: Ըստ պատմիչի՝ նա «ի բագմաց նորընծայ իմն հիւրամեծարութեան ակն կալեալ, սպասէր»²⁰², ասել է՝ անմիջապէս չանցնելով վճռական գործողութիւնների, այլ սպասելով իշխանների արծագանքին: Շատերն ընդունեցին Աշոտ Երկաթի իշխանությունը: Իսկ Կողբ մեծ դաստակերտն ընդդիմացավ և դիմագրավեց վերադարձած թագավորին, ուստի՝ Աշոտ Երկաթն այն «ի գերութիւն յունականացն ... մատնէր»²⁰³: Պարզ է, որ կողբեցիները գերեվարվել են Աշոտ Երկաթին ուղեկցող բյուզանդական զորքի կողմից: Հայտնի է, որ Կողբը պատկանում էր Սմբատ Ա թագավորի եղբայր Շապուհի որդի Աշոտ սպարապետին²⁰⁴, որով էլ պետք է բացատրել կողբեցիների՝ Աշոտ Երկաթին չինագանդվելը: Օգտագործելով այդ իրողությունը և երկրում երկպառակություն սերմանելու համար Յուսուֆն Աշոտ սպարապետին թագադրում է²⁰⁵ և ուղարկում Հայաստան: Աշոտ Շապուհյանը գալիս և տեղավորվում է Դվինում: Նա տեսավ, որ «սիրելի դաստակերտն իւր վանեալ վարատեալ եւ գերեալ յարքայորդւոյն Աշոտոյ եւ ի Հռովմայական գաւրացն, եւ զայլս եւս զգերդաստանս նորա եւ զգեալս յաւարի առեալ», ուստի սկսեց պատերազմել Աշոտ Երկաթի դեմ²⁰⁶: Աշոտ Երկաթի կողմն են անցնում Սյունյաց իշխանները, ու պայքարը խիստ թեժանում է: Վերադառնում է կաթողիկոսը և հասնում նրան, որ հակառակորդները զինադադար հաստատեն²⁰⁷:

²⁰¹ Նույն տեղում, էջ 538:

²⁰² Նույն տեղում:

²⁰³ Նույն տեղում:

²⁰⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 478, 538:

²⁰⁵ Ըստ աղբյուրներից մեկում պահպանված եզակի տեղեկության՝ Աշոտ Շապուհյանը «թագավորել» է 18 տարի. «*զԱշոտ, որդի Շապուհոյ, եղբոր Սմբատայ, կացուցանէ (Յուսուֆը) ի տեղւոջ Սմբատայ, որ թագաւորեաց Հայոց ամս ԺԸ (18)*»: «Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ.», հ. II, էջ 501: Եթե Աշոտ Շապուհյանի թագավորությունը հաշվարկենք 916 թվականից, երբ Աշոտ Երկաթի՝ Կոստանդնուպոլսից վերադառնալու ժամանակ Յուսուֆը նրան հռչակեց Հայոց թագավոր, ապա կստացվի, որ նա վախճանվել է 934 թ.:

²⁰⁶ Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 538:

²⁰⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 538-539:

Ենթարկելով Հայաստանի կենտրոնական հատվածը՝ Աշոտ Երկաթը մեկնում է Գուգարք: Տեղի Շամշուղե ամրոցի, որը Սմբատ Ա-ի օրոք վերածվել էր արքունի տիրույթի [«սեպհականացուցեալ էր իւր (իմա՝ Սմբատ Ա-ին)»], բերդապահները Սմբատ Ա-ի կողմից նշանակված Գնթունի Վասակ և Աշոտ եղբայրներն էին, որոնք միևնույն ժամանակ ամրոցի շրջակա նահանգի վերակացուներն էին: Աշոտ Երկաթը նրանցից պահանջեց հնազանդվել իրեն: Գնթունիները, օգտվելով նրանից, որ Աշոտ Երկաթն իր զորքն արծակել էր ու իր եղբայր Աբասի հետ միայն 250 զինվորներով բանակել Սակուրեթ ամրոցի մոտակայքում, զորք են հավաքում, օգնության ստանում Տփղիսից (իմա՝ Տփղիսի արաբներից) և Կովկասի լեռնականներից («զսպայազաւրսն Տփխեաց եւ զծործորոցն Կովկասու») ու չորս հազար զինվորներով գրոհում Աշոտ Երկաթի ճամբարի վրա: Հայոց թագավորը չերկնչեց: Իր փոքրաքանակ զորքն արագ մարտական վիճակի բերելով՝ նա այն գրոհի տարավ: Հակառակորդը պարտություն կրեց: Ըստ պատմիչի՝ Աշոտ Երկաթը գերի ընկած արաբների մի մասին սպանել, մյուսների քթերն ու ականջները կտրել տվեց, իսկ քրիստոնյաներին ազատ արձակեց՝ խլելով ունեցածը («կապուտ կողոպուտ արարեալ զնոսա»): Միայն Վասակ Գնթունուն հաջողվեց մի խումբ զինվորներով փրկվել ու ապաստանել Շամշուղեում: Այստեղից Աշոտ Երկաթն ու Աբասը մեկնում են Վրաց իշխան Գուրգենի տիրույթները²⁰⁸:

Աշոտ Երկաթի նոր հաջողությունները հնարավորություն են տալիս Սյունյաց իշխաններին՝ վերահաստատելու իրենց իշխանությունները: Սևանա լճի շրջակայքն ընդգրկող իրենց տիրույթները վերականգնում են նաև Սյունյաց Հայկազուն իշխաններ Սահակն ու Վասակը²⁰⁹:

Հարկ է նշել, որ բյուզանդական զորքը, որն Աշոտ Երկաթին ուղեկցել էր Հայաստան, Գուգարքում տեղի ունեցող դեպքերի ժամանակ արդեն նրա հետ չէր: Կարելի է կարծել, որ Գուգարքի դեպքերը տեղի են ունեցել արդեն 917 թ.՝ Աշոտ Երկաթի վերադարձից

²⁰⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 539-540:

²⁰⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 540-541:

մեկ տարի անց, երբ նրան օգնության համար տրամադրված բյուզանդական բանակը կատարելով իր դերը՝ հետ էր վերադարձել:

Աշոտ Երկաթին հանգիստ չէր տալիս Աշոտ Շապուհյանի ներկայությունը Երկրում: Օգտվելով այն բանից, որ չնայած հաշտության պայմաններին՝ վերջինս յուրացրել էր Վաղարշապատի շրջակա ավաններն ու ագարակները՝ Աշոտ Երկաթը հարձակում գործեց Վաղավերն գյուղում գտնվող հակառակորդի վրա: Աշոտ Շապուհյանը ծանր պարտություն կրեց և նահանջեց Դվին, իսկ Աշոտ Երկաթը հաստատվեց Վաղարշապատում: Կաթողիկոսը գալիս և իր խոսքով՝ հանդիմանում է Աշոտ Երկաթին՝ «դժոխությունների» պատճառով: Սակայն կաթողիկոսի առաքելությունն իզուր անցավ, և հակառակորդները պատերազմեցին «երկեամ մի»²¹⁰, այսինքն՝ երկու տարի: Պետք է կարծել, որ պատերազմի այդ երկու տարիները վերաբերում են նրանց միջև առձակատման ողջ տևողությանը: Եթե Աշոտ Երկաթի վերադարձի և Աշոտ Շապուհյանի թագադրության 916 թվականին հավելենք նշված պատերազմների երկամյա տևողությունը՝ կհասնենք 918 թ.:

Փաստորեն, 918 թ. է թվագրվում նաև Աշոտ Երկաթի՝ Ուտիք մեկնելն ու Սահակ Սևադա իշխանի դստեր հետ ամուսնությունը, որի ժամանակ նրան են բերում Յուսուֆի ուղարկած թագն ու ընծաները: Աշոտ Երկաթն ընդունեց թագն ու Յուսուֆին փախադարձաբար ընծաներ ուղարկեց²¹¹: Ակնհայտ է, որ Յուսուֆն ի վերջո հակվեց Աշոտ Երկաթի կողմը: Վերջինս էլ, չնայած անհաշտ թշնամանքին, հարկ համարեց ընդունել թագը, քանի որ Յուսուֆի արարքը նշան էր այն բանի, որ նա այլևս Աշոտ Շապուհյանին չէր հովանավորում²¹²: Այդ իրադարձությունն ավելի ուշ՝ 919 թ. տեղի ունենալ չէր կարող: Այն ժամանակ Յուսուֆը նման հնարավորություն արդեն չուներ, քանի որ, ինչպես կտեսնենք, նա ձերբակալվել ու աքսորվել էր:

²¹⁰ Նույն տեղում, էջ 541-542:

²¹¹ Տե՛ս նույն տեղում, էջ 542:

²¹² Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան**, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, էջ 133:

Ասվածի ապացույցն է այն, որ դրանից անմիջապես հետո իր հետ վերցնելով իր աներ Սահակ Սևադա իշխանին՝ Աշոտ Երկաթն արշավեց Դվինում ամրացած Աշոտ Շապուհյանի դեմ: Դվինի դարպասների մոտ տեղի ունեցած ճակատամարտում Աշոտ Երկաթի բանակը Սահակ Սևադայի որդի Գրիգորի պատճառով պարտություն կրեց, իսկ արքան նահանջեց Վրաց իշխան Գուրգենի տիրույթները: Նրանից օգնական զորք վերցնելով՝ նա վերադարձավ Վաղարշապատ: Այս անգամ ազդեցին կաթողիկոսի հորդորները, և հակառակորդները դարձյալ զինադադար հաստատեցին²¹³:

Ամենայն հավանականությամբ, Աշոտ Երկաթին նոր պատերազմից հետ պահողը Հայոց Արևելից կողմերում տեղի ունեցող իրադարձություններն էին: Ուտիքում Աշոտ Երկաթը նախկինում իշխան ու հրամանատար էր կարգել Մովսես անունով մեկին, որն այժմ ապստամբություն էր բարձրացրել: Աշոտ Երկաթին օգնության եկավ Կախքի քորեպիսկոպոսն իր զորքով: Վերստին հնազանդվելու հորդորները Մովսեսը մերժեց, որից հետո Աշոտ Երկաթի զորքը Սահակ Սևադայի զորաջոկատների աջակցությամբ անցավ գրոհի: Մովսեսի զորքը ջախջախվեց, իսկ ինքը՝ Մովսեսը, փախուստի դիմեց Սյունիք: Մինչ Աշոտ Երկաթը հնազանդեցնում էր Ուտիքը, Մովսեսը Սյունիքից փորձեց անցնել Կախք՝ քորեպիսկոպոսի հետ միաբանելու: Աշոտ Երկաթի զինվորները հետապնդեց նրան, գերի վերցրեցին և արքայի հրամանով կուրացրեցին²¹⁴:

Եթե ընդհանուր առմամբ փորձենք ի մի բերել Աշոտ Երկաթի գործունեության աշխարհագրական շրջանակները 916-918 թթ., ապա կարող ենք արձանագրել, որ այն ընդգրկում էր Այրարատը (բացառությամբ հարավային Մասյացոտն, Ծաղկոտն և Կոզովիտ գավառների, որոնց 914 թ. տիրացել էր Գագիկ Արծրունին²¹⁵, ինչպես նաև Ճակատք գավառի՝ Կողբ դաստակերտով, որը պատկանում էր Աշոտ Շապուհյանին), արևելյան Գուգարքը, Հայոց Արևելից կողմերն ու Սյունյաց իշխանությունները: Վերջինիս վկայությունն է,

²¹³ Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 542-543:

²¹⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 543-544:

²¹⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 560-561, **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 282:

թերևս, հայկական անանուն ժամանակագրություններից մեկում պահպանված այն տեղեկությունը, ըստ որի՝ Սմբատ Ա-ի մահից հետո, երբ սկսեց թագավորել Աշոտ Բ-ն, «**իշխէին Բագրատունիք Շիրակայ և Այրարատու մինչ ի Գեղամ (իմա՝ Գեղամա ծով - Ա. Ե.) և մինչ ի Յուխտիսն (իմա՝ Ուղթիքը կամ Ուղթիսը Տայքում - Ա. Ե.) և մինչ ի Կարին և մինչ ի սահմանս Վասպուրականի և մինչ ի Ջորոցգետն և մինչ ի Գարդման և Սիւնիս կտրեալ էր ի նոցանէ**»²¹⁶։ Նշվածը ցույց է տալիս, որ Աշոտ Երկաթի տիրապետությունը տարածվում էր նաև Տայքի զգալի մասի վրա։ Ինչ վերաբերում է Տուրուբերանին, ապա հայտնի է, որ դեռևս Սմբատ Ա թագավորի օրոք Տուրուբերանում ընդարձակ տարածքների տիրող կայսիկներից ազատագրվել և արքունի տիրույթներին էին կցվել Տուրուբերանի Մարդաղի, Կորո ձոր (Կորի), Հարք և Աղիովիտ գավառները, Ապահունիքի մեծ մասը, ինչպես նաև Արձեշ, Արծկե և Խլաթ քաղաքները²¹⁷։ Խնդրո առարկա շրջանում հայկական սկզբնաղբյուրներում տեղեկությունների սղության պատճառով դժվար է հստակություն մտցնել այդ գավառների հետագա պատկանելիության հարցում։ Այս պարագայում առաջին պլանում Կոստանդին Ծիրանածնի աշխատությունն է, որտեղ արժեքավոր տեղեկություններ են պահպանվել։ Ըստ հեղինակի՝ այդ գավառներն ու քաղաքներն Աշոտ Երկաթի օրոք ևս գտնվում էին Հայոց թագավորի «գերիշխանության և տիրապետության» ներքո²¹⁸։ Հայկական աղբյուրներում խնդրո առարկա ժամանակահատվածում այդ գավառների չիիշա-

²¹⁶ «Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ.», հ. I, էջ 384: Տե՛ս նաև **Ստեփաննոս Օրբելյան**, էջ 300: Սյունիքի՝ Բագրատունյաց թագավորությունից բաժանված լինելու հիշատակությունն ավելի ուշ շրջանի իրողությունների արձանագրությունն է, երբ այն հանդես էլ գալիս որպես թագավորություն:

²¹⁷ Տե՛ս «Պատմութիւն Անանուն Զրուցագրի» (կարծեցեալ Շապուհ Բագրատունի), թարգմանությունը գրաբարից, առաջաբանն ու ծանոթագրությունները Մ. Հ. Դարբինյան-Մելիքյանի, Ե., 1971, էջ 159-161, **Կոստանդին Ծիրանածին**, էջ 10-11: Տե՛ս նաև **Ա. Եղիազարյան**, Հայ Բագրատունիների տերությունը (885-908 թթ.). պատմաաշխարհագրական ուսումնասիրություն, Ե., 2011, էջ 107-111:

²¹⁸ Տե՛ս **Կոստանդին Ծիրանածին**, էջ 10-11:

տակվելու պատճառն այն էր, որ երկրի հիմնական զարգացումները շրջանցում էին դրանց:

Այլ էր Աղծնիքի հյուսիսը, Տուրուբերանի արևմուտքը և Ծովքի ու Բարձր Հայքի արևմտյան գավառներն ընդգրկող Տարոնի իշխանության²¹⁹ պարագան, որն այդ պատմափուլում, երբ Հայաստանի կենտրոնական և արևելյան հատվածները ենթարկվում էին ավերածությունների, գոյատևում էր ինքնուրույնաբար՝ օրըստօրե սերտացնելով հարաբերությունները Բյուզանդիայի հետ²²⁰: Սակայն Տարոնի իշխանությունը սերտ կապեր էր պահպանում նաև Հայաստանի կենտրոնական շրջանների հետ: 915 թ. Տարոնում որոշ ժամանակով հաստատվել էր Հովհաննես Դրասխանակերտցին: Նա գրում է, որ «**չուեցի գնացի յաշխարհն Տարաւոյ եւ անդ ի մերձաւորաց իմոց իշխանաց եւ ժողովրդոց գտեալ միխթարութիւն տառապանաց վշտաց իմոց, արժարժեցաւ յիս հոգի իմ**»²²¹: Այս տեղեկությունը ցույց է տալիս, որ թեև Տարոնում ակնհայտ պատճառներով թուլացել էր Բագրատունյաց կենտրոնական իշխանության ազդեցությունը, սակայն Հայոց եկեղեցու և հովվապետի հոգևոր իշխանությունը շարունակում էր ամբողջությամբ պահպանվել թե՛ իշխանների և թե՛ ժողովրդի մեջ:

Վերադառնալով դեպքերի լուսաբանմանը Ուտիքում ելույթի ճնշումից հետո՝ նշենք, որ այդ ժամանակ խռովություն էր հասունանում նաև արքայական ընտանիքում:

Ուտիքից Աշոտ Երկաթը վերադարձավ Շիրակ և իր մոտ հրավիրեց իր եղբայր Աբասին ու նրա աներ՝ Վրաց իշխան Գուրգենին: Արքան նրանց մեծ պատիվների արժանացրեց: Հովհաննես Դրասխանակերտցին հաղորդում է, որ վերջիններս դավադրություն էին կազմակերպել Աշոտ Երկաթի դեմ, և անմիջապես հավելում, թե Աշոտ Երկաթն Աբասին մինչ այդ իշխանաց իշխան (պաշտոնի ամ-

²¹⁹ Տե՛ս **Գ. Գրիգորյան**, Տարոնի Բագրատունիների ֆեոդալական իշխանությունը IX-X դարերում, Ե., 1983, էջ 63-65, **Ա. Եղիազարյան**, Տարոնի Բագրատունիների իշխանությունը IX դարում և X դարի սկզբին, «ԲԵՀ», 2009, № 1, էջ 74-85:

²²⁰ Տե՛ս **Կոստանդին Ծիրանածին**, էջ 4-10:

²²¹ **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 524:

բողջական անվանումն էր «իշխանաց իշխան Հայոց»-ը²²²) էր կարգել²²³։ Հայտնի է, որ Բագրատունի առաջին արքաների օրոք այդ պաշտոնը վարում էին արքայական ընտանիքի այն անդամները, որոնց անցնելու էր գահը²²⁴։ Այստեղ հարց է ծագում։ Եթե Աշոտ Երկաթը, փաստորեն, Աբասին կարգել էր գահաժառանգ, ապա ինչու՞ էր Աբասը դավադրություն կազմակերպում նրա դեմ։ Ն. Ադոնցը հակված է կարծելու, որ դրա պատճառը Աշոտ Երկաթի կողմից Յուսուֆի հետ հարաբերությունների մեջ մտնելն էր²²⁵։ Սակայն այստեղ, ամենայն հավանականությամբ, եղել է այլ, ավելի շահադիտական պատճառ։ Պատահական չէ, որ պատմիչը միաժամանակ է հաղորդում թե՛ դավադրության և թե՛ Աբասի՝ իշխանաց իշխան հանդիսանալու մասին՝ կարծես ակնարկելով գահաժառանգման հետ կապված խնդրի մասին։ Պետք է հիշել, որ Աբասին Աշոտ Երկաթն իշխանաց իշխան էր կարգել նախքան Սահակ Սևադայի դստեր հետ ամուսնությունը, երբ ժառանգ չունեի, բայց այժմ, երբ արքան ամուսնացել էր, կարող էր որդի ունենալ, ուստի՝ դրանով կվտանգվեր Աբասի գահաժառանգության իրավունքը։

Աշոտ Երկաթը Երազգավորսում կարողացավ փրկվել դավադրական մահից ու իր հետ վերցնելով Աբասի որդուն՝ հեռանալ Ուտիք²²⁶։

Այդպիսով՝ Աշոտ Երկաթի համար բացվեց պայքարի նոր ուղիություն ներքին ճակատում։

Միևնույն ժամանակ, կարևոր զարգացումներ էին տեղի ունենում Հայաստանի շուրջ։ Յուսուֆը պատերազմում էր խալիֆի զորքերի դեմ։ Ըստ Հովհաննես Դրասխանակերտցու՝ դեռ նախքան Յուսուֆի ձերբակալվելը Խալիֆայության զորքերի կողմից (919 թ.) խալիֆը՝ որպես ոստիկան, Հայաստան է առաքում ոմն Փարկինիի, ով Գագիկ Արծրունուն երրորդ անգամ կարգում է թագավոր «ի

²²² Տե՛ս Ա. Եղիազարյան, Հայոց իշխանաց իշխանը Բագրատունի առաջին արքաների օրոք, էջ 62-74։

²²³ Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 544։

²²⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 544։

²²⁵ Տե՛ս Ն. Ադոնց, Երկեր, հ. Ե, էջ 206։

²²⁶ Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 544-545։

վերայ Հայաստանեայցս»: Այդ լուրը Յուսուֆն ընդունում է մեծ դժկամությամբ²²⁷:

Սակայն Իբն ալ-Ասիրի տեղեկությունները ցույց են տալիս, որ Փարկինին, որ նույն ինքը Մուհամմադ իբն Ուբայդալլահ ալ-Ֆարիկին է, Ատրպատականի կառավարիչ է նշանակվել Յուսուֆի ձերբակալությունից հետո՝ 919 թ., և ուղարկվել՝ մարտնչելու Յուսուֆից հետո նրա տերության գլուխ կանգնած Սուբուք ամիրի (հայերեն՝ Սբուք) դեմ²²⁸: 919 թ. Սբուքը պարտության մատնեց հակառակորդին և դիմեց խալիֆին՝ իրեն նշանակելու Ատրպատականի կառավարիչ: Խալիֆը համաձայնեց²²⁹: Կարելի է կարծել, որ այս իրադարձություններից մի քանի տարի անց դրանք նկարագրած կաթողիկոս պատմիչը շփոթել է դեպքերի ժամանակագրական հերթականությունը, ուստի՝ պետք է կարծել, որ Գագիկ Արծրունու թագստանալը Փարկինիից հարուցել է ոչ թե Յուսուֆի, որն այդ ժամանակ բանտում էր, այլ Սբուքի դժգոհությունը, որի հետ որոշ ժամանակ անց Գագիկ Արծրունին կարողացավ հաշտվել²³⁰: Սբուքի համար, սակայն, Հայաստանում գլխավորն Աշոտ Երկաթն էր, որին նա, ինչպես կոտեսները, հռչակեց շահնշահ²³¹:

Յուսուֆի ձերբակալության հետ կապված հաղորդմամբ ընդմիջարկելով 918 թ. վերաբերող տեղեկությունները՝ Հովհաննես Դրասխանակերտցին դարձյալ վերադառնում է այդ թվականի դեպքերի նկարագրությանը: Ըստ նրա՝ այդ ժամանակ Սահակ Սևադան ականջ դնելով չարականներին՝ թշնամանում է Աշոտ Երկաթի դեմ: Հաջորդ տեղեկությունն արդեն վերաբերում է 919 թ.: Չմեռն անցնելուն պես նրանք զորք են հավաքում պատերազմելու նպատակով, բայց հաշտվում իշխանների միջամտությամբ²³²:

²²⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 545-546:

²²⁸ Տե՛ս *Ibn-el-Athiri Chronicon quod perfectissimum inscribitur*, ed. C. J. Tornberg, vol. VIII, Lugduni Batavorum, 1862, p. 76.

²²⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 76-77:

²³⁰ Տե՛ս *Հովհաննես Դրասխանակերտցի*, էջ 551:

²³¹ Տե՛ս նույն տեղում:

²³² Տե՛ս նույն տեղում, էջ 546:

Հաշտվելով Սահակ Սևադայի հետ՝ Աշոտ Երկաթն արշավեց Դվին: Նա «հնազանդեցուցանէր զամբարտաւան եւ զքիրտ ապստամբութիւն նոցա ընդ լծով ծառայութեան իւրոյ»²³³: Այնուհետև, «թագաւորն Աշոտ իբրեւ կամակատարս զԴվին քաղաք իւր պատրաստեաց»²³⁴: Փաստորեն, Հայոց հինավուրց մայրաքաղաք Դվինն ազատագրվեց արաբական գերիշխանությունից և ենթարկվեց Հայոց թագավորին 919 թ.:

Դվինի գրավումից հետո, դատելով Հովհաննես Դրասխանակերտցու հետագա տեղեկություններից, այնտեղից հեռացավ Աշոտ Շապուհյանը՝ հաստատվելով Բագարանում²³⁵:

Դվինից Աշոտ Երկաթը դարձյալ մեկնեց Գուգարք՝ պատժելու Վրաց իշխան Գուրգենին: Իր հետ վերցնելով Վրաց թագավոր Ատորներսեհին՝ արքան արշավեց նրա դեմ: Վերջինիս օգնության են շտապում Աբասն ու Աշոտ Շապուհյանը²³⁶: Հայտնի է, որ Աբասը փեսայացել էր Վրաց իշխան Գուրգենին²³⁷: Ըստ Հովհաննես Դրասխանակերտցու՝ նույն կարգավիճակն ուներ նաև Աշոտ Շապուհյանը²³⁸: Փաստորեն, կարելի է արձանագրել, որ Վրաց իշխան Գուրգենը իր երկու փեսաների միջոցով, որոնք երկուսն էլ ունեին Հայոց գահին տիրելու նկրտումներ, կարողացավ լրջորեն վտանգել Հայոց թագավորության ներքին անվտանգությունը, անկասկած, հետապնդելով հեռուն գնացող նպատակներ, որոնք առնչվում էին Շամշուղե ամրոցին և շրջակա գավառին տիրելուն: Այդ պահի դրությամբ համընկել էին Աբասի և Աշոտ Շապուհյանի շահերը, բայց միայն կարճ ժամանակով, քանի որ հեռանկարում Հայոց գահին բազմել կարող էր նրանցից միայն մեկը:

Աշոտ Երկաթի ու Ատորներսեհի զորքի առաջ թշնամիները նահանջում են և սկսում աստիճանաբար տեղի տալ ու մտածել

²³³ Տե՛ս նույն տեղում:

²³⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 547:

²³⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 554:

²³⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 547-548:

²³⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 544:

²³⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 545: Տե՛ս նաև Ստեփաննոս Օրբելյան, էջ 195:

հանձնվելու մասին²³⁹: Այդ ժամանակ լուր է հասնում Սահակ Սևադայի կողմից կատարված անօրենությունների մասին: Այս անգամ Սահակ Սևադայի գորքը ներխուժել էր Ուտի, իսկ այնուհետև՝ Ձորոփոր գավառները, բնակչությանը գաղթեցրել իր տիրույթները, իսկ ինքը՝ ամրացել էր Տավուշի ծորի արևմտյան լեռնակի ծործորներում: Աշոտ Երկաթը շտապ վերադառնում է և հասնում Ձորոփոր գավառը: Այստեղ նա լուր է ստանում, որ Սահակ Սևադայի գորքը գրավել է Կայան բերդն ու ազատել այնտեղ բանտարկված Գեղարքունիքի իշխան Վասակին, որին Աշոտ Երկաթը մեղադրել էր Աշոտ Շապուհյանի հետ գործակցելու համար և հրամայել ձերբակալել ու փակել այդ բերդում՝ զրկելով նաև սեփական տիրույթներից²⁴⁰: Արքայի հաշտության առաջարկը Սահակ Սևադան մերժում է, որից հետո նրա ութ հազարանոց բանակի վրա արքան հանկարծակի հարձակում է գործում 200 հեծյալներով: Աշոտ Երկաթի առջևից տանում էին այն խաչը, «զոր սովորն էր միշտ առաջի իւր շրջեցուցանել»²⁴¹: Հակառակորդը ջախջախիչ պարտություն է կրում: Գերի ընկած Սահակ Սևադային ու նրա որդի Գրիգորին արքայի հրամանով կուրացնում են, իսկ նրանց տիրույթները՝ ռազմակալում: Հովհաննես Դրասխանակերտցին հաղորդում է, որ «ամրոցն առ հասարակ զԳարդմանայ թագաւորն յինքն գրաւեալ եւ զբովանդակ աշխարհն յիւր անուն նուաճեալ՝ հնազանդէր»²⁴²: Փաստորեն, Գեղարքունիքն ու Գարդմանը կցվեցին արքունի տիրույթներին:

Վերջին իրադարձությունների նկարագրության ժամանակ Հովհաննես Դրասխանակերտցին գրում է, որ «փոքր ինչ յառաջ քան զայս ոստիկանն Յուսուփ ապստամբութեամբ բազմաւ ընդվզեալ յիսմայելեան ամիրապետէ», սակայն պարտվեց ու ձերբակալվեց, որով նրա սպառնալիքից փրկվեց Գագիկ թագավորը²⁴³: Կարելի է

²³⁹ Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 547-548:

²⁴⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 545, 547-549:

²⁴¹ Նույն տեղում, էջ 550:

²⁴² Նույն տեղում, էջ 549-550:

²⁴³ Տե՛ս նույն տեղում, էջ 551:

վստահաբար ասել, որ նշված իրադարձությունները թվագրվում են Յուսուֆի ծերբակալման 919 թվականով²⁴⁴:

Ի վերջո, ամփոփելով արդեն ասվածը, նշենք, որ այդ պատմափուլում Հայաստանում առկա երեք Հայոց թագավորներից իրադարձությունների կիզակետում միայն Աշոտ Երկաթն էր, որի տիրապետության տարբեր հատվածներում մերթնդմերթ տեղի էին ունենում խռովություններ և պատերազմներ: Առավել կայուն էր իրավիճակը Գագիկ Արծրունու տիրույթներում, իսկ Աշոտ Շապուհյանը, փաստորեն, սկզբում իր դիրքերը պահպանում էր միայն Խալիֆայության աջակցությամբ, իսկ հետո զրկվել էր դրանից ու հաստատվել Բագարանում: Ինչ վերաբերում է Աշոտ Երկաթի և Գագիկ Արծրունու հարաբերություններին, ապա պատմիչների տեղեկությունները հնարավորություն չեն տալիս գնահատելու դրանք: Հայտնի է, որ, ինչպես տեսանք, Գագիկ Արծրունին 914 թ. տիրացել էր Բագարատունիներին պատկանող՝ Այրարատի երեք գավառների՝ Ծաղկոտնին, Կոզովիտին ու Մասյացոտնին²⁴⁵: Աշոտ Երկաթի վերադարձից հետո այդ գավառների հետ կապված որևէ հակասություն կարծես չի ծագել, դրանք թերևս մնացել են Գագիկի իշխանության ներքո²⁴⁶, ինչը վկայում է, որ երկու գահակալներն այդ ժամանակ արդեն ունեին ավելի կարևոր խնդիր՝ պայքարը Յուսուֆի դեմ: Իսկ այդ պայքարը կերպափոխվել էր՝ իրականացվելով երկու կենտրոններով՝ Վասպուրականում և Այրարատում: Ի դեպ, վերջինում այն 916-918 թթ. մարմնավորված էր Աշոտ Երկաթի և Յուսուֆի հովանավորյալ Աշոտ Շապուհյանի միջև տեղի ունեցած հակամարտության մեջ: Աշոտ Երկաթի և Գագիկ Արծրունու միջև նույնիսկ դաշ-

²⁴⁴ Տե՛ս Ibn-el-Athir, 8, էջ 76-77: Տե՛ս նաև **А. Тер-Гевондян**, նշվ. աշխ., էջ 244:

²⁴⁵ Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 560-561, **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 282:

²⁴⁶ Մասնավորապես, Գագիկ Արծրունին 922 թ. Վասպուրականի զորքով և բնակիչներով ապաստանեց Ծաղկոտն և Կոզովիտ գավառներում: Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 559: Մյուս կողմից, Կոզովիտ գավառի Դարյունից բերդում, Գագիկ Արծրունին 930-ական թթ. պահում էր Դվինի մերձակայքում գերեվարված արաբներին: Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 294:

նակցային հարաբերություններ են ակնարկված որոշ աղբյուրներում, ըստ որոնց՝ «որդին Սմբատայ Աշոտ բազում ընթացութիւնս եւ քաջութիւնս ցուցանէր եւ պահէր զբոլոր ամրոցս տէրութեան հաւր իւրոյ ձեռնտուութեամբ ... թագաւորին Գագկայ Վանեցոյ»²⁴⁷: Որ դա հնարավոր էր, հիմնավորվում է այն իրողությամբ, որ, ինչպես տեսանք, Գագիկ Արծրունին փորձ էր կատարել հաշտվելու նաև Յուսուֆից պարտություն կրած Սմբատ Ա-ի հետ:

Չնայած ասվածին՝ նման իրավիճակում թե՛ Աշոտ Երկաթի, թե՛ Գագիկ Արծրունու համար ներքին «պայքար»-ը մղվում էր մյուս թագավորների նկատմամբ գերագահության հասնելու նպատակով: Եթե Բյուզանդիան ճանաչել էր Աշոտ Երկաթի գերագահությունը, ապա հարցականի տակ էր խալիֆայության դիրքորոշումը, որը դատելով վերո ասվածից՝ հակվում էր Գագիկ Արծրունու կողմը: Հենց այդ պատճառով խալիֆայության դեմ ապստամբած Յուսուֆը թագ ուղարկեց Աշոտ Երկաթին, իսկ վերջինս էլ՝ չնայած Յուսուֆի նկատմամբ ունեցած կատաղի ատելությանն ու թշնամանքին, ընդունեց այն: Իր կողմից խալիֆայությունը թագ ուղարկեց Գագիկ Արծրունուն Փարկինիի միջոցով:

²⁴⁷ Անանուն Զրուցագիր՝ կարծեցեալ Շապուհ Բագրատունի, էջ 186-192, Մխիթար Անեցի, էջ 116-117:

2.3. Աշոտ Երկաթի շահնշահության շրջանը

919 թ. ձերբակալված Յուսուֆի փոխարեն Ատրպատականին տիրած Սբուքն՝ ըստ Հովհաննես Դրասխանակերտցու, ոստիկան նշանակվեց «յետ սակաւ աւուրց»։ Նշանակվելուն պես նա խաղաղություն հաստատեց Աշոտ Երկաթի հետ՝ նրան հռչակելով շահնշահ²⁴⁸, այսինքն՝ գերագահ թագավոր երկրում գոյություն ունեցող այլ թագավորների նկատմամբ։ Մյուս կողմից, Սբուքը թշնամացավ Գագիկ Արծրունու դեմ, որը նրա մոտ ուղարկեց Գևորգ Հավնունուն՝ հաշտություն խնդրելու։ Սբուքը կատարեց նրա խնդրանքը²⁴⁹։ Սբուքի և Աշոտ Երկաթի միջև ձևավորված բարեկամական հարաբերություններն արդյունք էին այն բանի, որ Սբուքը թեև ստանձնել էր հարկատվական պարտականություն խալիֆի առաջ՝ Ատրպատականի կառավարիչ նշանակվելու դիմաց, բայց այդպես էլ չկատարեց իր պարտավորությունը²⁵⁰։ Նման պայմաններում համընկան Աշոտ Երկաթի և Սբուքի շահերը. Հայոց թագավորը բարեկամացավ նրա հետ, իսկ Ատրպատականի կառավարիչը նրան հռչակեց շահնշահ։

Ինչպես տեսանք, Յուսուֆը ձերբակալվել է 919 թ., ուստի դրանից «յետ սակաւ աւուրց» ոստիկան նշանակված Սբուքն Աշոտ Երկաթին շահնշահ կարող էր հռչակել հենց 919 թ.։ Մինչդեռ պատմագրության մեջ ընդունված է Աշոտ Երկաթի շահնշահ հռչակվելու 921 թվականը²⁵¹, որը հիմնված է երկու իրողությունների վրա։ Նախ, քանի որ Աշոտ Երկաթի մահն Ասողիկի կողմից թվագրված է

²⁴⁸ Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 551։

²⁴⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 551-552։

²⁵⁰ Տե՛ս Ibn-el-Athir, 8, էջ 76-77։

²⁵¹ Տե՛ս Մխիթար Այրիվանեցի, էջ 71, Սամուէլ Անեցի եւ շարունակողներ, Ժամանակագրութիւն (Ադամից մինչեւ 1776 թ.), աշխատասիրությամբ Կ. Մաթևոսյանի, Ե., 2014, էջ 172։ Տե՛ս նաև Ն. Աղոնց, Երկեր, հ. Ե, էջ 205-206, С. Еремян, Присоединение северо-западных областей Армении к Византии в XI веке, էջ 6 և այլն։ Մ. Չամչյանցը, Մ. Օրմանյանը և Կ. Թումանովը Աշոտ Երկաթի՝ շահնշահ հռչակվելը դնում են 922 թ.։ Տե՛ս Մ. Չամչյանց, նշվ. աշխ., էջ 793, Մ. Օրմանյան, § 724-725, С. Toumanoff, նշվ. աշխ., էջ 614։

հայոց 378 թվականով (929/930), իսկ նրա թագավորության տարիների քանակը՝ հավասարեցված է ութի («Աշոտ զկնի մահուան հաւր իւրոյ կեցեալ ամս ԺԵ (15) եւ թագաւորեալ ամս Ը (8), վախճանի յՅՀԸ (378/929-930) թուականին») ²⁵², թվաբանական պարզ հաշվարկը ցույց է տալիս գահակալության (այս պարագայում՝ շահնշահ հռչակվելու) 921 թ. (929-8=921): Այդ իսկ պատճառով 921 թվականը հեղինակների համար դարձել է այն մեկնակետը, որից սկսած Աշոտ Երկաթն իշխել է ութ տարի: 921 թվականը Աշոտ Երկաթի թագավորության սկիզբ համարելու տեսակետը կարծես բյուրեղանում է, երբ Սմբատ Ա-ի մահվան 914 թվականին գումարում ենք նախքան Աշոտ Երկաթի ութամյա գահակալությունը տեղ գտած անիշխանության յոթամյա տևողությունը ²⁵³ (914+7=921):

Սակայն նման մոտեցումներից ծագում են որոշ խնդիրներ: Ինչպես դիպուկ կերպով նկատել է Ն. Ադոնցը, Հովհաննես Դրասխանակերտցուց բացի այս շրջանի վերաբերյալ Ասողիկը որևէ այլ աղբյուր չի ունեցել, ուստի նշված յոթ տարիների մասին հիշատակության հիմքերը պետք է փնտրել հայոց կաթողիկոսի աշխատության մեջ ²⁵⁴: Այդ տարիների վերաբերյալ հիշատակությունը կարող էր կապված լինել Հովհաննես Դրասխանակերտցու կողմից հիշատակված՝ 909 թ. սկիզբ առած պատերազմների ու արհավիրքների ժամանակների հետ և վերաբերել 909-916 թթ. ժամանակաշրջանին: Այդ մասին, անմիջապես 914 թ. դեպքերը նկարագրելիս, Հովհաննես Դրասխանակերտցին գրում է. «հուրն կայծակնացայտ որ տեղեացն ի մեզ, եւ սուրն անողորմ պատերազմացն, որ միշտ ի մեզ բղխէր զհոտ մահու, մինչեւ **յեաւթն ամ** ձգեալ ընդերկարեցաւ» ²⁵⁵: Քանի որ ուշ շրջանի աղբյուրներում այդ յոթ տարիները հաշվարկվել են Սմբատ Ա-ի սպանությունից սկսած իբրև թե մինչև Աշոտ Երկաթի գահակալությունը, ապա դրանք համարվել են անիշխանության տարիներ: Ի դեպ, ավելորդ չէ նշել, որ պատմիչների նման

²⁵² Տե՛ս Ասողիկ, էջ 748:

²⁵³ Ասողիկից բացի նման կերպ են վարվել նաև այլ մատենագիրներ: Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 84:

²⁵⁴ Տե՛ս Ն. Ադոնց, Երկեր, հ. Ե, էջ 201:

²⁵⁵ Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 519:

մոտեցումները հակադրվել են Հովհաննես Դրասխանակերտցու այն տեղեկությանը, որ Աշոտ Երկաթը թագադրվել է ոչ թե 921 թ., այլ 914 թ.²⁵⁶:

Ճշգրտելով, որ անիշխանության յոթ տարիների վերաբերյալ ավելի ուշ շրջանի պատմիչների տեղեկությունները սնվում են Հովհաննես Դրասխանակերտցու՝ իրականում 909-916 թթ. վերաբերող հիշատակությունից, հարկ է նշել, որ այդ սխալի հետևանքով 916 թվականը, երբ Բյուզանդիան ճանաչեց Աշոտ Երկաթի թագավորությունը, այդպես էլ չդարձավ այն մեկնակետը, որից պետք էր հաշվարկել Աշոտ Երկաթի թագավորությունը: Խիստ հետաքրքրական է, որ բոլորովին այլ մտահանգման է եկել Վարդան վարդապետը: Ըստ նրա՝ «Աշոտ պսակեալ ի Լևոնէ դառնայ ի Հայս յերեքհարիւր եօթանասուն (921-922) թուին... կոչեցաւ... Շահնշահ, զամս ութ. կատարի, և ամնու զթագն Աբաս եղբայր նորա...և տիրէ ամենայն հայրենեաց իւրոց ամս քսան և ինն, յերեքհարիւր եօթանասուն և մի թուին (922-923)»²⁵⁷: Վարդան վարդապետը, փաստորեն, Աշոտ Երկաթի գահակալության ութ տարիները հաշվարկել է 914 թ. սկսած, ուստի ստացվում է, որ Հայոց թագավորը վախճանվել է հայոց 371 կամ 922 (914+8=922) թ.: Այն համոզումը, որ Հայոց գահին Աշոտ Երկաթին անմիջապես հաջորդել է Աբասը, Վարդան վարդապետին ստիպել է վերջինիս գահակալությունը հաշվարկել հայոց 371 թվականից, երբ ըստ նրա վախճանվել է Աշոտ Երկաթը, ուստի՝ ստացվել է, որ Աբասը գահակալել է 29 տարի՝ 922/923 թ. սկսած:

Ուստի՝ արձանագրենք, որ.

ա. պատերազմների (և ոչ թե անիշխանության) յոթ տարիները ընդգրկում են ոչ թե 914-921 թթ., այլ 909-916 թթ.,

բ. Աշոտ Երկաթը Կոստանդնուպոլսում է եղել ոչ թե 921 թ., այլ 916 թ.,

գ. նա շահնշահ է հռչակվել ոչ թե 921 թ., այլ 919 թ.:

²⁵⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 509:

²⁵⁷ Վարդան վարդապետ, էջ 87:

Նման իրավիճակում կարևոր է պարզել, թե ինչ մեկնակետից են հաշվարկվել Աշոտ Երկաթի գահակալության ութ տարիները, քանի որ ակնհայտորեն այդ մեկնակետը ո՛չ Աշոտ Երկաթի 914 թ. թագադրությունն էր, ո՛չ էլ Բյուզանդիայի կողմից 916 թ. ճանաչումը: Վերջին ամենահավանական մեկնակետը Աշոտ Երկաթի՝ շահնշահ հռչակվելու թվականն է: Իսկ պատմիչներից ոմանք Աշոտ Երկաթի շահնշահ հռչակվելը թվագրել են 921 թվականով: Վերջինս էլ «ընտրվել» է սխալմամբ, քանի որ սխալ մեկնակետից են հաշվարկվել անիշխանության յոթ տարիները: Փաստորեն տեղի է ունեցել հաշվարկի սխալ, և իրադարձությունները հարմարեցվել են այդ սխալ հաշվարկին: Իսկ քանի որ առկա է եղել այն համոզմունքը, որ Աշոտ Երկաթի թագավորության շրջանը պետք է սկսված լիներ շահնշահ հռչակվելուց հետո, այդ իրադարձությունը թվագրել են 921 թվականով: Արքայի վախճանի 929 թվականից հանելով 921-ը ստացվում է ութ տարի, հետևաբար նրան վերագրվել է հենց այդքան տևողությամբ գահակալություն:

Կարևորություն է ներկայացնում Աշոտ Երկաթի դարաշրջանի՝ 920-924 թթ. իրադարձությունների ժամանակագրության հստակեցումը, առավել ևս, որ այդ ժամանակահատվածը զգալի մանրամասնություններով ներկայացնում է Հովհաննես Դրասխանակերտցին:

Վերևում տեսանք, որ դեռևս 917 թ. Վասակ Գնթունին պարտվելով՝ փախուստի դիմեց և ամրացավ Շամշուլդե բերդում: Աշոտ Երկաթն ու Աբասը նրան չհետապնդեցին²⁵⁸: Այժմ արդեն, երբ թե՛ Վասակ Գնթունին, թե՛ Գուրգենը պարտություն էին կրել Աշոտ Երկաթից, Վասակ Գնթունու հաջորդ քայլը եղավ Շամշուլդեն Գուրգենին հանձնելը և նրա տիրույթներում գտնվող Կրուստ ամրոցը տեղափոխվելը²⁵⁹: Սակայն Շամշուլդե մեկնած Գուրգենին չհաջողվեց տիրանալ ամրոցին, քանի որ պահապանները հրաժարվեցին հանձնվել և հրավիրեցին Աշոտ Երկաթին: Վերջինս բանակով Շամշուլդե հասավ այն ժամանակ, երբ Գուրգենի զորքն արդեն կարողացել էր ներխուժել քաղաք: Աշոտ Երկաթին հայտնեցին, որ ամրո-

²⁵⁸ Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 539-540:

²⁵⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 552:

ցի պահապանները հանուն նրա են կռվում Գուրգենի դեմ, և Աշոտ Երկաթը պահանջեց իր առջև բացել ամրոցի դարպասները: Այնուհետև, Աշոտ Երկաթի բանակը գերի վերցրեց Գուրգենի զորքը, և բոլոր զինվորների քթերը և ականջները նրա հրամանով կտրեցին, իսկ հետո կուրացրեցին: «**Եւ այնուհետեւ ապա հիւսիսական ազգքն այնոքիկ ընդ ծեռամբ նորա** (իմա՝ Աշոտ Երկաթի - Ա. Ե.) **նուաճեալ հնազանդէին ի ծառայութիւն, եւ ըստ աջողակ այցելութեանն Աստուծոյ երթալով երթայր եւ զաւրանայր**»²⁶⁰: Այս իրադարձությունը տեղի է ունեցել, ամենայն հավանականությամբ, արդեն 920 թվականին:

Այնուհետև Աշոտ Երկաթը կրկին մեկնում է Ուտիք, որտեղ զորք է հավաքում, շարժվում Կոտայք և հրովարտակով իր մոտ հրավիրում Աշոտ Շապուհյանին՝ խաղաղություն հաստատելու առաջարկով: Վերջինս, ով սկզբում զրկվել էր Կողբից, իսկ այնուհետև՝ ստիպված հեռացել Դվինից, այժմ արդեն, փաստորեն, Կոտայքում էր հաստատվել: Հրովարտակը տեղ է հասցնում կաթողիկոսը, և նրանք երկուսով գալիս են Աշոտ Երկաթի մոտ: Թագավորները հաշտվում են, շարժվում Դվին և վերստին ազատագրում այն («**անդ զմոլորութիւն պաշտաւնէիցն հեթանոսաց յինքեանս գրաւեալ, ընդ ծեռամբ նուաճէին**»)²⁶¹:

Դվինից Աշոտ Երկաթը վերադառնում է Ուտիք: Ճանապարհին նա լուր է ստանում, որ ապստամբել է իր իսկ կողմից այդ շրջանում կառավարիչ (հրամանատար) նշանակված Յլիկ կոչվող Ամրամ իշխանը: Հովհաննես Դրասխանակերտցին հայտնում է, որ նա ցանկանում էր ընդունել Գամիրքի իշխանաց իշխան Գուրգենի իշխանությունը, որն իրականում մեզ քաջածանոթ Վրաց իշխան Գուրգենն է²⁶²: Հասնելով Ուտիք՝ Աշոտ Երկաթը տեսավ, որ այնտեղ բոլորը միացել են Յլիկ Ամրամի խռովությանը: Օգնություն

²⁶⁰ Նույն տեղում, էջ 553:

²⁶¹ Նույն տեղում, էջ 554:

²⁶² Հետաքրքիր է, որ Ն. Ադոնցը սրան նույնացնում է Բյուզանդիայի նշանավոր գորավար Հովհաննես Կուրկուասի հետ: Տե՛ս Ն. Ադոնց, Երկեր, հ. Ե, էջ 206-207:

ստանալու նպատակով նա մեկնեց Եգերաց (Աբխազաց) թագավորի մոտ: Վերջինս ոչ այլ ոք է, եթե ոչ Աշոտ Երկաթին քաջածանոթ Կոստանդին Գ թագավորը (893-922): Նա մեծաքանակ զորք տրամադրեց: Աշոտ Երկաթը եկավ Ուտիք, սակայն Ցլիկ Ամրամը խուսափեց ճակատամարտ տալուց և ամրացավ Կուր գետի առափնյա անտառներում, ուր իր զորքը մտցրեց նաև Աշոտ Երկաթը՝ հայտնըվելով ծուղակում: Նրա զորքը պաշարվեց: Որոշ զինվորներ թշնամուն լուր ուղարկեցին՝ առաջարկելով Աշոտ Երկաթին կապանքներով հանձնել նրան, միայն թե նա իրենց հնարավորություն տա հեռանալու: Աշոտ Երկաթն իմացավ այդ մասին և մի գիշեր գրեթե միայնակ ձեղքեց հակառակորդի շղթան ու դուրս եկավ պաշարումից: Նրա զորքը հանձնվեց հակառակորդին²⁶³: Այդ իրադարձությունը թվագրվում է 921 թվականով:

Հովհաննես Դրասխանակերտցին այստեղ հավելում է, թե «**եւ ապա յայնմ արեւ հետէ եւ անդր ոչ յաջողեցան հետեւանք արշաւանաց Աշոտի որպէս յերեկն եւ յեռանդն**»՝ դա վերագրելով այն բանին, որ իր գործունեության առաջին շրջանի ողջախոհությունը նա կորցրել էր, դարձել ամբարտաճան, ուստի՝ «**դատապարտեալ անկանէր, ոչ ժամանեալ ի կատարս փրկութեան իւրոյ**»²⁶⁴: Հետաքրքիր է այն, որ պատմիչը հստակորեն գրում է, որ այդ օրվանից Աշոտ Երկաթի արշավանքներն այլևս հաջողություն չեն ունեցել, այսինքն՝ կարծես տեղյակ է Հայոց թագավորի հետագա ճակատագրին: «**Դատապարտեալ անկանէր**»-ը և «**ոչ ժամանեալ ի կատարս փրկութեան իւրոյ**»-ը խիստ խոստուն արտահայտություններ են, որոնք շարադրված են դատաւճռի ձևով: Նա կարծես գիտի, որ Աշոտ Երկաթի համար ամեն ինչ ավարտված էր: Սակայն այստեղ պատմիչն այնքան էլ արդարացի չէ, քանի որ Ասողիկը, չնայած ծանոթ էր նրա աշխատությանը, այնուամենայնիվ, արձանագրել է, որ շահընշահ հռչակվելուց հետո Աշոտ Երկաթը «**հալածական առնէ գիսմայէլացւոց զաւրն յաշխարհէս Հայոց**»²⁶⁵, այսինքն՝ Աշոտ Եր-

²⁶³ Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 555-556:

²⁶⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 556-557:

²⁶⁵ Ասողիկ, էջ 748:

կաթն ի վերջո կարողացել է Հայաստանը մաքրել թշնամուց: Կարծում ենք, որ Հովհաննես Դրասխանակերտցու վրա մեծ է եղել սեփական համակրանքների ազդեցությունը, իսկ դրանք այդ ժամանակ Գագիկ Արծրունու կողմն էին: Հավանական է նաև, որ Հովհաննես Դրասխանակերտցու նշածը վերաբերում է միայն այն շրջանին, որն ընդգրկում է իր աշխատությունը, այսինքն՝ մինչև 925 թ., մինչդեռ դրանից հետո Աշոտ Երկաթը շարունակել է թագավորել:

Այստեղ հարկ ենք համարում անդրադառնալ մի հույժ կարևոր իրողության, որը սերտորեն աղերսվում է Հովհաննես Դրասխանակերտցու վերոհիշյալ տեղեկության հետ: Աշոտ Երկաթի վերաբերյալ մեր հասարակության շրջանում տարածված է մի տեսակետ, թե իբր նա սիրային կապ է ունեցել Ուտիքի կառավարիչ Ցլիկ Ամրամի կնոջ հետ, որի հետևանքով վերջինս ապստամբել է: Նման պատում առկա է Մուրացանի «Գևորգ Մարգպետունի» պատմավեպում²⁶⁶, որին պատմագիտական հետազոտության մեջ անդրադառնալն անհմատ կլիներ, եթե մինչև այժմ մեր հասարակության շրջանում Աշոտ Երկաթը ճանաչված չլիներ հիմնականում հենց այդ պատմավեպով: Այնտեղ առկա է նաև մի հետաքրքրական դրվագ, որը կարծես ամփոփում է Աշոտ Երկաթի գործունեության 15-ամյա պատմափուլը: Գևորգ Մարգպետունի գորավարը նստել էր Աշոտ Երկաթի աճյունի առաջ և մտածում էր: «Նա հիշում էր այդ վայրկենին բոլոր անցյալը. Աշոտ Երկաթի բազմահոգ ու ալեծուփ թագավորությունը... Հիշում էր այն օրերը, երբ ինքը հիանում, հափշտակվում էր նրա դյուցազնական քաջագործություններով, հիշում էր նրա ծայնի որոտը՝ պատերազմի դաշտում, նրա խիզախ հարձակումները թշնամիների վրա, նրա սրի հարվածները՝ հակառակորդի դեմ... Հիշում էր, թե ինչպե՛ս ժպտում էր նրա բախտը, թե ինչպե՛ս ինքը հրճվում էր յուր սրտում, գուշակելով, թե աստված նրան է վիճակել հայրենիքի փրկիչ լինելու, օտարի նախատինքը բառնալու և հայրենական գահի նախկին փառքը վերադարձնելու գերագույն կոչումը... Բայց ավա՛ղ, խառնվածքի մի թուլություն նրա

²⁶⁶ Տե՛ս Մուրացան, Գևորգ Մարգպետունի, Ե., 1977, էջ 26, 43-44, 78-83, 122-129 և այլն:

ոյուցագնական մեծությունը թունավորեց... սիրո փանաքի որդը հսկայական հրաշակերտը տապալեց»²⁶⁷: Խոսքը հենց վերոհիշյալ մտացածին սիրային կապի մասին է: Ստացվել է, որ Աշոտ Երկաթի ողջ մեծությունը խորտակվել է այդ պատճառով. նա, ում վիճակված էր ազատել Հայաստանը, մարդկային մի թուլության պատճառով տապալվել է: Փաստերը ցույց են տալիս, որ իրականում Աշոտ Երկաթը կյանքից հեռացել է հաղթանակած՝ ազատագրելով Հայաստանը: Ստացվում է, որ Մուրացանի պատմավեպում ամեն ինչ շրջված է գլխիվայր:

Էական է սակայն նման մոտեցման համար հիմք հանդիսացած՝ Հովհաննես Դրասխանակերտցու տեղեկության քննությունը: Ավելորդ չէ այն ամբողջությամբ մեջ բերելը: Ուտիքի խռովարար կառավարիչ Ցիկ Ամրամի զորքի կողմից շրջափակված Աշոտ Երկաթի փրկվելու կապակցությամբ պատմիչը գրում է, որ «յայնմ արե՛ հետե՛ եւ անդր ոչ յաջողեցան հետեւանք արշաւանաց Աշոտի որպէս յերեկն եւ յեռանդն: ...Թուի ինձ եթէ զողջախոհութիւնն զայն, զոր նախն էր ստացել, յանմաքուր բղջախոհութիւն փոխարկեալ, եւ զքաղցրութիւն պաշտամանն Աստուծոյ յանձնէ ի բաց վարատեալ, եւ ըստ արինակի փարիսեցւոյն զամբարտաւան կամս կամեցուցեալ իւր, վասն այնորիկ թերեւս դատապարտեալ անկանէր, ոչ ժամանեալ ի կատարս փրկութեան իւրոյ»²⁶⁸: Այսինքն՝ Աշոտ Երկաթից հաջողությունը երես է թեքել, քանի որ նա կորցրել է ողջախոհությունը և տրվել բղջախոհության, հեռացել աստծո պաշտամունքից և դրա համար դատապարտվելով՝ տապալվել²⁶⁹:

Մուրացանի վրա ազդել է նշված տեղեկությունն ընդհանրապես և «բղջախոհություն» բառը մասնավորապես, ինչպես նաև այն, որ ըստ Հովհաննես Դրասխանակերտցու՝ «[Աշոտ Երկաթը] խաղայ

²⁶⁷ Նույն տեղում, էջ 392-393:

²⁶⁸ Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 556-557:

²⁶⁹ Հ. Հարությունյանն այս տեղեկությունից բխեցրել է, թե Աշոտ Երկաթի բնավորությունը փոխվել էր, և նա տրվել էր զեխ ու ցոփ կյանքի: Տե՛ս Հ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 78:

զնայ անդէն ի սիրեցեալն իւր յՈստի գաւառ»²⁷⁰ տեղեկությունը, ասել է՝ Աշոտ Երկաթը հաճախ էր մեկնում Ուտիք, այնքան հաճախ, որ պատմիչը ուղղակի գավառն անվանում է «սիրեցեալն իւր յՈստի գաւառ»։ Մյուս կողմից, Աշոտ Երկաթի «բղջախոհության» մասին Հովհաննես Դրասխանակերտցին խոսում է անմիջապես Ցլիկ Ամբարմի խռովությունից հետո, որից, ամենայն հավանականությամբ, Մուրացանը բխեցրել է սիրային կապ խռովարար կառավարչի կնոջ և Աշոտ Երկաթի միջև։ Թեև այդ սիրային կապը վիպական պատում է, պարզ հորինվածք, կարևոր է այն, որ այն հիմնված է «բղջախոհություն» բառի վրա։

«Բղջախոհ» և «բղջախոհություն» բառերի բացատրությունը հույժ կարևոր է, թեև պատմիչի տեղեկությունից առանց այդ էլ հասկանալի է դրա իմաստը։ Այն արտահայտում է «ողջախոհի / ողջախոհության» ճիշտ հակառակ իմաստը։

«Նոր բառգիրք հայկազեան լեզուի» երկասիրության մեջ «բղջախոհ»-ը բացատրվում է որպես «ապողջախոհ, ոչ ողջախոհ, կամ պղծախոհ, ...ցանկասեր, ...չարախորհ» և բերվում է մի քանի օրինակ աղբյուրներից. «ի լինելն բղջախոհ», «բղջախոհ ցանկութեամբ», «եւից զբղջախոհ ախտին իւրոյ տրւիմանս», «բողջախոհ զեղխութեամբն (գինւոյ)», «կրեմ զփառս և զանարգանս ի բարէխոհ և ի բղջախոհ մարդկանէ»²⁷¹։ Կարևոր է, որ «բղջախոհութիւն» բառի առաջին իմաստը «Նոր բառգրքում» ներկայացված է «չար ցանկութիւն»-ը և ապա միայն «վաւաշոտութիւն»-ը²⁷²։

Հր. Աճառյան գրում է, որ «բղջախոհ» բառը՝ նշանակելով «պղծասեր, ցանկասեր», «գրեթէ միշտ գործածուած է իբրև ողջախոհ բառի հակառակը, ուստի կարծւում է, որ կազմուած է այս բառից՝ *բ* բացասական մասնիկով»²⁷³։ Ինչ վերաբերում է «ողջախոհ» բառին,

²⁷⁰ Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 554։

²⁷¹ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», երկասիրութիւն երից վարդապետաց Հ. Գաբրիէլի Աւետիքեան, Հ. Խաչատրոյ Սիւրմէլեան, Հ. Սկրտչի Աւգերեան, Կ. Ա. Վենետիկ, 1836, էջ 493։

²⁷² Նույն տեղում, էջ 493-494։

²⁷³ Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Կ. Ա. Ե., 1971, էջ 456։

ապա դրա արմատը «ողջ»-ն է, այսինքն՝ «առողջ, կենդանի», որից ծնված «ողջախոհ» բառն էլ կնշանակի «առողջ մտածող»²⁷⁴:

Ստ. Մալխասյանը «բղջախոհ»-ը բացատրում է որպես «մարմնական ցանկութեան անձնատուր, ցանկասէր, տռփասէր», իսկ դրա հակառակ իմաստով հանդես է գալիս «ողջախոհ» բառը: Ըստ նրա՝ մեկ այլ նշանակությամբ՝ բղջախոհը բացատրվում է որպես «**չարախորհ, չարամիտ**»²⁷⁵: «Ողջախոհ» բառը նա բացատրում է որպես «առողջ մտածողութեան տէր, ողջամիտ, խելացի, զգօն», այլ նշանակությամբ՝ «սեռական կեանքում պարկեշտ, ժուժկալ»²⁷⁶:

«Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան»-ում «բղջախոհ»-ը մակաբերված է որպես «**վավաշուտ, ցանկասեր, տռփասեր**» և որպես «**հականիշ ողջախոհի**»²⁷⁷, թեև «ողջախոհ»-ն էլ բացատրված է որպես «առողջ մտածող, ողջամիտ, խելացի» ու նաև «**ժուժկալ (սեռական կյանքում)**»²⁷⁸:

Էդ. Աղայանը Ստ. Մալխասյանի օրինակով «բղջախոհ»-ը բացատրում է որպես «մարմնական ցանկության անձնատուր, ցանկասեր, տռփասեր», իսկ «բղջախոհություն»-ը՝ որպես «մարմնական ցանկություն, տռփանք»²⁷⁹: Սակայն «ողջախոհ» և «ողջախոհություն» բառերը նրա իսկ ներկայացմամբ ուղղակիորեն «բղջախոհ»-ի և «բղջախոհության» հակառակ իմաստը չունեն: «Ողջախոհ»-ը նշանակում է «առողջ կերպով մտածող, առողջամիտ, ողջամիտ», իսկ «ողջախոհություն»-ը՝ «ողջախոհի լինելը... ողջախոհի վարքագիծը՝ վերաբերմունք՝ վարմունք»²⁸⁰:

²⁷⁴ Նույն տեղում, հ. Գ, Ե., 1977, էջ 558:

²⁷⁵ Ստ. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, հ. Ա, Ե., 1944, էջ 375:

²⁷⁶ Նույն տեղում, հ. Գ, Ե., 1944, էջ 559:

²⁷⁷ «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հ. Ա, Ե., 1969, էջ 325:

²⁷⁸ Նույն տեղում, հ. Դ, Ե., 1980, էջ 101:

²⁷⁹ Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, հ. Ա, Ե., 1976, էջ 193

²⁸⁰ Նուն տեղում, հ. Բ, Ե., 1976, էջ 1133:

Գ. Զահուկյանը «բղջ»-ը բացատրում է որպես «տռփանք, սեռական գրգիռ, ցանկություն»²⁸¹:

«Բղջախոհ» բառի նման բացատրությունները չպետք է ծնեն բացառապես այն տեսակետը, թե Աշոտ Երկաթը եղել է «մարմնական ցանկություններին անձնատուր, ցանկասեր և տռփասեր», քանի որ Հովհաննես Դրասխանակերտցին, եթե իրոք նկատի ուներ Աշոտ Երկաթի նման հատկանիշները, ապա անպայման կհիշատակեր դրանց մասին, քանի որ, ինչպես տեսանք, իր տեղեկություններում նա այնքան էլ չի խնայում արքային: Ավելին, պետք է ուշադրություն դարձնել նաև Աշոտ Երկաթի «բղջախոսության» վերաբերյալ հիշատակության մեջ պատմիչի զգուշավորությանը, որը նա հանդես է բերում «թուի ինձ, եթե զողջախոհութիւնն ... բղջախոհութիւն փոխարկեալ» և «թերեւս դատապարտեալ անկանէր» արտահայտություններում՝ օգտագործելով «թուի ինձ - ինձ թվում է, կարծում եմ»²⁸² և «թերեւս - գուցե, կարող է պատահել, հնարավոր է»²⁸³ արտահայտությունները, ինչը կարծել է տալիս, որ պատմիչը կամենում է «բացատրել» Աշոտ Երկաթի անհաջողությունների պատճառը՝ փորձ կատարելով դրանք վերագրել ողջախոհության կորստին: Փաստորեն՝ նա ոչ թե մեղադրում է Աշոտ Երկաթին «բղջախոհության» մեջ, այլ միայն այդ մասին կասկած հայտնում:

Պետք է նշել նաև, որ Հովհաննես Դրասխանակերտցին Ցիլկ Ամրամի խռովության մեջ Աշոտ Երկաթին բոլորովին չի մեղադրում: Այդ խռովության դրդապատճառն՝ ըստ պատմիչի, այն էր, որ «[Ցիլկ Ամրամը] չարիմացութեամբ ի մութ թաթաւեալ եւ այլապէս զինքն կերպարանեալ, ի բաց որոշէր ի հնազանդութենէ Շահանն կոչեցեալ Շահի (Աշոտ Երկաթի - Ա. Ե.), եւ լքեալ, խոտեալ, անարգեալ զբնիկ տէրութիւնն իւր, հաճէր հաւանէր մտանել ընդ լծով ծառայութեան անբնիկն Գուզենայ (Աբասի աներ Վրաց իշխան Գուրգենի - Ա. Ե.)»²⁸⁴:

²⁸¹ Գ. Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010, էջ 131:

²⁸² «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. Ա, էջ 820, Ռ. Ղազարեան, Գրաբարի բառարան, հ. Ա, Ե., 2000, էջ 494:

²⁸³ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. Ա, էջ 807, Ռ. Ղազարեան, նշվ. աշխ., էջ 485:

²⁸⁴ Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 554-555:

Այսինքն՝ մեղադրվում է հենց ինքը՝ խռովարար Ամրամը, որ կամենում էր ընդունել այլոց հովանավորությունը:

Ուստի պետք է եզրակացնել, որ «բղջախոհ» ասելով՝ Հովհաննես Դրասխանակերտցին չի փորձում Աշոտ Երկաթին ցանկասիրություն և տռփանք վերագրել, այլ ցանկանում է նրան ներկայացնել որպես «չարամիտ» ու «չաչախորհուրդ»²⁸⁵ տիրակալ:

Ավելին, ինչպես նշվեց, վերոհիշյալ հիշատակության մեջ պատմիչը ցուցաբերել է իր քաղաքական կողմնորոշումը՝ համակրանքը Գագիկ Արծրունու նկատմամբ: Նա Աշոտ Երկաթին «բղջախոհություն» վերագրելով՝ տեղնուտեղը գրում է, որ «...թագաւորն Գագիկ՝ աստանօր իբր զվճիտ իմն միտս զգաստս ստացեալ ինքեան մաքուր խորհրդով զանգոյսս ի գոյ ածէր»²⁸⁶: Ի՞նչ է սա, եթե ոչ «որջախոհ» գործիչի կերպարի նկարագրություն, այսինքն՝ «բղջախոհ» Աշոտ Երկաթի հակապատկերը: Այստեղ «զվճիտ իմն միտս զգաստս» հակադրվում է «չարամիտ»-ին, իսկ «մաքուր խորհրդով»-ը՝ «չարախորհուրդ»-ին: Պատմիչի կողմից Աշոտ Երկաթի և Գագիկ Արծրունու հակադրումը բառացի մակարդակի է և կասկածի տեղ չի թողնում:

Այսպիսով Աշոտ Երկաթին մարմնական ցանկություններին անձնատուր եղած, ցանկասեր և տռփասեր թագավոր ներակայացնելը որևէ առնչություն չունի իրականության հետ:

Վերադառնալով Ցլիկ Ամրամի գորքի պաշարումից Աշոտ Երկաթի փրկվելու շրջանի (921 թ.) իրողություններին՝ նշենք, որ այդ ժամանակ խառնակ վիճակ էր խալիֆայությունում: Թշնամիները գրոհում էին և մեծ վնասներ հասցնում: Եվ ահա՝ խալիֆի խորհրդրականը նրան առաջարկում է ազատ արձակել Յուսուֆին և վերականգնել իր նախկին դիրքում՝ ի սարսափ թշնամիների²⁸⁷: 922 թ. ազատ արձակված²⁸⁸ Յուսուֆն առաջին հերթին գրոհում է Վաս-

²⁸⁵ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. Ա, էջ 493, Ստ. Մալխասեանց, նշվ. աշխ., էջ 375:

²⁸⁶ Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 557:

²⁸⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 558:

²⁸⁸ Տե՛ս Ibn-el-Athir, 8, էջ 95-100:

պուրականի վրա: Գագիկը նահանջում է Կոգովիտ և Ծաղկոտն գավառների կողմը: Յուսուֆը ներխուժում է Անձևացյաց գավառը, հասնում Աղբակ, բայց Գագիկի դեմ պատերազմում ի վերջո անհաջողության է մատնվում: Ուստի նա հաշտության դիմաց Գագիկից պահանջում է անցած տարիների արքունի հարկը, ինչպես նաև ընծաներ իր համար՝ հիշեցնելով, որ ինքն է թագադրել Գագիկին և թույլատրել տիրանալու ողջ Հայաստանին: Գագիկը ընդունում է նրա պահանջը, հանձնում տարիների հարկն ու մեծ նվերներ, որից հետո Յուսուֆը «մեծաւ շնորհակալութեամբ» հեռանում է Հերի ու Ջարևանդի կողմերը²⁸⁹:

Յուսուֆն իր փոխարեն Հայաստանում ոստիկան է կարգում Նար անունով մեկին, որին կոչում էին Սբուք (Նասր ալ-Սուբուքի)²⁹⁰:

Նարը եկավ Նախճավան, որտեղ նրան հանդիպելու գնաց Սյունյաց իշխան Սմբատի կրտսեր եղբայր Բաբկենը, ավելի ուշ՝ նաև Սահակը: Նարը նրանց հրավիրեց Դվին՝ այնտեղ քննարկելու բոլոր հարցերը: Դվինի ճանապարհին՝ Քարունջ քաղաքապոլի մոտակայքում՝ Նարին ընդառաջ եկան «զլխաւոր գահերէցք եւ հոյակապ նահապետք ազգատոհմի քաղաքին Դվնայ»²⁹¹, այսինքն՝ քաղաքի հայ մեծամեծերը: Նրաց՝ թվով 40 հոգու, Նարի հրամանով ձերբակալեցին ու շղթայեցին, իսկ առավոտյան Նարը մտավ Դվին՝ ձերբակալելով նաև Սյունյաց իշխաններին²⁹²: Այդ պահից սկսած Դվինը դարձյալ անցավ մահմեդականների իշխանության ներքո:

Նարը սկսում է հալածանքները կաթողիկոսանիստը («հայրապետանոց եկեղեցին սուրբ») լքած և Բյուրական ամրոցում ապաստանած կաթողիկոսի ու եկեղեցականների նկատմամբ: Կաթողի-

²⁸⁹ Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 559-561:

²⁹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 561-562, **Ibn-el-Athir**, 8, էջ 129: Տե՛ս նաև **Իբն ալ-Ասիր**. Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 11, Արաբական աղբյուրներ, Բ, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Արամ Տեր-Ղևոնդյանի, Ե., 1981, էջ 175:

²⁹¹ **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 562-563:

²⁹² Տե՛ս նույն տեղում, էջ 563:

կոսը շտապ հեռանում է Բագարան, որտեղ գտնվում էր Աշոտ Շապուհյանը²⁹³:

Կաթողիկոսի հեռանալուց հետո Նսրի զորքը պաշարում է Բյուրականը, որտեղ սպանված Սահակ եպիսկոպոսի և այլ հարյուրավորների մահվան վերաբերյալ ժամանակագրական եզակի և խիստ արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Հովհաննես Դրասխանակերտցին: Նա տեղեկացնում է, որ Սահակ եպիսկոպոսի և յուրայինների վախճանը տեղի է ունեցել հայոց 372 թ. ահեկանի 10-ին, որը համապատասխանում է 923 թ. դեկտեմբերի 15-ին, իսկ զույգ Կիրակոսների սպանությունը՝ նույն թվականի ահեկանի 17-ին²⁹⁴՝ համապատասխան 923 թ.²⁹⁵ դեկտեմբերի 22-ին:

Նշված իրադարձությունների ընթացքում Աշոտ Երկաթը չի հիշատակվում: 923 թ. դրությամբ նա դեռևս Սևանա կղզում էլ չէր հաստատվել, քանի որ այդ ժամանակ կղզում չորս օր ապաստանել և այդ մասին իր աշխատության մեջ հիշատակել է Հովհաննես Դրասխանակերտցին՝ Աշոտ Երկաթի մասին ընդհանրապես չխոսելով²⁹⁶:

Այդ դեպքերից շատ չանցած, արդեն 924 թ. սկզբին Յուսուֆը Նսրին հետ է կանչում Ատրպատական: Վերջինս իր փոխարեն թողնում է Բշր (թերևս՝ Բաշար) անունով մեկին որպես ոստիկան՝ նրան հանձնելով նաև Սյունյաց ձերբակալված իշխաններին: Բշրը Մագագ գավառով շարժվում է Աշոտ Երկաթի դեմ՝ վրեժխնդիր լինելու չինազանդվելու համար: Քանի որ Աշոտ Երկաթն այդ ժամանակ ամրացել էր Սևանա կղզու անմատչելի ամրոցում, արաբական զորքը սկսեց ասպատակել նրա տիրույթները, որոնք ըստ պատմիչի առանց այդ էլ ավերվել ու անմարդաբնակ էին դարձել: Ճանապարհին Բշրի հազար զինվորից բաղկացած զորագնդի դեմ 20 զինվո-

²⁹³ Տե՛ս նույն տեղում, էջ 565-567:

²⁹⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 574-576:

²⁹⁵ Մ. Օրմանյանն առանց հիմնավորելու առաջարկում է այդ իրադարձությունը դնել 926 թ.: Տե՛ս Մ. Օրմանյան, նշվ. աշխ., § 730:

²⁹⁶ Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 564:

րով դուրս է գալիս Աշոտ Երկաթի իշխաններից Գևորգը, որը կատաղի գրոհով մեծաքանակ թշնամուն փախուստի է մատնում²⁹⁷:

Այն, որ Բշրն ուզում էր վրեժխնդիր լինել Աշոտ Երկաթից Նարին չինագանդվելու համար, կարևոր հետևություններ է ծնում: 919 թ. իրադրությունը, երբ Յուսուֆը թագ ուղարկեց Աշոտ Երկաթին, փոխվել էր, ուստի Յուսուֆի կողմից նշանակված Նարը ցանկացել է հնագանդեցնել Հայոց թագավորին, մի բան, որ Յուսուֆը նույնիսկ չէր էլ փորձել:

Բշրը հանգիստ է առնում Դվինում, որից հետո շարժվում է Սևանա ամրոցը գրավելու: Տեղի ունեցած ծովամարտում Աշոտ Երկաթի զինվորները պարտության են մատնում Բշրի զորքին: Բշրը որոշում է հարձակվել Գեղա ամրոցի վրա, որտեղ նրան դարձյալ հանդիպում է Գևորգ իշխանը և պարտության մատնում: Բշրը մազապուրծ փախչում է Դվին²⁹⁸:

Այնուհետև, պատմիչը հաղորդում է, որ «իսկ ես, յոր նախ չոգայն ի թագաւորագանց»²⁹⁹ բողբոջն Աշոտ, առ նմին կացեալ մնացի մինչեւ ամառնայինն յաշունն յեղանակեալ յեղափոխէր»³⁰⁰: Մ. Օրմանյանն ու Լեոն այս Աշոտին նույնացնում են Աշոտ Շապուհյանի հետ³⁰¹, բայց, ամենայն հավանականությամբ, խոսքը Աշոտ Երկաթի մասին է, որին պատմիչն այդ պատմափուլում թեև մշտապես «Շահնշահ» է կոչում, բայց նրան հրաժեշտ տալու նկարագրության մեջ դիմում է նախկինում մեկ անգամ օգտագործված անվանաձևին՝ «զթագաւորագուն բողբոջ»³⁰²: Փաստորեն, կաթողիկոսը մինչև Վասպուրական հեռանալը մի քանի ամիս անցկացրեց Աշոտ Երկաթի կողքին, որը նրան մեծապես պատվում էր այդ ընթացքում: Աշնանը «առ ի նմանէն (իմա՛ր Աշոտ Երկաթից - Ա. Ե.) յուղարկեալ

²⁹⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 576-577:

²⁹⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 577-578:

²⁹⁹ Պետք է լինի «թագաւորագուն», ինչպես մեկ անգամ արդեն կոչված է Աշոտ Երկաթը: Տե՛ս նույն տեղում, էջ 533:

³⁰⁰ Նույն տեղում, էջ 579:

³⁰¹ Տե՛ս Մ. Օրմանյան, նշվ. աշխ., § 729, Լեո, նշվ. աշխ., էջ 569-570:

³⁰² Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 533:

չոգայ առ թագաւորն Հայոց Գագիկ»³⁰³: Այն, որ համաձայն Հովհաննէս Դրասխանակերտցու՝ Աշոտ Երկաթն է իրեն «ուղարկել» Գագիկ Արծրունու մօտ, կարող է կարևոր հետևություններ ծնել: Աշոտ Երկաթն իր եղբայր Աբասին, փաստորեն, գրկել էր գահաժառանգման իրավունքից, այլ թագաժառանգ էլ չունէր, իսկ ինքը ծանր վիճակում ամրացել էր Սևանա կղզում: Ուստի՝ Հովհաննէս Դրասխանակերտցին դիտավորյալ է գրում այն մասին, որ Աշոտ Երկաթն անձամբ է իրեն ուղարկել Գագիկ թագավորի մօտ: Խնդիրն այն է, որ Գագիկ Արծրունու մօտ տեղափոխվելը, փաստորեն, Հայոց հոգևոր իշխանության ընտրությունն էր հօգուտ Վասպուրականի թագավորության, ուստի կաթողիկոս պատմիչն այն «արդարացնում» է այն բանով, որ իրեն այնտեղ է «ուղարկել» Աշոտ Երկաթը: Իսկ նման արդարացումն անհրաժեշտ էր: Հայկական աղբյուրներում Գագիկի թագավոր դառնալը համարվում է Հայոց միասնական թագավորության մասնատման պատճառ: Աղբյուրները հաղորդում են, որ Յուսուֆը «թագաւորեցոյց ...գԳագիկ ի տոհմէ Արծրունեաց, հակառակ թագաւորութեան ազգին Բագրատունեաց», իսկ այնուհետև՝ Աշոտ Երկաթի օրոք «աշխարհս (իմա՝ Հայոց թագավորությունը) յերկուս բաժանեցաւ՝ Աշոտ Բագրատունի՝ յԱնի, ի տեղի հօր իւրոյ և Գագիկ Արծրունի ի կողմանս Վասպուրականի»³⁰⁴: Այնուհայտ է, որ հայ իրականությունը երկփեղկվել էր, ուստի՝ Բագրատունյաց տիրութեանց անցնելով Վասպուրական՝ կաթողիկոսն անցնում էր Բագրատունի գահակալի հակառակորդի կողմը: Եվ որպէսզի տասնամյակներ ու հարյուրամյակներ անդին ընթերցողն իրեն չմեղադրի ճամբար փոխելու համար, կաթողիկոսը գրում է, թե Աշոտ Երկաթն է իրեն ուղարկել Գագիկ Արծրունու մօտ:

Նշված իրադարձությունները տեղի են ունեցել 924 թ., որի աշնանը կաթողիկոսը տեղափոխվեց Վասպուրական՝ Գագիկ թագավորի հրավերով՝ պատճառ բերելով այն, որ իր կալվածքները Նսրը գրավել էր, իսկ «Հայոց թագավոր» Գագիկը նրան առել է իր պաշտպանության ներքո և խոստացել վերադարձնել նրա ունեց-

³⁰³ Նույն տեղում, էջ 579:

³⁰⁴ «Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ.», հ. II, էջ 337:

վածքը³⁰⁵: Մինչ այդ նա Գագիկին երբեք «Հայոց թագավոր» չէր կոչել, այլ միայն՝ «թագավոր»: Ակնհայտ է, որ այդ պահի դրությամբ Հայաստանում երեք թագավորներից ամենաբարվոք վիճակում գտնվում էր հենց Գագիկ Արծրունին³⁰⁶: Հեղինակներից որոշները կարծում են, որ Հովհաննես Դրասխանակերտցին Վասպուրական է տեղափոխվել 927 թ.³⁰⁷: Հովհաննես Դրասխանակերտցու աշխատության վերջին հրատարակության խմբագրական նախաբանում Գ. Տեր-Վարդանյանը թեև կարծիք է հայտնում, որ կաթողիկոսն իր պատմությունը ավարտել է 925 թ. դեպքերը նկարագրելով, սակայն միևնույն ժամանակ գտնում է, որ նա Վասպուրական է մեկնել 927 թ.³⁰⁸: Սակայն կաթողիկոսը չէր կարող Վասպուրական մեկնել 927 թ., երբ 925 թ. դեպքերի նկարագրությամբ իր շարադրանքն ամփոփելիս հիշատակում է իր՝ Վասպուրական տեղափոխվելը³⁰⁹:

924 թ. վերջերին Ատրպատականից գալիս է Նսրը և արշավում Վայոց ձոր՝ Սմբատ իշխանի դեմ: Սակայն տեսնելով Սմբատի պաշտպանության ամրությունը՝ ճիշտ է համարում նրա հետ հաշտություն կնքել, որի արդյունքում բանտից ազատվում է Բաբկեն Սյունին, իսկ Սահակն առժամանակ պահվում կապանքների մեջ³¹⁰:

Իր երկասիրության վերջում Հովհաննես Դրասխանակերտցին պատմում է, որ ընկավ Գեղա (Քեղեա) ամրոցը, որի պահապանները թշնամու երկյուղից լքեցին այն³¹¹:

Փաստորեն, Հովհաննես Դրասխանակերտցին իր աշխատությունն ամփոփել է 924 թ. վերջի դեպքերի արձանագրությամբ: Աշոտ Երկաթի գահակալության շրջանին անդրադարձած հեղինակները մշտապես նշել են, որ դրանից հետո պատմիչների երկերում

³⁰⁵ Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, 579:

³⁰⁶ Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան**, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, էջ 140:

³⁰⁷ Տե՛ս **Մ. Օրմանյան**, նշվ. աշխ., § 734:

³⁰⁸ Տե՛ս «Մատենագիրք Հայոց», ԺԱ. հատոր, Ժ. դար, Պատմագրություն, Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 317:

³⁰⁹ Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 579:

³¹⁰ Նույն տեղում, էջ 580: Տե՛ս նաև **Ստեփաննոս Օրբելյան**, էջ 199-200

³¹¹ Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 580:

Աշոտ Երկաթի մասին մինչև նրա մահվան 929 թվականը որևէ տեղեկություն չի պահպանվել, ինչպես նաև աղբյուրներում չի խոսվում Հայաստանում 925-929 թթ. տեղի ունեցած դեպքերի վերաբերյալ³¹²:

Զնայած նշվածին՝ քննությունը ցույց է տալիս, որ իրականում Աշոտ Երկաթի մասին 925 թվականից հետո պահպանվել է երկու հիշատակություն: Խոսքը Ասողիկի աշխատության մեջ տեղ գտած հույժ կարևոր տեղեկությունների մասին է: Ըստ առաջինի՝ Ռոմանոս Ա Լեկապենոս կայսրը (920-944) «...**երկրորդ ամի թագաւորութեանն իւրոյ (իմա՛ 921/922 թ.) գումարեաց զաւր բազում եւ դմեսւիկոս (իմա՛ դոմեստիկոս կամ, ավելի ճշգրիտ, սխոլերի դոմեստիկոս՝ բյուզանդական բանակի հրամանատարը) առաքեաց ի Դուին քաղաք, յորում էր Սաքի ամիրայ, որ զԱշոտն Շահանշահ ազնական իւր արկ ի քաղաքն: Եւ եկեալ զաւրն Յունաց՝ պաշարեցին զԴուին եւ ոչ կարացին ստնանել՝ դարձան անդրէն**»³¹³: Այս տեղեկությունը հույժ կարևորվում է նրանով, որ Աշոտ Երկաթը, փաստորեն, հանդես է գալիս Բյուզանդիայի դեմ, որը, իր հերթին, ներխուժել էր Հայոց թագավորություն և մեծ վնասներ հասցրել³¹⁴: Հավելենք, որ դոմեստիկոսի գլխավորությամբ Դվինի ուղղությամբ արշավելու մասին մի տեղեկություն էլ պահպանել է Իբն ալ-Ասիրը՝ այն թվագրելով հիջրայի 315 (8 մարտ, 927 թ.-24 փետրվար, 928 թ.): Այդ ժամանակ Դվինում էր գտնվում Նասր ալ-Սուբուքին³¹⁵: Հետագոտողները, ելնելով Ասողիկի՝ Ռոմանոս կայսեր գահակալության (920-944) երկրորդ տարվա հիշատակությունից, 922 թ. Սբուքի մահացած լինելու իրողությունից³¹⁶, ինչպես նաև Ցլիկ Ամրամի վերաբերյալ Հովհաննես Դրասխանակերտցու այն տեղեկությունից, թե նա կամենում էր ընդունել իբրև թե Գամիրքի (Վրաց) իշխան Գուր-

³¹² Տե՛ս Լեո, նշվ. աշխ., էջ 570, «Հայ ժողովրդի պատմություն», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., հ. III, էջ 46 և այլն:

³¹³ Տե՛ս Ասողիկ, էջ 748:

³¹⁴ Տե՛ս Կոստանդին Ծիրանածին, էջ 15:

³¹⁵ Տե՛ս Ibn-el-Athir, 8, էջ 129-130:

³¹⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 95-100, Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 588-589:

գենի (նույնացված դոմեստիկոս Հովհաննես Կուրկուասի հետ³¹⁷) իշխանությունը, այս իրադարձությունը տեղադրել են 921 թ.³¹⁸ կամ 922 թ.³¹⁹, թեև որոշ ուսումնասիրողներ դա համարել են անհնար³²⁰: Խնդիրն այն է, որ Հովհաննես Կուրկուասը դոմեստիկոսի պաշտոնը ստացել է 922 թ. վերջին կամ, որ ավելի հավանական է՝ 923 թ.³²¹, ուստի՝ այդ թվականին Հայաստանի խորքերն իրականացված արշավանք ղեկավարել չէր կարող³²²: Մյուս կողմից, Ասողիկը, Իբն ալ-Ասիրն ու Կոստանդին Ծիրանածինը³²³ նման միայն մեկ արշավանք են հիշատակում, իսկ Հովհաննես Դրասխանակերտցին այն ընդհանրապես չի հիշում: Այդ իրողությունը փորձ է կատարվել բացատրելու այն բանով, որ քրիստոնյա պատմիչը հավատակից և դաշնակից կայսրության արշավանքը Հայաստան դիտմամբ չի հիշատակում³²⁴ և կամ դրանով խնայում է Աշոտ Երկաթին, որը, փաստորեն, ընդունել էր իր հորը սպանողի մեկնած ձեռքը՝ այդպիսով հակառակվելով Բյուզանդիային³²⁵: Ինչ վերաբերում է Իբն ալ-Ասիրի հիշատակած 927 թ. արշավանքին, ապա այն հիշատակել կաթողիկոս-պատմիչն ուղղակի չէր կարող, քանի որ իր պատմության շա-

³¹⁷ Տե՛ս **Ն. Աղոնց**, Երկեր, հ. Ե, էջ 206-207, **Ա. Տեր-Ղևոնդյան**, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, էջ 136-137:

³¹⁸ Տե՛ս **Ն. Աղոնց**, Երկեր, հ. Ե, էջ 207:

³¹⁹ Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան**, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, էջ 136:

³²⁰ Տե՛ս **Կոստանդին Ծիրանածին**, էջ 232, ծանոթ. 19: **S. Runciman**, The Emperor Romanus Lecapenus and His Reign: A Study of Tenth-Century Byzantium, Cambridge, 1988, p. 135.

³²¹ Խնդիրն այն է, որ Հովհաննես Կուրկուասը մինչև Ռոմանոս Լեկապենոսի գահակալության ավարտը սխոլերի դոմեստիկոսի պաշտոնը վարել է 22 տարի և 7 ամիս: 944 թ. ղեկտեմբերին, Ռոմանոսի գահագրկումից որոշ ժամանակ անց, թերևս 945 թ. սկզբին, պաշտոնից հեռացվեց նաև Հովհաննես Կուրկուասը: Տե՛ս **Թեոփանեսի Շարունակող**, էջ 252: Մանրամասնորեն տե՛ս **S. Runciman**, նշվ. աշխ., էջ 134-136: Հետադարձ հաշվարկը մատնացույց է անում նշանակման 923 թվականը:

³²² Տե՛ս **S. Runciman**, նշվ. աշխ., էջ 135:

³²³ Տե՛ս **Կոստանդին Ծիրանածին**, էջ 15:

³²⁴ Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան**, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, էջ 136:

³²⁵ Տե՛ս **Ն. Աղոնց**, Երկեր, հ. Ե, էջ 206:

րադրանքն ամփոփել է 924 թ. դեպքերի նկարագրությամբ: Ռոմանոս Լեկապենոսի գահակալման երկրորդ տարվա հիշատակությունը և Իբն ալ-Ասիրի տեղեկությունները հետազոտողներին ստիպել են կարծել, թե իրականում Հովհաննես Կուրկուասի գլխավորությամբ երկու արշավանք է տեղի ունեցել Հայաստան՝ 922 և 927 թթ.³²⁶:

Ասողիկի տեղեկությանը լիարժեքորեն հավատ ընծայելուց առաջ պետք է հիշել, որ այդ տեղեկության մեջ Ռոմանոս Լեկապենոսի թագավորության սկիզբ է նշված հայոց ՅԿԵ (365) թվականը (916 ապրիլ-917 ապրիլ): Ուստի Ասողիկը, «յերկրորդ ամի» ասելով, հենց այդ թվականից է կատարել հաշվարկը: Եթե նույնիսկ համարենք, որ այն աղավաղված է և պետք է լիներ ՅԿԷ (367) թվականը (918 ապրիլ-919 ապրիլ), ապա խնդիրը միայն մասամբ կլուծվի, այն էլ, եթե 919 թվականն ընդգրկենք Ռոմանոս կայսեր գահակալության շրջանի մեջ: Հայտնի է, որ Ռոմանոսը նախքան թագադրվելը 919 թ. հռչակվել է որպես կայսերահայր՝ իր ձեռքում կենտրոնացնելով փաստական իշխանությունը, թեև թագադրվել է միայն 920 թ.³²⁷: Եթե Ասողիկի՝ «թագաւորութեանն իւրոյ» արտահայտությունը վերագրենք նաև կայսերահայրության շրջանին, ապա երկրորդ տարին կստացվի 920/921 թվականը: Սակայն այդ պարագայում Հովհաննես Կուրկուասի գլխավորությամբ արշավանքը դեպի Հայաստան ընդհանրապես բացառվում է, քանի որ նա դոմեստիկոսի պաշտոնը դեռ չէր զբաղեցրել:

Նշվածը մեզ այն համոզմանն է բերում, որ Ասողիկի երկում «յերկրորդ ամի թագաւորութեանն իւրոյ» տեղեկության մեջ սխալ կա և իրականում խոսքը հենց 927 թ. արշավանքի մասին է: Երկու արշավանքների նկարագրությունների միջև նմանություններն ակնհայտ են.

³²⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 207, **S. Runciman**, նշվ. աշխ., էջ 135-140, **Ա. Տեր-Ղևոնդյան**, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, էջ 136-139, **Է. Ղանիեյան**, Բյուզանդական արշավանքները Հայաստան (X դ. առաջին քառորդ), «ԼՀԳ», 1977, № 2, էջ 77:

³²⁷ Տե՛ս **Թեոփանեսի Շարունակող**, էջ 233-235: Թերևս, դրա հետ է կապված այն, որ հետազոտողներից շատերը Ռոմանոսի գահակալությունը թվագրում են 919-944 թթ.:

- ա. արշավանքը ղեկավարել է դոմեստիկոսը,
- բ. պաշարվել է Դվինը,
- գ. Դվինի պաշտպանությունը ղեկավարել է Սբուք անունով ամիրը,
- դ. Դվինի պաշարումը հաջողություն չի ունեցել:

Ասվածի հիմնավորումն է նաև այն, որ Ասողիկի նշված տեղեկության մեջ Սուբուք անունը գրված է Սպքի ձևով, որը հարազատ է Նասր ալ-Սուբուքիի անվանը: Այլապես Հովհաննես Դրասխանակերտցու տարբերակով Ասողիկը ևս կնշեր Սբուք անվանաձևը: Իսկ Սպքի անվան հիշատակությունը ցույց է տալիս, որ Ասողիկն իր երկի տվյալ հատվածը շարադրելիս բացի Հովհաննես Դրասխանակերտցու աշխատությունից ձեռքի տակ այլ աղբյուր էլ է ունեցել, որտեղ նշված է եղել Սուբուքի (Սուբուքի-Սպքի) անվանաձևը:

Ի վերջո, ասվածի մյուս կարևոր ապացույցն այն է, որ այդ արշավանքը չի հիշատակում Հովհաննես Դրասխանակերտցին: Չհիշատակելու վերոհիշյալ պատճառաբանությունները, որ բերում են այն հետազոտողները, որոնց կարծիքով արշավանքը տեղի է ունեցել 921 թ. կամ 922 թ., համոզիչ չեն: Նման հույժ կարևոր իրադարձությունը կաթողիկոս-պատմիչը անհնար է, որ չհիշատակեր, առավել ևս, որ հիշատակել է Կողբ դաստակերտի՝ բյուզանդական բանակի կողմից 916 թ. գրավման և բնակչության գերեվարման մասին: Այսինքն՝ բյուզանդացիներին «խնայելու» առանձնապես մեծ ջանքեր պատմիչը չի գործադրում: Նմանապես նա չի խնայում նաև Աշոտ Երկաթին:

Ուստի պետք է բխեցնել, որ տեղի է ունեցել միայն մեկ բյուզանդական արշավանք Դվինի ուղղությամբ 927 թ.: Եթե ճիշտ է նման եզրակացությունը, իսկ դա ժխտելու համար որևէ էական ապացույց հրապարակի վրա չկա, ապա դա ցույց է տալիս, որ 924-927 թթ. միջև Աշոտ Երկաթին հաջողվել էր կայունացնել իրավիճակը երկրում և հաշտության եզրեր գտնել Նսրի հետ: Ըստ որում՝ վերջին իրողությունն այնքան կարևոր էր Հայոց թագավորի համար, որ նա նույնիսկ պատրաստ էր Նսրի հետ միասին Դվինը պաշտպանել բյուզանդական զորքից: Դվինը Նսրի հետ բյուզանդական

բանակից պաշտպանելու մյուս, թերևս, ամենակարևոր պատճառն այն էր, որ կայսրությունը, փաստորեն, արդեն իսկ սկսում էր նվաճողական քաղաքականություն վարել Հայոց թագավորության նկատմամբ, ի գուր չէ, որ արշավանքի երթուղին անցնում էր Բագրատունիների տիրույթներով՝ սկսած Բասեն գավառից: Ըստ Կոստանդին Ծիրանածնի՝ «...Հովհաննես Կուրկուասը, արշավելով Տիվին (իմա՝ Դվին - Ա. Ե.) ամրոցի վրա, ճանապարհին ամբողջությամբ ամայացրեց Ֆասիանե երկիրը (իմա՝ Բասեն գավառը - Ա. Ե.), որպես սարակինոսներին (իմա՝ արաբներին - Ա. Ե.) ենթակա»³²⁸: Պետք է հիշել նաև, որ 917 թվականից հետո և հատկապես 920-ական թթ. առաջին կեսին, երբ Աշոտ Երկաթը գտնվում էր անչափ ծանր վիճակում, բյուզանդացիները նրան օգնելու համար որևէ քայլ չկատարեցին, իսկ 927 թ., երբ իրավիճակն արդեն կայունացել էր, ու Աշոտ Երկաթն իրեն բավականաչափ ամուր էր զգում, բյուզանդական բանակն արշավում էր Հայաստանի խորքերը՝ ամայացնելով Բագրատունիների տիրույթները:

Բյուզանդիայի դեմ հանդես գալով՝ Աշոտ Երկաթը ցույց էր տալիս, որ իր գլխավոր ու միակ նպատակը, չնայած ծայրահեղ դժվարություններին, եղել ու մնում էր Հայոց թագավորության լիակատար անկախությունը:

Ինչ վերաբերում է Աշոտ Երկաթի գահակալության վերջին շրջանի վերաբերյալ Ասողիկի երկրորդ հիշատակությանը, ապա այն կքննարկենք ստորև:

³²⁸ Տե՛ս Կոստանդին Ծիրանածին, էջ 15:

2.4. 927-929 թթ. պատմափուլը. Հայաստանի ազատագրումը

Ասողիկի վերջին հիշատակությունն Աշոտ Երկաթի մասին ունի նրա գահակալության շրջանի արդյունքներն ամփոփող բնույթ: Նշված է, որ շահնշահի հռչակվելուց հետո Աշոտ Երկաթը «**հալածական առնէ զԻսմայէլացւոց զաւրն յաշխարհէս Հայոց**»³²⁹: Կարելի է առանց կասկածելու այդ իրադարձությունը թվագրել 927-929 թվականներով, քանի որ մինչև 927 թ. Աշոտ Երկաթին այդպես էլ չէր հաջողվել Ատրպատականի գորքերը հեռացնել Հայաստանից: Փաստորեն Նսրի հետ դաշինքը կարճ կյանք է ունեցել:

Ասողիկի այդ տեղեկությունը հանդիսանում է Աշոտ Երկաթի դարաշրջանի գլխավոր ձեռքբերման արձանագրությունը: Ամենայն հավանականությամբ, Հայաստանի ազատագրմանը նպաստել է Դվինի պաշարման տարում՝ 927 թ., տեղի ունեցած Յուսուֆի մահը³³⁰, որը խիստ թուլացրեց Ատրպատականի ամիրայությունը, իսկ Յուսուֆի կողմից նշանակված Նսրի՝ Հայաստանում մնալը դարձրեց անհամատեղելի ստեղծված իրավիճակի հետ: Ամենայն հավանականությամբ, այդ ժամանակ է, որ Աշոտ Երկաթը կարողացել է «հալածել» թշնամու գորքը Հայաստանից:

Աշոտ Երկաթի վարած առաջին ազատագրական կռիվներից, որոնք տեղի էին ունեցել դեռ 913 թ., անցել էր շուրջ 15 տարի: Այդ ընթացքում Հայոց արքան անընդհատ մարտնչել էր, չէր նահանջել նույնիսկ անհաղթահարելի թվացող դժվարությունների առաջ և կյանքի վերջում հասել էր իր գլխավոր նպատակին՝ Հայաստանի ազատագրությանը:

Ստորև կհամոզվենք, որ Աշոտ Երկաթը Հայաստանի ազատագրումը սկսել է դեռևս Յուսուֆի կենդանության շրջանում: Դատելով Արծրունյաց տան Անանուն պատմիչի տեղեկություններից՝ կարելի է եզրակացնել, որ պարտություն կրելով Աշոտ Երկաթի դեմ պատերազմում՝ Յուսուֆն, այնուամենայնիվ, որոշ քաղաքական հակաբալլեր ձեռնարկել է՝ օգտագործելով բազմիցս փորձված հակաթուր

³²⁹ Ասողիկ, էջ 748:

³³⁰ Տե՛ս Ibn-el-Athir, 8, էջ 124-127:

թագավորներ օգտագործելու խաղաքարտը: Պատմիչը հաղորդում է, որ Յուսուֆը ձերբակալվելուց տարիներ անց ազատվելով գերությունից և նշանակվելով Ատրպատականի ու Հայաստանի կառավարիչ՝ անձամբ Հայաստան չի գալիս, այլ ոստիկաններ է առաքում, իսկ Գագիկ Արծրունուն թագ է ուղարկում՝ հաստատելով նրա իշխանությունը Հայաստանում³³¹: Հետաքրքիր է, որ Անանունը այդ իրադարձությունները նկարագրում է որպես Յուսուֆի բանտարկությունից ութ տարի անց տեղի ունեցած դեպքեր: Ի դեպ, նա սխալմամբ Յուսուֆի բանտարկության տարիները հավասարեցնում է ութի, մինչդեռ Յուսուֆը բանտարկությունից ազատվել էր շատ ավելի վաղ՝ 922 թ.³³²: Ակնհայտ է, որ պատմիչը նկատի ունի Յուսուֆի բանտարկությունից (919 թ.) հետո ութ տարի անց տեղի ունեցածը, այսինքն՝ 927 թ. դեպքերը, որոնք միահյուսվել են Յուսուֆի՝ բանտից ազատվելու պատմության հետ: Այդ ժամանակ վախճանվեց Գուրգեն Արծրունին՝ Գագիկի եղբայրը³³³, որը 924 թ. վերջին, Վասպուրականում Հովհաննես Դրասխանակերտցու հաստատվելիս կենդանի էր³³⁴: Այդ իրողությունն իր հերթին հիմնավորում է, որ Անանունի նշած իրադարձությունը վերաբերում է ոչ թե Յուսուֆի՝ ազատություն ստանալուց (922 թ.) անմիջապես հետո ընկած շրջանին, այլ նրա ձերբակալվելուց ութ տարի անց տեղի ունեցած դեպքերին: Անանունն այնուհետև տեղեկացնում է, որ եղբոր մահից հետո Գագիկ Արծրունին «միապետեալ զբոլոր աշխարհս Հայաստան, ... բազմացուցանէ զխաղաղութիւն ի Հայաստան աշխարհի»³³⁵: Ի վերջո, պատմիչը հաղորդում է, որ Գուրգեն Արծրունու մահվան առիթով հայտարարված սուգն անցնելուց հետո Յուսուֆը «տայ ի ձեռս արքայի (իմա՝ Գագիկ Արծրունու) զաշխարհս Հայոց եւ Վրաց, եւ ուխտ խաղաղութեան եղեալ, զնայ յերկիրն Պարսից»³³⁶:

Այն, որ վերջին տեղեկությունը, թե Գագիկին են հանձնվել Հայոց և Վրաց աշխարհները, կարող է պատմիչի ստեղծագործությունը

³³¹ Տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն, էջ 283:

³³² Տե՛ս Ibn-el-Athir, 8, էջ 95-100:

³³³ Տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն, էջ 283-284:

³³⁴ Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 579:

³³⁵ Թովմա Արծրունի և Անանուն, էջ 284:

³³⁶ Նույն տեղում:

լինել, խիստ կասկածելի է, քանզի կեղծելու պարագայում պատմիչն այդ կաներ ի սկզբանե, երբ Գագիկն արդեն Հայոց թագավոր էր հռչակվել, իսկ Աշոտ Երկաթը զբաղված էր իր տերության այս կամ այն հատվածում ծագող ելույթները ճնշելով և ոչ թե վերջում, երբ Աշոտ Երկաթի դիրքերը, ինչպես կոտեսները, մեծապես ամրապնդվել էին:

Կարելի է կարծել, որ «տայ ի ձեռս արքայի զաշխարհս Հայոց եւ Վրաց» արտահայտությունը ցույց է տալիս, որ իրականում Գագիկ Արծրունին պարզապես հռչակվել էր «թագավոր Հայոց և Վրաց»՝ ստանալով համապատասխան տիտղոսը, որը Բագրատունիների մենաշնորհն էր: Այլապես, Գագիկին Վիրքի կառավարումը հանձնելը փաստական առումով անհնար էր, ինչպես որ մինչ այդ անհնար էր եղել նրա կողմից ողջ Հայաստանը կառավարելը, թեև պարբերաբար նա հռչակվել էր որպես Հայոց թագավոր: Ակնհայտ է, որ եթե նման բան տեղի ունեցած չլիներ, նույնիսկ ամենակողմնակալ պատմիչը չէր հանդգնի նման կեղծիք հորինել:

Գագիկ Արծրունու՝ «թագավոր Հայոց և Վրաց» տիտղոսը ստանալն ու պահպանելը հիմնավորվում է նաև այն իրողությամբ, որ Աշոտ Երկաթի հաջորդ Աբասը «շահնշահ» չէր կոչվում, իսկ նրանից հետո՝ Աշոտ Գ-ն հիշատակվում էր «շահնշահ» տիտղոսով: Բյուզանդական արքունիքն էլ, իր հերթին, արձագանքելով Հայաստանում տեղի ունեցած քաղաքական փոփոխություններին, Գագիկ Արծրունուն կոչում է «իշխանաց իշխան», իսկ Աբասին՝ պարզապես «մագիստրոս»³³⁷: Ի վերջո, պետք է նշել, որ Գագիկ Արծրունու «թագավոր Հայոց և Վրաց» տիտղոսի կրելու իրողությունն ուղղակիորեն հիշատակված է Իբն Ջաֆիրի երկասիրության մեջ: Հեղինակը Գագիկ Արծրունուն հիշատակում է որպես «թագավոր Հայոց և Վրաց» (ملك ارمينية و جرجان, բառացի՝ «Հայաստանի և Վրաստանի թագավոր»)³³⁸:

³³⁷ Տե՛ս Կոստանդին Ծիրանածին, էջ 10-11: Տե՛ս նաև Կ. Յուզբաշյան, Ռոմանոս Լակապենոս կայսեր անհայտ հասցեատերը, «ԼՀԳ», 1974, № 1, էջ 36-37:

³³⁸ Տե՛ս Ibn Zāfir, 1, էջ 63: Տե՛ս նաև A. Тер-Гевондян, նշվ. աշխ., էջ 238 (հղումը՝ “Receueil des textes relatifs à l’émir Sayf al-Daula le

Հավանորեն, 927 թ. Գագիկ Արծրունուն «Հայոց և Վրաց թագավոր» հռչակելը կապված էր Հայաստանում տեղի ունեցող հույժ կարևոր զարգացումների հետ, երբ ըստ Ասողիկի՝ Աշոտ Երկաթն արաբական զորքից ազատագրում էր Հայաստանը: Անկասկած, Հայաստանից արաբների վտարումը կարող էր իրականացվել միայն 927 թ. տեղի ունեցած այն դեպքերից հետո, երբ դեպի Հայաստանի խորքերը բյուզանդական բանակի արշավանքի ժամանակ Դվինը պաշտպանում էր Յուսուֆի կողմից Հայաստանում թողնված Նասր ալ-Սուբուքին: Եթե համադրենք նշված տեղեկությունները, կարող ենք համոզված եզրակացնել, որ Գագիկ Արծրունին «թագավոր Հայոց և Վրաց» է հռչակվել այն ժամանակ, երբ Աշոտ Երկաթն սկսել է Հայաստանից արաբների վտարման պայքարը: Ամենայն հավանականությամբ, Յուսուֆը նրան թագավոր է հռչակել ընդդեմ Աշոտ Երկաթի օգտագործելու նպատակով: Նըշվածն էլ, իր հերթին, խոսում է այն բանի օգտին, որ Աշոտ Երկաթը Հայաստանից արաբների վտարումը սկսել է դեռևս Յուսուֆի կենդանության օրոք՝ 927 թ., երբ վերջինս սպանվել է: Աշոտ Երկաթի սկսած պայքարից դրդված՝ Յուսուֆը, թեև տարիներ առաջ նրան թագ էր ուղարկել, դարձյալ փորձ է կատարել Գագիկ Արծրունու միջոցով հարվածելու Բագրատունի գահակալին: Ի դեպ, դատելով այն բանից, որ Անանունը «պարծանքով» է խոսում Գագիկ Արծրունու՝ նոր կարգավիճակի «արժանանալու» մասին, ինչպես նաև այն բանից, որ Աշոտ Երկաթի մահից հետո բյուզանդական արքունիքը հենց նրան էր համարում «**Մեծ Հայքի իշխանաց իշխան**»³³⁹, պետք է կարծել, որ Գագիկ Արծրունին այս անգամ ևս ընդունել է Յուսուֆի «նվեր»-ը՝ այդպիսով դարձյալ հակադրվելով Հայոց թագավորին: Այս անգամ, սակայն, Յուսուֆի նման քայլը, դատելով Ասողիկի վերոհիշյալ տեղեկությունից, ապարդյուն եղավ: Աշոտ Երկաթին ի վերջո հաջողվեց հակառակորդի զորքը դուրս քշել Հայոց թագավորությունից:

Hamdanide”, avec annotations, édité par M. Canard, “Bibliotheca Arabica”, VIII, Paris, 1934, p. 71):

³³⁹ Կոստանդին Ծիրանածին, էջ 151:

2.5. Աշոտ Երկաթի գահակալության շրջանի թվագրումը և գահաժառանգի խնդիրը

Աշոտ Երկաթի մահը թվագրվել է 928 թ.³⁴⁰ կամ 929 թ.³⁴¹: Որպեսզի այս հարցում հստակություն ստեղծվի, հարկ է կատարել որոշակի քննություն:

Ինչպես տեսանք, Աշոտ Երկաթին վերագրվել է ութ տարվա թագավորություն, իսկ վերջինիս հաշվարկը կատարվել է 921 թ.³ շահնշահի հռչակվելուց սկսած: Շահնշահի հռչակվելու մեկնակետից Աշոտ Երկաթի գահակալության տարիների հաշվարկը բխում էր հետևյալ իրողություններից:

Առաջին. Աշոտ Երկաթը 916 թ. կայսեր կողմից ճանաչվել է իշխանաց իշխան, որը, ինչպես արդեն հիմնավորել ենք, ոչ այլ ինչ էր, եթե ոչ քրիստոնյա Այսրկովկասում Հայոց թագավորի գերագահության ճանաչում Բյուզանդիայի կողմից: Դրա հիմնավորումն է Հովհաննես Դրասխանակերտցու այն հաղորդումը, որ Աշոտ Երկաթը կայսրից «մեծավայելուչ գահիւ պատուի առեալ քան զամենայն գահերէցս»³⁴²: Իսկ Հովհաննես Դրասխանակերտցուն 915 թ. գրված նամակում Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկողայոս Միստիկոսը գրում է, թե «Մեծ և աստվածապսակյալ կայսրը ձեր խնդիրքին ուշի ուշով ունկնդիր լինելով՝ ընդառաջ գնաց և հաստատումն ու պատիվը, որ մեծ ցանկություն ունեցավ ստանալու նա, ում վստահված է ձեր իշխանությունը, տվեց: Ահա այս [բոլորը] կատարվեց կայսեր կողմից ձեզ համար»³⁴³: Կարելի է միևնույն իրադարձության վերաբերյալ երկու տեղեկությունների համադրությամբ հիմնավորել, որ

³⁴⁰ Տե՛ս Մ. Չամչյանց, նշվ. աշխ., էջ 822, А. Тер-Гевондян, նշվ. աշխ., էջ 244, «Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի յաղագս ապստամբութեան տանն Աղուանից որ ընդ ժամանակս լեալ իցէ ձեռնադրութիւնն արտաքոյ սուրբ Լուսաւորչի պթոռոյն», «Մատենագիրք Հայոց», Ժ. հատոր, Ժ. դար, Անթիլիաս-Լիբանան, 2009, էջ 247 և այլն:

³⁴¹ Մ. Օրմանյան, նշվ. աշխ., § 738, Հ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 91 և այլն:

³⁴² Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 533:

³⁴³ Հ. Բարթեկյան, Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկողայոս Միստիկոսի 101-րդ և 139-րդ թղթերը..., էջ 252, 255:

կայսրն ընդառաջել է Աշոտ Երկաթի «խնդրանք»-ին և նրան տվել «հաստատումն ու պատիվը», որը նույնանում է բոլոր գահերեցնե-րից կամ իշխանների նկատմամբ ավագության կամ գերագահու-թյան ճանաչման տեղեկությանը:

Երկրորդ. Խալիֆայության կողմից Աշոտ Երկաթին շահնշահ ճանաչելն իր բնույթով և սահմաններով, անկասկած, ամբողջովին նույնական էր կայսեր ճանաչման հետ:

Երրորդ. Հայտնի է, որ Բագրատունի առաջին թագավոր Աշոտ Մեծը, թեև խալիֆից թագ էր ստացել 883 թ., սակայն նրա թագա-վորության սկիզբ պատմիչներն հիմնականում համարում են 887-ը, քանի որ հենց այդ տարին Բյուզանդիան ճանաչեց նրա թագա-վորությունը³⁴⁴: Այսինքն՝ նրանց համար էականն այն էր, թե երբ Հա-յոց արքան, փաստորեն, միջազգայնորեն ճանաչվեց: Աշոտ Եր-կաթի պարագայում տեղի է ունեցել նույնը, բայց ճանաչման հակա-ռակ հաջորդականությամբ: Բյուզանդիայի կողմից ճանաչումը տե-ղի է ունեցել 916 թ., իսկ Սբուքի կողմից շահնշահ իռչակումը՝ 919 թ. (ըստ հեղինակների սխալ հաշվարկի՝ 921 թ.), ուստի հենց վերջինս էլ ընկալվել է որպես միջազգային ճանաչում և այդտեղից էլ կա-տարվել է Աշոտ Երկաթի թագավորության տարիների հաշվարկը՝ ստանալով թագավորության ութ տարիների վերաբերյալ սխալ ար-դյունքը:

Ըստ Ասողիկի, ինչպես տեսանք, հոր մահից հետո Աշոտ Եր-կաթն ապրել է 15 տարի՝ վախճանվելով 929 թ.: Իրականում այդ 15 տարիները վերաբերում են հենց Աշոտ Երկաթի թագավորությանը, որը հիմնավորվում է պարզ թվաբանական հաշվարկով՝ սկսած Աշոտ Երկաթի՝ 914 թ. թագադրությունից (929-914=15):

Այդպիսով, Աշոտ Երկաթն ապրեց ավելի, քան Հայոց թագավո-րության երդվյալ թշնամին՝ Յուսուֆը, որի մահից հետո Հայոց արքան ի վերջո ավարտին հասցրեց Հայաստանի ազատագրու-թյան գործը:

³⁴⁴ Տե՛ս Ա. Եղիազարյան, Աշոտ Ա Բագրատունի. թագավոր Հայոց, էջ 58-62:

Նյութն ամփոփելուց առաջ հարկ է անդրադառնալ նաև Աշոտ Երկաթի գահաժառանգի հարցին: Մ. Չամչյանցը ներկայացնում է Աշոտ Երկաթի վերջին օրերի մասին մի հորինված պատմություն, որը որոշ հետազոտողների հիմք է տվել համապատասխան եզրակացություններ կատարելու համար: Ըստ նրա՝ մահից առաջ Աշոտ Երկաթը հաշտվել է Աբասի հետ՝ նրան խոստանալով Հայոց գահը, իսկ նրա վախճանից (928 թ.) հետո Գագիկ Արծրունին Վասպուրականում կազմակերպել է Աբասի թագադրությունը³⁴⁵: Մ. Օրմանյանը իրավամբ նշում է, որ աղբյուրներում այդպիսի տեղեկություն չի պահպանվել, բայց նաև չի ժխտում նման հնարավորությունը: Ըստ նրա, քանի որ հետագա շրջանում Աբասի մասնակցությունը երկպառակություններում այլևս չի հիշատակվում, կարելի է կարծել, որ նա հաշտվել էր եղբոր հետ: Բացի այդ, Աշոտ Երկաթից իշխանության սահուն անցումը Աբասին ցույց է տալիս, որ երկու եղբայրների միջև գոյությունն ավարտվել էր մինչև Աշոտ Երկաթի մահը³⁴⁶:

Մ. Չամչյանցի՝ վերոհիշյալ տողերի վրա Վ. Վարդանյանը կառուցում է իր ենթադրությունը, թե այդ քայլով Գագիկ Արծրունին մի կողմից ճանաչում էր Աբասին որպես թագավորի, իսկ մյուս կողմից իրեն իրավունք վերապահելով թագադրել նրան՝ ընդգծում Հայաստանում իր առաջնությունը³⁴⁷: Կարծում ենք, որ աղբյուրների տեղեկություններով (Մ. Չամչյանցի տեքստում հղված աղբյուրները ներառյալ) չհիմնավորվող նման իրադարձության հավաստիությունը խիստ կասկածելի է, իսկ դրա վրա որևէ ենթադրություն կառուցելը՝ առավել ևս: Իրականում, դատելով ամեն ինչից, Աշոտ Երկաթը այդպես էլ չհաշտվեց եղբոր հետ: Ի դեպ, այնքան էլ ճիշտ չէ ասելը, որ Աբասը երկպառակություններին այլևս չի մասնակցել: Վերևում անդրադարձանք այն իրողությանը, որ Աշոտ Երկաթի դեմ անհաջող դավադրությունից բավականին ժամանակ անց, երբ Հայոց արքան արշավեց հյուսիս՝ պատժելու Վրաց իշխան Գուրգենին, վերջինիս օգնության շտապեց հենց Աբասը:

³⁴⁵ Տե՛ս Մ. Չամչյանց, նշվ. աշխ., էջ 822:

³⁴⁶ Տե՛ս Մ. Օրմանյան, նշվ. աշխ., § 738:

³⁴⁷ Տե՛ս Վ. Վարդանյան, Վասպուրականի 910-930-ական թթ.պատմության շուրջը, էջ 219:

Բացի այդ, Գագիկ Արծրունին այնքան էլ հակված չէր Աբասին թագադրելու Աշոտ Երկաթի փոխարեն, քանի որ փորձում էր անձամբ ամրապնդվել նրա կարգավիճակում: Ավելին, ինչպես տեսանք, ինչ-որ մի պահի Աշոտ Երկաթի և Գագիկ Արծրունու հարաբերությունները կարգավորվել էին՝ ձեռք բերելով դաշինքի բնույթ:

Դժվար է միանշանակ կարծիք հայտնել, թե ինչպե՞ս է կարգավորվել գահաժառանգի հարցը, և ու՞մ է Աշոտ Երկաթն իրեն հաջորդ նշանակել: Խնդիրն այն է, որ նա որդի չուներ: Փաստերը ցույց են տալիս, որ նա վախճանվել է հասուն, բայց ոչ ծեր հասակում: 929 թ. դրությամբ նրա տարիքը քիչ թե շատ հավանականությամբ ճշտելու համար անհրաժեշտ է անդրադառնալ Հովհաննես Դրասխանակերտցու հիշատակություններին, որոնք վերաբերում են X դ. սկզբի դեպքերին: Ատրպատականի ամիր Աֆշինի մոտ 897-901 թթ. պատանդ պահվող արքայազն Աշոտը պատմիչի կողմից սկզբում հիշատակված է որպես «**զորդեակ** իւր (իմա՝ Սմբատ Ա-ի - Ա. Ե.)»³⁴⁸, իսկ 901 թ. դրությամբ՝ «**որդի** արքայի»³⁴⁹: Ամենայն հավանականությամբ, Աշոտը սկզբում պարզապես պատանի էր և միայն որոշ ժամանակ անց է չափահաս դարձել: Հետևաբար 929 թ. նա դեռ ուժերի ծաղկման շրջանում էր և վախճանվել էր թերևս անակնկալ կերպով՝ հանկարծամահ լինելով: Նման պարագայում կարելի է եզրակացնել, որ նա գահաժառանգի հարցը լուծել այդպես էլ չէր հասցրել:

Փաստորեն, Հայոց նշանավոր զորավար-գահակալի՝ անընդհատ պատերազմներով նշանավորված թագավորության տարիները, ի վերջո, ավարտվել են նրա գլխավոր նպատակի իրականացմամբ՝ Հայաստանի ազատագրությամբ ու Հայոց թագավորության վերահաստատմամբ: Այդպիսով՝ նա նախապատրաստեց այն ամուր հենքը, որի վրա հետագա շուրջ 100 տարիների ընթացքում զարգացավ Հայոց թագավորությունը: Ահա՛ հենց այս իրողությունն է, որ Աշոտ Երկաթին առանձնացրել է բազմաթիվ այլ գահակալներից և հետագա սերունդների հիշողության մեջ ամրագրել «անհնարին» քաջությամբ օժտված և ողջ կյանքը հայրենի երկրին նվիրած թագավորի մասին նվիրական հիշողությունը:

³⁴⁸ Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 472:

³⁴⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 473-474:

Ամփոփելով կատարված քննության արդյունքները՝ նշենք, որ Աշոտ Երկաթի գահակալության շրջանի ժամանակագրությունն ընդհանուր առմամբ ունի հետևյալ ընթացքը:

Ա. Աշոտ Երկաթը թագադրվել է 914 թ. սկզբին Սմբատ Ա-ի սպանությունից հետո՝ շուրջ մեկամյա ազատագրական պատերազմում Հայոց թագավորության կենտրոնական և հյուսիսարևելյան շրջաններն ազատագրելուց հետո:

Բ. 915 թ. Աշոտ Երկաթը մեկնում է Կոստանդնուպոլիս՝ դիմելու կայսեր օգնությանը, քանի որ թագադրությունից հետո աստիճանաբար նրա դեմ էին դուրս եկել նախկին դաշնակիցները, ինչի հետևանքով Յուսուֆի զորքերը նոր ասպատակություններ էին սկսել:

Գ. 916 թ. Աշոտ Երկաթը վերադարձել է Բյուզանդիայից և նոր ազատագրական պատերազմ սկսել: Այդ ժամանակ նրանից բացի Հայոց թագավոր էին հռչակվել Գագիկ Արծրունին և Աշոտ Շապուհյանը:

Դ. 916-918 թթ. Աշոտ Երկաթը պատերազմում էր իր հիմնական հակառակորդ Աշոտ Շապուհյանի դեմ, որին նա ի վերջո կարողացավ հնազանդության բերել:

Ե. 919 թ. Աշոտ Երկաթը դաշնակցային կապեր հաստատեց Յուսուֆ ամիրին փոխարինած Սբուքի հետ՝ նրա կողմից հռչակվելով շահնշահ:

Զ. Մինչև 922 թ. Աշոտ Երկաթի դեմ տեղի են ունենում մի շարք ապստամբություններ, որոնք զգալիորեն խաթարում են Հայոց թագավորի դիրքերը:

Է. 922 թ. Յուսուֆի վերադարձից հետո Աշոտ Երկաթը հայտնվեց ծանր վիճակում, թեև ուժերի գերլարումով կարողացավ 924 թ. նրա զորապետներից Բշրին հաղթել Սևանի ծովամարտում:

Ը. 927 թ. Աշոտ Երկաթը նոր ազատամարտ է սկսել և արդեն Յուսուֆի մահվանից հետո Հայոց թագավորությունը մաքրել Ատըր-պատականի զորքերից՝ հաղթանակով ավարտելով երկար տարիների իր պայքարը:

ՎԵՐՋԱՔԱՆ

Աշոտ Երկաթի գահակալության շրջանը Բագրատունյաց թագավորության համար ունեցավ հանգուցային նշանակություն: Այդ ժամանակ որոշվում էր թագավորության լինել-չլինելու հարցը, և Աշոտ Երկաթին հաջողվեց վերահաստատել այն:

913 թ. Սմբատ Ա-ի գերեվարությունից հետո Հայոց թագավորությունն օրհասական օրեր էր ապրում: Այն ենթարկվում էր Ատըրպատականի ամիր Յուսուֆի զորքերի անընդհատ ասպատակություններին, իսկ պետական համակարգն ու այդ թվում նաև բանակը համարյա ամբողջությամբ քայքայվել էին:

Աշոտ Երկաթն ասպարեզ իջավ այդ դժվարին պայմաններում ու փոքրիկ զորաջոկատով անհապաղ սկսեց պայքարը Յուսուֆի զորքի դեմ: Իր գործունեության առաջին իսկ շրջանում նա հանդես բերեց կամք, քաջություն և անհատնում եռանդ, որակներ, որոնք նրա գլխավոր բնութագրիչներն էին նաև գահակալության տարիներին՝ ծնելով «Երկաթ» պատվանունը: Առաջնորդի հենց այդ որակների շնորհիվ է, որ Սմբատ Ա թագավորի գերեվարությունից հետո հուսահատության ու ավերի մատնված երկիրը կարողացավ ոտքի կանգնել, դիմագրավել թշնամուն և, ի վերջո, հասնել հաղթանակի:

Ատրպատականի ամիր Յուսուֆն Աշոտ Երկաթի պարագայում ևս փորձեց օգտագործել այն խաղաքարտը, որն ապահովել էր նրա հաջողությունը Սմբատ Ա-ի դեմ պայքարում: Նա մեկի փոխարեն նույնիսկ երկու հակաթուռ Հայոց թագավոր հակադրեց Աշոտ Երկաթին, բայց ապարդյուն: Վերջինս այդպես էլ չնահանջեց դժվարությունների առաջ և զիջումների չգնաց՝ անվարան շարժվելով դեպի գլխավոր նպատակակետը՝ Հայաստանի ազատագրումը:

Ազատագրական պատերազմին զուգընթաց համակարգային կերպափոխման էր ենթարկվում Հայոց թագավորությունը: Նոր իրողությունների պայմաններում այն այլևս չէր կարող լինել կենտրոնածիզ պետություն, ինչպիսին էր Աշոտ Ա-ի և Սմբատ Ա-ի գահակալության շրջանում: Հայաստանում այլ թագավորների առկայության

պայմաններում այն վերածվեց ավատատիրական դաշնության՝ շահնշահ կամ արքայից արքա Աշոտ Երկաթի գլխավորությամբ:

Աշոտ Երկաթը պատկանում է պատմության մեջ խորը հետք թողած այն գործիչների թվին, որոնց փառքը դարեդար գովերգվել է սերունդների կողմից՝ նրանց անսահման քաջության ու նվիրումի, ինչպես նաև խաղացած հանգուցային դերի շնորհիվ: Այդպիսի գործիչներին կոչում են «**դարաշրջանի հերոսներ**» կամ «**պատմական անձեր**»: Նման անհատների խոսքն ու գործը լավագույնն է իրենց **դարաշրջանում**: Նրանց առաքելությունը զարգացման հաջորդ «աստիճան»-ի գիտակցումն է, դրան հասնելը սեփական նպատակ դարձնելն ու ողջ ներուժը հանուն այդ նպատակի իրականացման ներդնելը³⁵⁰:

Աշոտ Երկաթն իր **դարաշրջանի հերոսն էր**: Նա անմնացորդ նվիրվեց մի գերնպատակի և, ի վերջո, հասավ դրան: Նա հեռացավ հաղթական՝ պատմության մեջ մտնելով որպես մի թագակիր, «**որոյ ի մարտս զաւրաց ոչ պիտաւորէր, այլ անձամբ մղէր զպատերազմն**»³⁵¹:

³⁵⁰ Տե՛ս **G. W. F. Hegel**, The Philosophy of History, Kitchener, Ontario, 2001, pp. 45-47.

³⁵¹ Տե՛ս Ասողիկ, էջ 748:

Summary

ASHOT THE IRON. ARMENIAN KING

Ashot the Iron is one of the greatest figures in the history of Armenia. The period of his reign (914-929) has an epochal importance for the history of Armenia, because he managed not only to save the Armenian kingdom from collapse, but also restored the state system, which was destroyed during the prolonged invasion of the Atropatene ruler troops.

Ashot the Iron was declared as the heir to the throne in 903. In 910 he headed the Armenian army against the troops of Atropatene in Dzknavadjar battle, where his army was defeated.

After Smbat I the Armenian king (891-914) was captured, in 913 Ashot the Iron led the war against the troops of Atropatene and managed to liberate the central and north-eastern parts of the Armenian kingdom.

In 914 he was crowned and declared as the king of Armenia.

Soon he faced a number of serious difficulties, which forced him to appeal to the Byzantine emperor for help. In 915 he left for Constantinople, where was received with honors. There he got the information about the new attacks of the ruler of Atropatene and hurriedly returned to Armenia. The Byzantine emperor sent troops to assist him against the enemy.

Ashot the Iron returned from Constantinople in 916 and immediately restarted the liberation war against the troops of ruler of Atropatene, who had already crowned Ashot, who was the son of brother of the king of Armenia Smbat I Shapuh.

There were 3 kings of Armenia at that time: Ashot the Iron, Gagik Artsruni from Vaspurakan and Ashot, son of Shapuh.

But the new successes of Ashot the Iron forced the ruler of Atropatene to recognize him as the supreme king of Armenia.

After Yusuf the ruler of Atropatene was captured in 919, Subuk, new ruler of Atropatene proclaimed Ashot the Iron as a King of Kings.

After Yusuf was released and returned he attacked Vaspurakan. After he left for Atropatene and sent to Armenia Nasr al-Subuki as a governor. Soon the army of Nasr was defeated by the troops of Ashot the Iron.

In 924 the battle of Sevan Lake took place. The Arabian army headed by Bashar was defeated.

After Yusuf died in 927, Ashot the Iron liberated Armenia from the troops of Atropatene and restored the state system of the kingdom. And beginning from the last years of his reign Armenia enjoyed peace and was developing for a century.

Ashot the Iron played key role in the history of the Bagratid Kingdom. The figures such Ashot the Iron in the world history are called “heroes of the epoch” or “historical persons”.

АШОТ ЖЕЛЕЗНЫЙ: ЦАРЬ АРМЯНСКИЙ

Ашот Железный является одним из величайших деятелей в истории Армении. Период его правления (914-929) имеет эпохальное значение в истории Армении, поскольку он смог не только сохранить Армянское царство от крушения, но и восстановить государственную систему, разрушенную во время продолжительного вторжения войск властителя Атропатены.

Ашот Железный был объявлен наследником трона в 903 году. В 910 году он возглавил армянскую армию против войск Атропатены в битве при Дзкнавачар, где его армия потерпела неудачу.

После того, когда армянский царь Смбат I (891-914) был взят в плен, в 913 году Ашот Железный возглавил войну против войск Атропатены и смог освободить центральные и северо-восточные части Армянского царства.

В 914 году он был коронован и объявлен царем Армении.

Вскоре Ашот Железный столкнулся с рядом серьезных трудностей, которые заставили его обратиться к Византийскому императору за помощью. В 915 году он отправился в Константинополь, где был принят с почестями. Там Ашот Железный получил информацию о новых вторжениях властителя Атропатены и поспешно вернулся в Армению. Византийский император послал войска, чтобы помочь ему победить врага.

Вернувшись из Константинополя в 916 году, Ашот Железный сразу же возобновил освободительную войну против войск Юсуфа, эмира Атропатены, который к тому времени уже короновал Ашота, сына брата царя Армении Смбата I Шапуха.

К этому времени действовали три царя Армении: Ашот Железный, Гагик Арцруни из Васпуракана и Ашот, сын Шапуха.

Но новые успехи Ашота Железного заставили эмира Атропатены признать его главенствующим царем Армении.

После того, как в 919 году был арестован эмир Атропатены Юсуф, новый эмир Атропатены Субук провозгласил Ашота Железного царем царей.

После освобождения Юсуф вернулся и сперва атаковал Васпуракан, а затем ушел в Атропатену. Он послал в Армению Насра ал-Субуки в качестве заместителя. Вскоре его войска были разбиты военным отрядом Ашота Железного.

В 924 году произошло сражение на озере Севан. Арабское войско, возглавляемое Башаром, было разбито.

Сразу же после смерти Юсуфа (927 год) Ашот Железный смог освободить Армению от войск Атропатены и восстановить государственную систему царства. И начиная с последних лет его правления, для Армении начался почти 100-летний период мира и процветания.

Ашот Железный сыграл ключевую роль в истории царства Багратидов. Личности, подобные Ашоту Железному, в мировой истории называются “героями эпохи” или “историческими личностями”.

ՑԱՆԿԵՐ

Ա. ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

Աբաս Բագրատունի (Աշոտ Երկաթի եղբայր) – 8, 23, 29, 31, 38, 49, 51, 56, 60-61, 63, 69-70, 77, 82, 91, 95-96
Ադոնց Ն. – 29, 33, 37, 43-44, 61, 68

Ալեքսանդր (Բյուզանդիայի կայսր) – 14

Ալիշան Ղ. – 5

Աղայան Էդ. – 76

Աճառյան Հ. – 75

Աճարա – 23

Անանուն (պատմիչ) – 11-13, 15, 89-90, 92

Աշոտ Ա Բագրատունի (Մեծ) – 7, 8, 29, 36, 48-49, 52, 94, 98

Աշոտ Բագրատունի (սպարապետ, Շապուհյան) – 10, 12, 27, 48, 50-51, 54-55, 57-58, 63, 65, 71, 80-81, 97

Աշոտ Գ Բագրատունի – 51-52

Աշոտ Գնթունի – 56

Աշոտ Երկաթ – 5-10, 12-16, 19, 21-35, 37-75, 77-78, 80-99

Ապուսիճի որդի, տե՛ս Յուսուֆ (Ատրպատականի ամիր)

Առաքելյան Բ. – 34

Ասողիկ – 12-13, 21, 28-33, 49-50, 52, 67-68, 72, 84-90, 92, 94

Ատրներսեհ (Աղվանից թագավոր) – 35

Ատրներսեհ Բագրատունի (Կղարջքի թագավոր) – 8, 21, 24-25, 27, 33-34, 38-40, 48, 50-51, 63

Աֆշին (Ատրպատականի ամիր) – 8-9, 96

Բաբկեն Սյունի – 79, 83

Բարթիկյան Հ. – 14-15, 43

Բարսեղ (Վասիլ, Բյուզանդիայի կայսր) – 14

Բշր (Բաշար) – 80-81, 97

Գագիկ Ա Բագրատունի – 52

Գագիկ Արծրունի – 10-14, 21, 27-28, 35, 48-51, 54, 58, 62, 64-67, 73, 78-79, 82-83, 90-92, 95-97

Գագիկ Վանեցի, տե՛ս Գագիկ Արծրունի

Գրեն Ա. – 34

Գրիգոր Անավարզեցի – 16, 18

Գրիգոր (Սահակ Սևադայի որդի) – 58, 64

Գուրգեն Արծրունի – 90

Գուրգեն Գնունի – 18-19

Գուրգեն (Վրաց իշխան) – 23, 34-35, 38, 56, 58, 60, 63, 70-71, 77, 84-85, 95

Գևորգ իշխան – 81

Գևորգ Հավնունի – 67

Գևորգ Մարգալետունի – 73

Դավիթ Բագրատունի
(Սմբատ Ա-ի եղբայր) – 8

Դավիթ Գնունի – 18-19

Երեմյան Ս. – 29, 50-51

Զոռ (կայսրուհի) – 42, 44, 47

Թեոդորոս Վասիլիկոս – 39, 54

Թեոփանեսի Շարունակող – 43-47

Թովմա Արծրունի – 49

Թումանով Կ. – 40

Իբն ալ-Ասիր – 62, 84-86

Իբն Ջաֆիր – 91

Լեո – 81

Լևոն Զ (Բյուզանդիայի կայսր)

– 14, 27, 31-32, 50, 69

Կանար Մ. – 25

Կիրակոս Արևելցի – 16, 18

Կիրակոս Գանձակեցի – 26-27

Կիրակոսներ – 18-19, 80

Կյուրիկե (Կախքի
քորեպիսկոպոս) – 35

Կոստանդին Գ (Աբխազաց
թագավոր) – 24, 35, 40

Կոստանդին Ծիրանածին – 25, 47, 59, 85, 88

Հարությունյան Հ. – 25, 39

Հովհաննես

Դրասխանակերտցի – 8, 10, 12-15, 18-22, 24, 26-29, 31-33, 35-47, 49-50, 54, 60-63, 67-75, 77-78, 80, 82-88, 90, 93, 95

Հովհաննես Կուրկուաս – 85-86, 88

Մալխասյանց Ստ. – 76

Միքայել (Գոբրոն, նահատակ)
– 32

Մխիթար Այրիվանեցի – 17

Մխիթար Անեցի – 26

Մովսես Դասխուրանցի – 21, 36

Մովսես (Ուտիքի կառավարիչ)
– 51, 58

Մուհամմադ իբն Ուբայդուլլահ
ալ-Ֆարիկի, տե՛ս Փարկինի

Մուշեղ (Սմբատ Ա-ի որդի) – 9, 10

Մուրացան – 73-75

Յուզբաշյան Կ. – 44

Յուսուֆ (Ատրպատականի
ամիր) – 6, 9-14, 18-20, 22, 26, 29-33, 35, 39-40, 45-48, 50, 54-55, 57, 61-62, 66-67, 78-82, 89-90, 92, 94, 97-98

Նասր ալ-Սուբուքի, տե՛ս Նսր
Ներսեհ, տե՛ս Ատրններսեհ
Բագրատունի
Նիկողայոս Միստիկոս – 15,
27, 39-42, 93
Նսր – 79-84, 87, 89, 92

Շապուհ Բագրատունի
(պատմիչ) – 35
Շապուհ Բագրատունի
(Սմբատ Ա-ի եղբայրը) – 8, 10,
12, 55

Չամջանց Մ. – 17, 25, 95

Պալասանյան Ստ. – 25
Պագրատուկաս – 44

Ջահուկյան Գ. – 77
Ջաֆար ալ-Մուկթադիր
(խալիֆ) – 11

Ռոմանոս Ա Լեկապենոս
(Բյուզանդիայի կայսր) – 25,
84-86

Սահակ եպիսկոպոս – 18-19,
80
Սահակ Սյունի – 56, 79, 83
Սահակ Սևադա – 26, 36, 57-
58, 61-64
Սամվել Անեցի – 17
Սբուք (Ատրպատականի
ամիր) – 26, 50, 62, 67, 94, 97
Սեն-Մարտեն Ժ. – 25

Սիմեոն (Բուլղարիայի ցար) –
43-44
Սմբատ (Վայոց ձորի իշխան) –
83
Սմբատ Ա Բագրատունի – 5-6,
8-25, 27-32, 35-36, 39-41, 49,
53, 55-56, 59, 66, 68, 96-98
Սմբատ Բ – 52
Սմբատ Սյունի – 79
Սպքի, տե՛ս Նսր
Ստեփան Տրեթցի – 32
Ստեփաննոս Օրբելյան – 17,
20, 26
Սուբուք, տե՛ս Սբուք

Վասակ Գնթունի – 56, 70
Վասակ Սյունի – 56, 64
Վարդան վարդապետ – 18-19,
26-27, 48, 50, 69
Վարդանյան Վ. – 11-12, 95
Տեր Իսրայել – 15, 18-19
Տեր-Ղևոնդյան Ա. – 25
Տեր-Վարդանյան Գ. – 83

Ցլիկ Ամրամ – 71-75, 77-78

Փարկինի (ոստիկան) – 12, 61-
62, 66
Փարսադան Գորգիջանիձե –
29

Քրիստոս – 18

Օրմանյան Մ. – 17-18, 25, 39,
81, 95

Բ. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ

Արխագաց թագավորություն,
տե՛ս Արխագք

Արխագք – 32, 37-38, 71

Ադրիանապոլիս – 43-44

Ալանաց դրուներ – 37

Ադրակ – 79

Ադիովիտ – 59

Աղծնիք – 60

Աղստև գետ – 23, 35

Աղվանից թագավորություն,
տե՛ս Աղվանք

Աղվանք – 35-38, 40-41, 49,
51, 53

Այսրկովկաս – 5, 21, 25, 31,
36, 38-39, 41-42, 49, 51-52, 93

Այրարատ – 58-59, 65

Անի – 82

Անձևացյաց գավառ – 79

Ապահունիք – 59

Ատրպատական – 5, 8-9, 48,
54, 62, 67, 80, 83, 89-90, 96-98

Արաբական խալիֆայություն –
61, 65-66, 78, 94

Արծկե – 59

Արձեշ – 59

Արշարունիք – 24

Արևելք – 41-42

Քազարան – 10, 63, 65, 80

Քազրևանդ – 23

Քասեն գավառ – 88

Քարձր Հայք – 60

Բյուզանդիա, Բյուզանդական
կայսրություն – 7, 14, 25-26,
31-33, 39-42, 44-45, 47-49, 52,
54, 60, 66, 69-70, 84, 88, 93-
94, 97

Բյուրական – 8, 79-80

Փամիրք – 71, 84

Փարդման գավառ – 26, 36,
59, 64

Փեղա ամրոց – 81, 83

Փեղամ, Փեղամա ծով, տե՛ս
Սևանա լիճ

Փեղարքունիք գավառ – 64

Փուգարաց աշխարհ, տե՛ս
Փուգարք

Փուգարք – 23, 31-34, 36-38,
41, 46, 56, 58, 63

Ղարյունից բերդ – 65

Ղերջան – 37, 44, 54

Ղվին – 9-10, 18, 20, 46, 51-52,
55, 57-58, 63, 71, 79, 81, 87-89

Եգերք, տե՛ս Արխագք

Եկեղյաց գավառ – 37, 44

Երագգավորս – 10, 61

Երնջակ ամրոց – 14, 20

Ջարևանդ գավառ – 79

Էրեղվ գյուղ – 35

Թորդան – 54

Խալիֆայություն, տե՛ս
Արաբական խալիֆայություն
Խլաթ – 59

Ծաղկոտն – 58, 65, 79
Ծոփք – 60

Կախք – 35, 37-38, 40, 58
Կայան բերդ – 64
Կապույտ բերդ – 10-11, 14, 32
Կարին – 59
Կղարջք – 8, 10, 21, 23-24, 38, 50
Կոգովիտ – 58, 65, 79
Կողբ դաստակերտ – 55, 58, 71, 87
Կոստանդնուպոլիս – 6, 14, 26-28, 30-32, 37-47, 53-54, 69, 93, 97
Կովկասյան լեռներ – 33-34, 37, 52, 56
Կոտայք գավառ – 71
Կորի, տե՛ս Կորո ձոր գավառ
Կորո ձոր գավառ – 59
Կրուստ ամրոց – 70
Կուր գետ – 72

Հայաստան – 5-12, 16, 21-27, 31-34, 36-39, 42, 45-49, 51-53, 55-56, 59-63, 66, 72-74, 79, 81-98
Հայոց աշխարհ, տե՛ս
Հայաստան

Հայոց Արևելից կողմեր – 58
Հայոց թագավորություն, տե՛ս
Հայաստան
Հարավային Օսիա – 35
Հարք – 59
Հեր – 79
Հիսն Մանսուր – 37

Ձկնավաճառ – 10
Ձորագետ – 59
Ձորովոր գավառ – 64

Ղվել – 23

Ճակատք – 58

Մագազ գավառ – 80
Մասյացոտն – 58, 65
Մարաշ – 37
Մարդաղի – 59
Մարդաստան – 54
Մեծ Հայք – 52, 92

Նախճավան – 79
Նիզ գավառ – 10

Շամշուղե ամրոց – 56, 63, 70
Շիրակ գավառ – 23, 60

Պարսից աշխարհ – 90

Սակուրեթ – 56
Սամոսատ – 37

Սյունիք – 31, 33, 55-56, 58-59, 79-80

Սևանա ամրոց – 81

Սևանա լիճ – 5, 56, 59, 97

Սևանա կղզի – 80, 82

Վաղավերն գյուղ – 57

Վաղարշակերտ ամրոց – 11, 13-14, 28

Վաղարշապատ – 57-58

Վայոց ձոր – 83

Վասպուրական – 10, 12, 33, 45-47, 54, 59, 78-79, 81-83, 90, 95

Վիրք – 8-9, 23, 31, 34-35, 38, 49, 51, 56, 58, 60, 63, 65, 71, 77, 84, 90-92, 95

Տայք – 59

Տաշիր գավառ – 23

Տավուշ գավառ – 64

Տարոն – 37, 39, 44, 54, 60

Տիվին, տե՛ս Դվին

Տոսպ գավառ – 54

Տուրուբերան – 59-60

Տփղիս – 27, 56

Ուղթիս – 59

Ուտի գավառ – 64, 75

Ուտիք – 33, 35-36, 57-58, 60-61, 71-75

Քարունջ գյուղաքաղաք – 79

Գ. ԺՈՂՈՎՈՒՐՆԵՐԻ, ՑԵՂԵՐԻ ԵՎ ՏՈՀՄԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐ

Արաբներ – 88, 92

Արժրունիներ – 11, 13, 27, 31,
47, 51, 82, 89

Բագրատունի,

Բագրատունիներ – 5, 7-8, 10,
25, 49-51, 53, 59-61, 65, 82,
88, 91-92, 94, 98

Բյուզանդացիներ – 87-88

Գնթունիներ – 56

Գնունիներ – 18-19

Գուգարացիներ – 33-34, 37

Եգերացիներ – 33-34

Լեզգիներ – 51

Կայսիկներ – 59

Հայեր – 51

Հայկազուններ – 56

Հունականք (հույներ) – 33-34,
37

Մենգրելներ – 34

Սյունիներ – 46

Ուդիներ – 34

Ուտեացիներ – 33-35

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա. ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Անանուն Զրուցագիր՝ կարծեցեալ Շապուհ Բագրատունի, Պատմութիւն, թարգմանութիւնը, առաջաբանը եւ ծանոթագրութիւնները՝ Վարագ Առաքելեանի, Ե., 2011:
2. «Գիրք որ կոչի Այսմաւուրք», Կ. Պոլիս, 1730:
3. «Դիվան հայ վիմագրության», պրակ I, Անի քաղաք, կազմեց Հ. Ա. Օրբելի, Ե., 1966:
4. Թեոփանեսի Շարունակող. Օտար Աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 15, Բյուզանդական աղբյուրներ, Ե, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հ. Բարթիկյանի, Ե., 1990:
5. Թովմա Արծրունի եւ Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց, «Մատենագիրք Հայոց», ԺԱ. հատոր, Ժ. դար, Պատմագրութիւն, Անթիլիաս-Լիբանան, 2010:
6. Իբն ալ-Ասիր. Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 11, Արաբական աղբյուրներ, Բ, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Արամ Տեր-Ղևոնդյանի, Ե., 1981:
7. Լ. Մելիքսեթ-Բեկ. Վրաց աղբյուրները Հայաստանի յեվ հայերի մասին, քաղվածքներ վրացերեն բնագրերից հայերեն թարգմանությամբ. ներածություն-ծանոթագրություններով յեվ հավելվածներով, հատոր Ա. (Ե-ԺԲ դար), Յերեվան, 1934:
8. Լ. Մելիքսեթ-Բեկ. Վրաց աղբյուրները Հայաստանի յեվ հայերի մասին, քաղվածքներ վրացերեն բնագրերից հայերեն թարգմանությամբ, ներածություն-ծանոթագրություններով յեվ հավելվածներով, հ. Բ. (ԺԳ-ԺԸ դար), Յերեվան, 1936:
9. Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Ե., 1961:
10. Կոստանդին Ծիրանածին. Օտար Աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 6, Բյուզանդական աղբյուրներ, Բ, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հ. Բարթիկյանի, Ե., 1970:

11. «Համաբարբառ յայսմաւորք», Ղ, Ապրիլ (նախածերենցյան 6 խմբագրությունների), Ս. Էջմիածին, 2009:
12. «Համաբարբառ յայսմաւորք», Ե, Մայիս (նախածերենցյան 6 խմբագրությունների), Ս. Էջմիածին, 2010:
13. «Համառօտ պատմութիւն Վրաց ընծայեալ Ջուանշէրի պատմչի», Վենետիկ, 1884:
14. «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862:
15. «Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ.», հ. I, կազմեց Վ. Հակոբյան, Ե., 1951:
16. «Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ.», հ. II, կազմեց Վ. Հակոբյան, Ե., 1956:
17. Մատթեոս Ուռհայեցի, ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898:
18. Մխիթար Անեցի, Մատեան աշխարհավէպ հանդիսարանաց, աշխատասիրութեամբ Հ. Մարգարյանի, Ե., 1983:
19. «Մխիթարայ Այրիվանեցոյ Պատմութիւն ժամանակագրական», ի լոյս ընծայեաց Բ. Պ., Ս. Պետերբուրգ, 1867:
20. Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը՝ Վ. Առաքելյանի, Ե., 1963:
21. «Յայսմաւորք», ըստ կարգի ընտրելագոյն օրինակի Յայսմաւորաց Տէր Իսրայէլի, ի Կոստանդնուպօլիս, 1834:
22. «Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահնի քէօթուկը)», աշխատասիրութեամբ՝ Պ. Մուրադեանի, Ս. Էջմիածին, 2007:
23. «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցոյ Պատմություն Հայոց», բնագիրը Մ. Էմինի, 1996:
24. «Յովհաննու Կաթողիկոսի Դրասխանակերտցոյ Պատմություն Հայոց», «Մատենագիրք Հայոց», ԺԱ. հատոր, Ժ. դար, Պատմագրութիւն, Անթիլիաս-Լիբանան, 2010:
25. «Պատմութիւն Անանուն Զրուցագրի» (կարծեցեալ Շապուհ Բագրատունի), թարգմանությունը գրաբարից, առաջաբանն ու ծանոթագրությունները Մ. Հ. Դարբինյան-Մելիքյանի, Ե., 1971:
26. «Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1911:

27. Սամուէլ Անեցի եւ շարունակողներ, Ժամանակագրութիւն (Ադամից մինչեւ 1776 թ.), աշխատասիրությամբ Կ. Մաթևոսյանի, Ե., 2014:
28. Ստեփանոս Տարաւնեցի Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, «Մատենագիրք Հայոց», ԺԵ. հատոր, Ժ. դար, Պատմագրութիւն, գիրք Բ., Ե., 2011:
29. «Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի յաղագս ապստամբութեան տանն Աղուանից որ ընդ Ժամանակս լեալ իցէ ձեռնադրութիւնն արտաքոյ սուրբ Լուսաւորչի աթոռոյն», «Մատենագիրք Հայոց», Ժ. հատոր, Ժ. դար, Անթիլիաս-Լիբանան, 2009:
30. «Քարթլիի մատյան», թարգմ. Վ. Մարտիրոսյանի և Հ. Սկրտովյանի, մաս Ա, «ԼՀԳ», 1989, № 9:
31. Вахушти Багратиони, История царсва Грузинского, перевод Н. Накашидзе, Тб., 1976.
32. “Картлис цховреба (История Грузии)”, Тб., 2008.
33. Продолжатель Феофана. Жизнеописания византийских царей, Санкт-Петербург, 1992.
34. Hovhannēs Draskhanakertc’i, History of Armenia, Translation and Commentary by Rev. Krikor H. Maksoudian, Atlanta, Georgia, 1987.
35. Ibn-el-Athiri Chronicon quod perfectissimum inscribitur, ed. C. J. Tornberg, vol. VIII, Lugduni Batavorum, 1862.
36. Ibn Zāfir, Akhbār al-duwal al-munqati’a, ǧ. 1, Irbid, 1999.
37. “Receueil des textes relatifs à l’émir Sayf al-Daula le Hamdanide”, avec annotations, édité par M. Canard, “Bibliotheca Arabica”, VIII, Paris, 1934.

Բ. ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

38. Ադոնց Ն., Երկեր, հ. Ա, Ե., 2006:
39. Ադոնց Ն., Երկեր. հ. Ե, Ե., 2012:
40. Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, հ. Ա, Ե., 1976:
41. Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, հ. Բ, Ե., 1976:
42. Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. Ա, Ե., 1971:

43. Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. Գ, Ե., 1977:
44. Ավդալբեգյան Մ., «Յայսմաուրք» ժողովածուները և նրանց պատմագրական արժեքը, Ե., 1982:
45. Գրիգորյան Գ., Տարոնի Բագրատունիների ֆեոդալական իշխանությունը IX-X դարերում, Ե., 1983:
46. Գրիգորյան Փ., Սմբատ Ա. Բագրատունի, Ե., 1946:
47. Եղիազարյան Ա., Աշոտ Ա Բագրատունի. թագավոր Հայոց (թագադրության թվականը և գահակալության տարիները), Ե., 2014:
48. Եղիազարյան Ա., Հայ Բագրատունիների տերությունը (885-908 թթ.). պատմաաշխարհագրական ուսումնասիրություն, Ե., 2011:
49. «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հ. Ա, Ե., 1969:
50. «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հ. Դ, Ե., 1980:
51. Լեո, Երկերի ժողովածու, հ. Բ, Ե., 1967:
52. «Հայ ժողովրդի պատմություն», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., հ. III, Ե., 1976:
53. Հարությունյան Հ., Հայաստանը IX-XI դարերում, Ե., 1959:
54. Ղազարեան Ռ., Գրաբարի բառարան, հ. Ա, Ե., 2000:
55. Ճանաչեան Մ., Դաւիթ կիւրապաղատ (պատմական ուսումնասիրութիւն), Վենետիկ, 1972:
56. Մաթևոսյան Ռ., Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, Ե., 1990:
57. Մալխասեանց Ստ., Հայերէն բացատրական բառարան, հ. Ա, Ե., 1944:
58. Մալխասեանց Ստ., Հայերէն բացատրական բառարան, հ. Գ, Ե., 1944:
59. Մանանդյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ., Բ. մասի նյութեր, Երևան, 1960:
60. Մարկուարտ Յո., Հայ Բագրատունեաց ճիւղագրութիւնը, գերմաներէնէ թարգմանեց Հ. Մ. Հապոզեան, Վիեննա, 1913:
61. Մուրացան, Գևորգ Մարգաբետունի, Ե., 1977:

62. «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», Երկասիրություն Երից վարդապետաց Հ. Գաբրիելի Աւետիքեան, Հ. Խաչատրոյ Սիրմէլեան, Հ. Մկրտչի Աւգերեան, Կ. Ա, Վենետիկ, 1836:
63. «Նուագք Հ. Դեւոնդեայ Մ. Ալիշան Մխիթարեան վարդապետի», Կ. Վ, Վենետիկ, 1867
64. Չամչեանց Մ., Պատմություն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ 1784, Կ. Բ., Վենետիկ, 1785:
65. Պալասանեան Ստ., Պատմություն Հայոց (սկզբից մինչեւ մեր օրերը), Թիֆլիս, 1902:
66. Զահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010:
67. Վարդանյան Վ., Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը 908-1021 թթ., Ե., 1969:
68. Տեր-Ղևոնդյան Ա., Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Ե., 1965:
69. Օրմանեան Մ., Ազգապատում, Կ. Ա, Կոստանդնուպոլիս, 1912:
70. Анчабадзе З., Из истории средневековой Абхазии (VI-XVII вв.), Сухуми, 1959.
71. Ашхацава С., Пути развития Абхазской истории, Сухуми, 1925.
72. Васильев А., Политические отношения Византии и арабов за время Македонской династии (867-959), "Записки историко-филологического факультета императорского С.-Петербургского университета", часть LXVI, С.-Петербург, 1902.
73. Грен А., Династия Багратидов в Армении, "Журнал министерства народного просвещения", часть ССХС, С.-Петербург, 1893, ноябрь.
74. Тер-Гевондян А., Армения и Арабский халифат, Е., 1977.
75. Юзбашян К., Армянские государства эпохи Багратидов и Византия IX-XI вв., М., 1988.
76. Doelger F., Regesten der Kaiserurkunden des ostroemischen Reiches. Berlin-Muenchen, 1924, Bd. 1.
77. Hegel G. W. F., The Philosophy of History, Kitchener, Ontario, 2001.
78. Runciman S., The Emperor Romanus Lecapenus and His Reign: A Study of Tenth-Century Byzantium, Cambridge, 1988.

79. Saint-Martin J., Mémoires historiques et géographiques sur l'Arménie, I, Paris, 1818.
80. Stephenson C., Mediaeval Feudalism, New York, 1965.
81. "The Cambridge History of Byzantine Empire", Cambridge, 2008.
82. "The Cambridge Medieval History", vol. IV, "The Byzantine Empire", part I, Cambridge, 1966.

Գ. ՀՈՂՎԱԾՆԵՐ

83. Բարթիկյան Հ., Բյուզանդիան և հայ պետականությունը X-XI դդ., «ԼՀԳ», 1996, № 2:
84. Բարթիկյան Հ., Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկողայոս Միստիկոսի 101-րդ և 139-րդ թղթերը՝ ուղղված Հովհաննես Դրասխանակերտցուն և Սմբատ Ա թագավորին, «ՊԲՀ», 1966, № 4:
85. Դանիելյան Է., Բյուզանդական արշավանքները Հայաստան (X դ. առաջին քառորդ), «ԼՀԳ», 1977, № 2:
86. Եղիազարյան Ա., Աշոտ Երկաթի դարաշրջանը: Մաս առաջին. Հայոց թագավորության պահպանման հիմնախնդիրը, «ՎԷմ», 2014, № 4:
87. Եղիազարյան Ա., Աշոտ Երկաթի դարաշրջանը: Մաս երկրորդ. Հայոց թագավորության վերահաստատումը, «ՎԷմ», 2015, № 1:
88. Եղիազարյան Ա., Հայոց իշխանաց իշխանը Բագրատունի առաջին արքաների օրոք, «ՎԷմ», 2014, № 1:
89. Եղիազարյան Ա., Հայոց Սմբատ Ա թագավորի արխագական արշավանքը, «ԼՀԳ», 2010, № 1-2:
90. Եղիազարյան Ա., Հայոց Սմբատ Ա թագավորի գահակալության շրջանի ժամանակագրությունը, «Էջմիածին», 2014, № 5:
91. Եղիազարյան Ա., Հայոց Սմբատ Ա Բագրատունի թագավորի կողմից Աղվանից և Կղարջքի իշխանների թագադրության հարցի շուրջ, «ԲԵՀ», «Հայագիտություն», 2011, № 135.1:
92. Եղիազարյան Ա., Տարոնի Բագրատունիների իշխանությունը IX դարում և X դարի սկզբին, «ԲԵՀ», 2009, № 1:
93. Երեմյան Ս., Լիպարիտ գորավարը և նրա նախորդները, «Ն. Մառի անվան կաթինետի աշխատություններ», № 2, Ե., 1947:

94. Թումանյան Բ., Տոմարական հաշվումներ, «Տեղեկագիր (հաս. գիտ.)», 1964, № 5:
95. Հովհաննիսյան Պ., Երկու ուղղություն X դարի հայ պատմագրության մեջ, «Հայագիտության հարցեր», 2014, № 2:
96. Մաթևոսյան Ռ., Հայոց թագավորության պետական կառուցվածքն ըստ Մատթեոս Ուռհայեցու վկայությունների, «ԼՀԳ», 1980, № 8:
97. Մաթևոսյան Ռ., Վասալա-սյուզերենական հարաբերությունները Բագրատունյաց Հայաստանում X-XI դդ., «ԼՀԳ», 1977, № 10:
98. Մաթևոսյան Ռ., «Տէրութին»-ը որպես վասալա-սյուզերենական հարաբերությունները արտացոլող տերմին (IX դար-X դարի առաջին երեսնամյակ), «ՊԲՀ», 1983, № 2-3:
99. Յուզբաշյան Կ., «Բագրատունյաց շրջանի» Հայաստանը՝ միջազգային իրավունքի տեսանկյունից, «ՊԲՀ», 1975, № 1:
100. Յուզբաշյան Կ., Ռոմանոս Լակապենոս կայսեր անհայտ հասցեատերը, «ԼՀԳ», 1974, № 1:
101. Վարդանյան Վ., Վասալորականի 910-930-ական թթ.պատմության շուրջը, «ՊԲՀ», 1980, № 1:
102. Տեր-Ղևոնդյան Ա., Հաղբատի հայերեն արձանագրությունը և Բագրատունի թագավորների տիտղոսները, «ԼՀԳ», 1979, № 1:
103. Տեր-Ղևոնդյան Ա., Մունաջջիմ-Բաշիի XI-XII դդ. անանուն աղբյուրը Դվինի և Գանձակի Շադդադյանների մասին, «Բանբեր Մատենադարանի», 1962, № 6:
104. Гунба М., Ередвская надпись о походе абхазского царя Константина в Эрети, "Материалы по археологии и искусству Абхазии", Сухуми, 1974.
105. Еремян С., Присоединение северо-западных областей Армении к Византии в XI веке, «ԼՀԳ», 1971, № 3:
106. Степаненко В., Политическая обстановка в Закавказье в первой половине XI в. (к атрибуции монет Кюрике куропалата), "Античная древность и средние века", 1975, вып. 11.
107. Canard M., Arminiya, "The Encyclopaedia of Islam", new edition, vol. I, A-B, Leiden, 1986.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Արման Եղիազարյան

ԱՇՈՏ ԵՐԿԱԹ.

ԹԱԳԱԿՈՐ ՀԱՅՈՑ

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Տեխ. սրբագրումը՝ Գ. Գրիգորյանի

Տպագրված է «Գևորգ-Հրայր» ՍՊԸ-ում:
ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի 6

Չափսը՝ 60x84 $\frac{1}{16}$: Տպ. մամուլ՝ 7,5:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1